# [illegible]

ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ.

Ի ՌՈՒՍ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅ

ՏՊԱԳՐԵԱԼ.

Ս. ՆԱԶԱՐԵԱՆ

1844

# ՁԵՌՆԱՐԿ

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

---

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՊՐՈՖ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՑԴԱՆԵԱՆ.

Թարգմանեալ

Ի Ռուսաց լեզուէ ՚ի Հայ

Աբէլ Նորընծայ վարդապետէ Մխիթարեանց

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

1844

Տպագրեալ

Ի հայրապետութեան Տեառն Ներսիսի սրբազնագոյն Կաթուղիկոսի ամ. Հայոց և Ասպետի

Հրամանաւ Լուսաւորչական Հայոց Սինհոդոսի Էջմիածնի.

# Բան

Ի հնուստ ասպարէզն ցանկալի ինձ էր յազգի մերում համաշխարհական պատմութիւն թագաւորութեանց աշխարհի մանաւանդ Եւրոպացւոց, որք ՚ի վաղ ժամանակաց հետէ ծաղկեալ լուսաւոր դարուք ըստ մեծի մասին միօրինակ դրութե տիրապետեալ ցաւուրս մեր։ Թէ և՛ գտան այս ՚ի հայումս եւ գտանին առ մեօք ոչ սակաւ մատեանք բանաստեղծականք ինչ՝ ինչ գրուածոց յեւրոպացի լեզուաց ՚ի մերս, օրինակ իմն՝ Միլտոնին անգղիացւոյ՝ ՚ի Դրախտըն կորուսեալ. Փենելոնին գաղղիացւոյ՝ յԱրկածն Տելեմաքայ որդւոյն Ոդեսեայ, եւ այլոց բազմաց՝ յայլեւայլ շարագրած թարգմանեալք ՚ի փութոյ անուն հայրենասիրաց ազգի Հարց Մխիթարեանց, սակայն եւ այսու ամե զճշգրիտ տեսութիւն պատմութեան ազգացն ՚ի հայ՝ Միայաք տեսանել, զնոցուն տէրութեանց փոփոխմունս, զկառավարութեանցն զեղանակ, զմիապետութեանց եւ զհասարակապետութեանցն զկարգ, որովք ընդհանուր Եւրոպիա դարուց ՚ի դարս շքեղացաւ եւ շքեղանայ ցայսօր ժամանակի։

Անդստին յախորժելոյ ՚ի քիմս՝ քաղցրութե լեզուի ռուսաց, յոր աշակերտեցայ յառին երախտեաց հոգեւոր տեառն Յովսեփայ վարդապետի բժշկեան եւ Սալետի, ՚ի ձեռս ածեալ զայս համառօտութիւն համաշխարհական պատմութեան, փոխեցի ՚ի մերս բարբառ ՚ի հրահանգ հայազգի համքակաց, որք ՚ի քաղաքական եւ ՚ի

նահանգական դպրոցս ուսանին զսոյն 'ի ռուս լեզուի։

Բնագիր թարգմանութեանս չունէր ինչ զթագաւորութեանց հայոց. որոց յայտ է թո՛ղ զհայկեանց նախապետութիւն, թագաւորք էին 'ի Պարոյրայ հայկազնոյ յամէ աշխարհի 3254. ցվերջ թագաւորութեան 'ի տանէ Ռուբինեանց ցամ տեառն 1394. և չգիտեմ առ ի՞նչ արդեօք լռէ զհայաստանեայց առ Ասորեստանեօք և Բաբելացւովքն, որում 'ի Հը-նումն և Երեմիաս վկայ հաւաստի զԱրարատեան թագաւորութենէն և զԱքանազեան գնդէն։ Օտարօրինակ թերութիւն 'ի լրումն մատենիս համարելով, առ 'ի ծանուցանել հայրենասիրաց զազգ մեր ժամանակակից ազգացն, պարտականութիւն յաւէտ ինձ վարկայ հաւաքել զինչ ինչ 'ի պատմութեանց զհատուածըս անցից թագաւորաց մերոց և զնոցին տէրութեանց 'ի Հայաստան, որչափ 'ի դէպ ըստ մարթելոյն. և ո՛ր ուրեք նոցայն և մերոցն միօրինակ ընթանային ժամանակագրութիւնք՝ առընթեր զմերն դրոշմեցի 'ի հմտութիւն՝ որոց հայրենի անխորժեն անցից։

Զոր ընդունել աղաչեմ ընթերցո՛ղ իբրև զառաջնապտուղ իմոյ թարգմանութեան յայս լեզու ներողացի. որ թէ ո՛չ քաղցրասցի՛ 'ի քիմս, ապա և մի՛ իմով արկցէ զանձամբ ատելիս։

Ե. Վ. Մ.

# ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒՄՆ

Պատմութիւն է՛ առաջադրութիւն անցից անցելոց յաշխարհի, վերաբերեալ ցառահառարայն ըստ մարդկութեան և ըստ մարդկաց. և բաժանի յընդհանուր և 'ի մասնաւոր։

Ընդհանուրն ճառէ զանցս անցելոց ընդ բոլոր ազգութեան. իսկ մասնաւորն՝ ընդ մի միայն ազգութեան. Որ բաժանի ըստ ժամանակաց 'ի Հին, 'ի Միջին և 'ի Նոր։

Հին կամ վաղեմին սկսեալ 'ի արարչագործութենէ աշխարհի 5508. մինչ ցՔ՛ս, ընդարձակի յանկումն արեւմտեան ազգութեան Հռովմայեցւոց. այսինքն մինչև 476. յետ ծնն, Քրիստոսի։

Միջին՝ յանկմանէ արեւմտեան ազգութեան Հռովմայեցւոց՝ ցգտանումն Ամերիկոյ 'ի 1492. ամ. յետ ծնն". Ք՛րի։

Նորն՝ 'ի բացմանէ Ամերիկոյ՝ ցմեր ժամանակ։

Այսպիսի բաժանումն պատմութեան հիմնաւորի 'ի կըլխաւորագոյն դարս, իսկ դարքն է անցք վսեմագոյնք և արժանայիշատակ մի աշխէ։

Ընդարձակութիւն ժամանակի պարունակեալ 'ի մէջ երկուց դարուց՝ կոչի Շրջան։

Շրջանն է անցք, որոց առնուն աշխէ չժամանակագրութեան երեւոյթ. ըստ այսմ ծննդեան Քրիստոսի՝ Շրջան մի քրիստոնէից։

Աշխարհագրութիւն և ժամանակագրութիւն են երկու հարկաւոր և օգտակար գիտութիւնք յաղագս պատմութեան. առաջինն որ, երկիրըն է ըմ հանդիպեալ որպէս և երկ անցք։

# Բաժանումն Համաշխարհական Պատմութեան 'ի Շրջանս.

Հին պատմութի սովոր է բաժանել 'ի չորս գլխաւորագոյն Շրջանս.

1. Շրջանն 'ի սկզբանէ աշխարհի ցժամանակ Կիւրոսի կամ ցհիմնաւորութի Թագաւորութե պարսից, 'ի 5508, ամ ց 550. նախքան Քրի.

2. 'Ի Կիւրոսէ ցաղեքսանդր մակեդոնացի, 'ի 550 ամ, ց330, ամ ցծն". Քրի.

3. 'Յ Աղեքսանդրէ մակեդոնացւոյ՝ ցՔրի, ց350, ամ ց1, ամ ծնն. Փրկչին.

4. 'Ի ծննդենէ Քրի՝ ցանկումն արեւմտեան տէրութե հռովմայեցւոց. 'ի 1, ամ տեառն՝ ցամն 476.

Միջին կամ պատմութի միջին դարու՝ յերիս Շրջանս.

1. Շրջանն 'ի կործանմանէ արեւմտեան տէրութե հռովմայեցւոց՝ ցԿարոլոս մեծ. 'ի 476, ամ ց771. (800) ամ տեառն.

2. 'Ի Կարոլոսէ մեծէ՝ ցժամանակ խաչակիր զօրաց, ց771. ամ՝ ցամն 1095. (1100).

3. 'Ի խաչակիր զօրաց՝ ցգտանումն ամերիկոյ. 'ի 1095, ամ ց1492. ամ տեառն.

Նորին կամ պատմութի երից վերջին դարուց՝ նմանապէս յերիս Շրջանս.

1. Շրջանն 'ի գտանելն ամերիկոյ ցԼուդովիկոս չորեքտասաներորդ (արքայ Գաղղիոյ) 'ի 1492. ամ ց1661, ամ Փրկչին.

2. 'Ի Լուդովիկէ չորեքտասաներորդէ՝ ցյեղափոխութի Գաղղիոյ 'ի 1661 ամ, ցամ տեառն 1798.

3. 'Ի յեղափոխութէ Գաղղիոյ՝ ցմեր ժամանակս.

## Աշխարհագրական կամ ըստ ազգաց բաժանումն հին պատմութեան ։

Աշխարհագրական հին պատմութիւնն մարթ է բաժանել 'ի հինգ բաժանմունս ։

1. Բաժանումն ։ Պատմութիւն վաղեմի ազգաց ասիացւոց և ափրիկեցւոց եղելոց ցժամանակ կիւրոսի, կամ ցհիմնաւորութիւն միապետութեան պարսից. ամք իբրև 550, նախ քան զՔրիստոս ։

2. Բաժանումն ։ Պատմութիւն պետութեան պարսից ցժամանակ տիրապետութեան նորա յաղեքսանդրէ մակեդոնացւոց. ամք իբրև 330. նախ քան զՔրիստոս ։

3. Բաժանումն ։ Պատմութիւն յունաստանի ցժամանակ աղեքսանդրի մակեդոնացւոյ ։

4. Բաժանումն ։ Պատմութիւն միապետութեան և թագաւորութեան մակեդոնացւոց՝ կանգնելոյ յաւերակաց նր. մինչև ցտիրապետութիւն նորին ընդ [illegible] ժամանակս՝ 'ի հռոմայեցւոց ։

5. Բաժանումն ։ Պատմութիւն հռոմայեցւոց 'ի հիմնաւորութենէ հռոմայ՝ ցանկումն արևմտեան տէրութեան [illegible]. 3753. ամէ յՔն, յամ տեառն 476 ։

*Պատմութիւնն է վկայ ժամանակաց, լոյս ճշմարտութեան, կեանք յիշատակաց և դաստիարակ բարոյականութեան։*

Կիկերոն

# ՀՐԱՀԱՆԳ
## ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒ

## ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ

### ա. Ազգ Ասիացւոց.

Պատմութիւն աշխարհաց ասիացւոց և ափրիկեցւոց մինչ ցծագա-նալ Կիւրոսի կամ ցհիմնադրութիւն թագաւորութեան պարսից ամս ՇԿ 560. նախ քան զՔ̃ս.

Յեցեալ յառաջացուածս ըստ Գրոց՝ գիտեմք անջնախ
հաւաստեալ և անտարակոյս՝ հաւաստեմք թէ Ա̃ծ քան զա̃մ
իւրով ամենազօր բանիւ 'ի վեց աւուրս հաս-
տեաց յոչընչէ զա̃մ արարածս, և հաւակ արար 5508.
'ի հողոյ երկրի զմարդն առաջին՝ զԱդամ և 'ի
կողէ նր̃ զկինն առաջին՝ զԵւայ. օրհնեալ ըզ-
զուգակիցսն, բնակեցոյց զն̃ա 'ի պաղաբեր և 'ի
գեղեցիկ երկրի յերկրային դրախտի ընդ մէջ
Եփրատ և Տիգրիս գետոց. երանելի՛ք էին Ա-
դամ և Եւայ. բայց մեղք նոցա՝ պատուիրանա-
զանցութիւն զհրամանաւ Ա̃յ զրկեաց զնոսա
յերջանիկ կեցութէ̃ անտի.

Մարդիկ բազմացան և վաղվաղակի մոռա- 3246.
ցեալ զԱ̃ծ, ընկան 'ի մեղս և 'ի չարագործու-

թիւն. բայց վասն երջանկութեն մարդոյ, դե՛ռ թագաւորէր յերկրի անմահն առաքինութիւն. բազումք ծառայէին Այ ճշմարտի և օրհնէին 'ի նմանէ բազմաժամանակեայ աւուրբք. Յայսմ ժամանակի, երիցագոյնքն դերդաստանաց նահապետք վարէին իբրև թագաւորք և իշխանութի նց էր 'ի նմանութիւն միապետական տէրութե. պատարագք Այ բերեալ լինէին 'ի պտղոց երկրի և 'ի կենդանեաց։ Արաժշտութիք, երկաթագործութի և ինչ՝ ինչ հմտութիք էին արդէն գտեալք։

Հուսկ ուրեմն՝ մարդիկ անկան 'ի մեծագոյն անօրէնութի. Ած չտեսեալ զուղղութի նց՝ բնաջինջ՝ կորոյս զամենեսին համաշխարհական ջրհեղեղաւ. միայն արդարն Նոյ ընտանեօքն հանդերձ անկորուստ յԱյ պահեցաւ 'ի հասարակացն կորստենէ։

Յընտանեաց Նոյի վերստին բազմացան մարդիկ. 'ի պատճառս աշխարհակալութե, զոր արարին՝ ցրուեաց զնս Ած 'ի զանազան կողմս։ Հուսկ ապա իբր 2000, ամօք յառաջ քան զՔն, մարդիկ սկսան միանալ 'ի քաղաքական հասարակութիս. յայնժամ երևեցան յաշխարհի միապետութիք, յորոց հնագոյնքն համարին Ասորեստանեայց և Բաբելացւոց։

## Ա. Միապետութի Ասորեստանեայց։

2000. Հիմնադրութի միապետութե Ասորեստա-
նեայց, որ գտանէր յափունս Տիգրիսայ՝ ընծա-
յի Ասուրայ. յորոյ 'ի ժառանգորդաց Նինոս
1900. հնազանդեցուցանէ զմիապետութիս բաբելաց-
ւոց, պարսից և մարաց։ Զամուսնոյն Նինո-

սի զՇամիրամայ պատմի թէ՝ նա երեւելի գոել 'ի բազում գործս պատերազմականս, մեծա-յելուց զարդարեաց զԲաբելոն, և արար զայն մայրաքաղաք միապետութեան Ասորեստանեայց. բայց այս բանք պատմագրաց յունաց զՇամիրամայ՝ թուին առաւելապատում և չափազանց:
'Ի թագաւորութեան Սարդանապաղայ 'ի մեծի 900.
վտանգի էր միապետութիւն Ասորեստանեայց. Արբակէս կողմնակալն Մարաց ապստամբեցաւ, և Սարդանապաղոս, քանզի ոչ կարէր ըղդէմ ունել՝ այրեաց զինքն ամ գանձուք իւրովք: Միապետութիւն Ասորեստանեայց կործա- 550.
նեցաւ. և յաւերակաց նորա ծագեցան երեք նոր միապետութիւնք. նոր միապետութիւն Ասորեստանեայց, նոր միապետութիւն Բաբելացւոց և նոր միապետութիւն Մարաց:

Նոր միապետութիւն Ասորեստանեայց հզօրագոյն հանդիսացաւ յՆինուէ. բայց յառաւելաչափ շուայտութենէ և յապականութենէ բնաւորութեանցն անզօրացեալ՝ անկաւ ընդ իշխանութե Կիւրոսի Արքայի պարսից:

## 2. Միապետութիւն Բաբելացւոց:

Նեբրովթ (որ և Բէլ) դնէ զհիմն միապե- 2000.
տութե յափունս Եփրատայ, որ յաւուրս Նինոսի և Շամիրամայ՝ մի էր ընդ միապետութե Ասորեստանեայց. այլ զկնի Սարդանապաղայ ե- 600.
ղև անկախ և կոչեցաւ նոր միապետութիւն Բաբելոնի, հզօրագոյն երեւեալ առ Նաբուգոդոնոսորաւ:

Յայնմ ժամանակի ծաղկեալ էին 'ի նմա գիտութիւնք և յաւէտ աստեղաբաշխութիւն,

ճարտարապետութիւն, գործարանք, արհեստակերտուածք և վաճառականութի. բայց ապականութիւն բարուց Թագաւորեալ 'ի միապետութեանս, բարկացոյց զԱստուած 'ի վերայ նորա. և ըստ այսմիկ միապետութիւն բաբելա-
530. ցւոց 'ի ժամանակս Բաղդասարայ երեւի նուաճեցեալ 'ի Կիւրոսէ:

### 3. Միապետութիւն Հայոց.

'ի Հայկայ՝ ցՊարոյր ա. արքայ հայոց. յամէ Աշ. 2107. (1359) ց748. ցքա.

2107. Միապետութիւն հայոց սկսանի 'ի Հայկայ որդւոյ Թորգոմայ 'ի զարմէ Նոյի. որոյ յետ յաշտարակաշինութեան անդ լեզուացն այլայլութեանց, հատուածեալ մէշխանութենէն բելայ, գայ 'ի հայաստան հանդերձ գերդաստանօք և ծառայիւք. սերեալ անդանօր յազգ մեծ, սպանանեալ բելայ՝ միապետէ իւրոցն և որոց յառաջագոյն գաղթեալ անդէն՝ յազգատոհմէն Յաբեթի. ուստի՝ և աշխարհն յանուն միապետին՝ կոչի Հայաստան:
2026. Յաջորդք Հայկայ ցԹագաւորել Նինուասայ որդւոյ Նինոսի արքայի ասորեստանեայց յընթացս իբր 301. ամացս, քաջութեամբ բազկաց պայազատեալ զհայս Նահապետ անուամբ, ընդարձակեցին զաշխարհ իշխանութեան իւրեանց և ընդ քաղաքական շինուածովք յաւելեալ զարքունիս նահապետանիստս, զգեօղս և զշէնս և զդաստակերտս անթիւս յիւրեանց անուն յորջորջեալ այր իւրաքանչիւր. որովք և սկիզբն եդին քաղաքականութեան հայոց և կրթութե-

բովանդակ տէրութեան իւրեանց 'ի զինուորա-կան կարգ և 'ի հանդերձանս պատերազմի։

Այսպէս յամի աշխարհի 1725․ Նինուաս որ-դի Նինոսի և Շամիրամայ նուաճեալ զհա-յաստանեայս ընդ հարկաւ։ Յետ այսց անցից ամի՝ ոչ ուք ամբառնայ յաթոռ միապետութեան հայոց 'ի տանէ Հայկայ․ այլ՝ այլք ոմանք յա-ռաջագոյն սերեալք 'ի զարմէ նորին բռնացեալք յընթացս ելբ 914․ ամաց, տիրէին հայոց, ոմանք զինուորական քաջամանութեամբք ան՞ 'ի թըշ-նամիսն արկանելով, և այլք տկարք ոտնկոխ 'ի նոցունց զաշխարհն առնելով՝ ցթագաւորել Պա-րոյրայ 'ի վերայ հայոց։

Ծանօթութիւն։

[illegible]

Սարդա [illegible] [illegible] (եղաւ) [illegible]

[illegible] ։

[illegible]

## 4. Անպետութիւն Մարաց.

Մասն Հայոց պարունակեալ ընդ մէջ Տիգ-
րիս և Հնդոս գետոց՝ կոչէր Մարք. Նինոս տի-
րեաց այսմ նահանգի, որ գտանէր ընդ իշխա-
նութեամբ Ասորւոց մինչև 'ի ժամանակս Ար-
բակեայ. որում պատճառ լեալ անկախութեան
Մարաց զԱսորեստանեայց, եդ զմիապետութի՛
նոցա. բայց ո՛չ անագան չափազանց շուայտութի՛ն
ասխական այնպէս անզօրացոյց զայս միապետու-
թիւն, մինչև Կիւրոսի միով յաղթութեամբ 'ի
533. վերայ Աժդահակայ՝ հնազանդեցուցանել զայն
իւրում իշխանութեան.

## 5. Տէրութիւնք 'ի փոքր Ասիա.

'Ի մէջ տէրութեանց փոքուն Ասիոյ երևելի էին Տրովացւոց. փռիւգացւոց և Լիւդացւոց. Պատմութիւն այսոցիկ թագաւորութեանց լցեալ է իբր 'ի բազում առակախօսութեամբ. Թագաւորութի՛ Տրովացւոց կործանի 'ի յունաց յամի աշխարհի 1185. մինչև ց.ք̄ա. տէրութիւն փռիւգացւոց անկաւ ընդ իշխանութե՛ Լիւդացւոց. իսկ զԼիւդացւոյն նուաճեաց Կիւրոս ընդ համօրէն փոքուն Ասիոյ.

[illegible]

## 6. Փիւնիկեցիք.

Փիւնիկեցիք յանդիմանեն մեզ զգեղեցիկ իմն տեսարան ՚ի պատմութեան. ճանաչին նոքա ազգ խաղաղական, աշխատասէր, պարապեա՛լ վաճառականութե՛, որովք ամ ազգաց մատակարարէին զարտադրութի գործարանաց իւրեանց և զարհեստակերտուածոց. հաղորդեալ նոցա զօգտաշահ գիւտս՝ տարածէին ընդ ամ կողմանս զլիութի, զառատութի և զլուսաւորութիւն.

Փիւնիկէ է՛ր փոքրագոյն մասն Ասիոյ ՚ի սփիւռս արևելեան ափանց Միջերկրական ծովուն 174. մղոնաչափ երկայնութբ (՚ի Տիւրոսէ ց Արատ) և 35. մղոնաչափ լայնութբ. այս երկիր ո՛չ էր այնքան պտղաւէտ, ո՛րքան բնակիչք նորին գոլով գործունեայք և վաստակաւորք, ձեռն՛ արկին ՚ի նաւարկութի, ընդարձակեցին զայն ընդ ամ ծովս, յայտնիս յայնմ ժամանակի: Ովկեանին ճանապարհորդութիւն նոցա շուրջ զԱփրիկէիւ կատարեալ յընթացս երից ամաց, 600.]
զանուն նց անմոռաց արար ՚ի պատմութեան. վաճառականութի նոցա էր ընդարձակագոյն, զոր առնէին յԱփրիկէ և յամենայն կողմանս Միջերկրական ծովուն ՚ի Սպանիա, ՚ի Բրիտանիա կամ յայժմեան Անգղիա, ՚ի Պրուսիա և յամ արևելս. ամ ուրեք հաստատեալ զբնակութի, առաւել ևս ընդարձակեցին զվաճառականութի. գործարանք նց և արհեստակերտուածք էին ՚ի ծաղկեալ վիճակի. բաց յայսցանէ գտին նոքա և զծիրանի ներկս, զապակի, զգրաւոր տառս, զթուաբանութի. ՚ի գործ եդեալ զչափ, զկշիռ և զդրամս.

Թէպէտ փիւնիկեցիք բազում ջանիւք աշ-

խառէին ազատիլ յաշխարհակալաց. բայց և այն-
պէս ոչ կարացին զերծանիլ ՚ի Տիբերոսէ, զոր
հնազանդեցոյց իւրում իշխանութեան։ Այսպէս
լինէին սոքա ընդ իշխանութեամբ պարսից, մինչև ՚ի
ժամանակս տէրութեան մակեդոնացւոց։ Յետ ա-
ւերման Տիւրոսի յԱղեքսանդրէ մակեդոնաց-
ւոյ, բոլոր փիւնիկեցի վաճառականութիւն ան-
ցանէ յԱղեքսանդրիա, յորմէ հետէ և սակա-
սակաւ անկումն նոցա։

՚Ի փիւնիկէ էր կառավարութիւն միապետա-
կան. այլ իշխանութիւն թագաւորաց նոյն սահմա-
նափակ, ըստ որոյ մարթ էր զփիւնիկէ անուա-
նել հասարակապետութիւն. առաջին քաղաք էր
՚ի նմա Սիդոն. իսկ ՚ի վերջին ժամանակի Տիւ-
րոս գլխաւոր այլ ամ քաղաքաց և նահանգաց։

## Դ. Եբրայեցիք.

Պատմութիւն եբրայեցւոց ազգի է՛ առաւել
օրբազան՝ քան աշխարհական կամ քաղաքական.
քանզի՝ յամ անցս պատահեալս յայսմ ազգի,
տեսանեմք զառանձին գործս նախախնամութեան
Այ ՚ի սոսա։

Մինչ ընդարձակեալ էր յերկրի կռապաշ-
1521 տութիւն, Աբրահամ միջամուտ եղև ՚ի Միջա-
գետս, որոյ ընտանիք պահէին զհաւատ ՚ի միԱծ
ճշմարիտ. չուեաց ՚ի գաւառէ ասորի ՚ի Քանան
ըստ հրամանի Այ։ Յակոբ թոռն Աբրահամու
և որդի իսահակայ բովանդակ գերդաստանաւ
դնաց յեգիպտոս. ուր որդի նր Յովսէփ Ած-
ային իմն տեսչութեամբ ՚ի ծառայութենէ վիճակէ և
՚ի բանտէ բարձրացաւ յառաջին աստիճան պա-
տուոյ և թագաւորական արժանաւորութեանց։

յընթացս 250 ․ ամաց եբրայեցիք բնակէին յԵ-
գիպտոս յերջանկութեան և յանդորրու․ բայց
հուսկ՝ առ յոյժ բազմութե՛ նց թագաւորք ե-
գիպտոսի սկիզբն առնեն խստիւ նեղել զն՟ս․
յայնժամ եբրայեցիք պաշտպանութբ՟ն Ա՟յ և
առաջնորդութբ՟ նախամարգարէին Մովսէսի
ածատես առն ելեալ յեգիպտոսէ անցին հրա- 1461 ․
շիւք ընդ ծովն կարմիր և մտին յԱրաբիա․ ուր
հաճեցաւ Ա՟ծ տալ նոցա զպատգամս ՚ի ձեռն
Մովսիսի․ բայց առ անհաւատութե նց խոստ-
մանցն Ա՟յ դատապարտեցան ՚ի թափառումն յա-
նապատս Արաբիոյ զամս 40․ ՚ի վերջոյ եբրայե-
ցիք մտանեն յերկիրն աւետեաց՝ առ յԱ՟յ նշա-
նակեալ նոցա ՚ի Պաղեստին։ Դատաւորք կամ
ծերք, որ յԱ՟յ ընտրէին՝ կառավարէին զնոսա․
այլ ՚ի վերջոյ՝ հաստատեցին ինքեանց զմիապե-
տական կառավարութի, յորում ժամանակի
Սաւուղ եղաւ ՚ի թագաւորութի նց, որ եկաց 1119 ․
հակառակ հրամանին Ա՟յ․ ընդ որոյ և Սամուէլ
օծանէ զԴաւիթ ՚ի թագաւոր՝ ըստ ազդմանն Ա՟յ։ 1097 ․
Բաջ և բարեպաշտն Դաւիթ ամբարձ զմի-
ապետութի եբրայեցւոց ՚ի գերագոյն աստի-
ճան զօրութե, փառաց և բարօրութե․ որոյ որ
դի Սողոմոն շինէ յերուսաղէմ զտաճարն Ա՟յ․ 1030 ․
տակայն գթեալ ՚ի կամացն նորա անկաւ ՚ի կռա-
պաշտութի և վս այսպիսի խոտորման նորա, մի-
ապետութի եբրայեցւոց զկնի մահուան նորա
բաժանեցաւ յերկուս թագաւորութիս, յուդայ
և իսրայելի։ Սոքա ը միմեանս պատերազմեալք
ձգեցին ՚ի վր զ Ա՟ծային արդար բարկութի։ 137 ․
Թագաւորութին իսրայելի նուաճեցաւ յասո- 609 ․
րեստանեայց, իսկ յուդային՝ ՚ի բաբելացւոց․
ազգն յուդայ գերի վարեցաւ ՚ի բաբելոն, յո-
րում եկաց զամս 70․ մինչև ցժամանակ Կիւրոսի։

ԳՐԱԴԱՐԱՆ
524

## Ը. Թագաւորութիւն Հայոց.

'Ի հիմնարկութենէ թագաւորութեան հայոց 'ի պարթեւաց՝ ցթագաւորութիւն Արշակունեաց՝ ցանկարգն ա. 3748. ամ աշխարհի (569) ամն 169. նախ քան զՔն։

748. Պարոյր որդի 'ի Հայկազանց այնինչ 'ի ձեռս
ածէ զհայրենի իշխանութիւն 'ի վերայ հայոց,
746. յարեալ միշխանն մարաց 'ի Վարբակես յապստամբեալն ընդդէմ արքային Ասորաց Սարդանապաղայ, առին զՆինուէ 'ի ձեռաց նորա. և առ 'ի չկարտաւորիլ Վարբակեայ մերումն Պարոյր՝ թագաւորեցուցանէ զնա հայոց յամի Տի. 743. նախ քան զՔն։ Այս պերճացեալ թագաւորական շքով՝ թողու ժառանգ աթոռոյ՝ Հրաչեայ անուն։

'Ի թագաւորութեան Տիգրանայ առաջնոյ յերուանդեայ, որ արժանի է յիշատակի արդարակորով և լայնախորհուրդ առաքինութեամբ և զինուորական քաջամանութեամբք, թագաւորութիւն հայոց որ անզօր իմն էր յառաջագոյն՝ եղև հզօր 'ի վերայ աշխարհի զայնու ժամանակաւ. յորոյ ահէ սարսեալ յունաց, երկար ժամանակ լինէին հարկատու, հնազանդեալք իշխանութեան նորա. Թագաւորութիւն սորա մեծապէս պանծացաւ ըստ ամ վայելչութեանց 'ի քաղաքական կառավարութիւնս, 'ի հարստութիւնս և 'ի զինուորական կարգս պատերազմի, մինչև լինել երևելի և ահեղ յոյժ ամ ազգաց աշխարհակալաց։

553. Քաջաբազուկն այս Տիգրան դաշնադրեալ ընդ Կիւրոսի արքայի և բաբելոնացւոց՝ եղև նիզակակից նոցին, և 'ի դիմի հարեալ 'ի մարտ ընդ Աժդահակայ մարաց արքայի, սպան զնա քա-

բաշխարհ, գերեալ յազգէ Նորա որդիս իբրև տասն հազար, գաղթէ զնոսա առ ափն Երասխայ հանդերձ գերդաստանաւ նորին իսկ Աժդահակայ:

Յաղթող թագաւորութեան ամբարձեալ Վահագնի որդւոյ Տիգրանայ ըստ օրինակի հօրն միապետեալ ազգին, համբաւ քաջարութեան հռչակէ յաշխարհ ամ, մինչև բազմաց կարդալ զնա Հերակլէս կամ Հերքիւլէս հայոց:

Ի ժառանգորդաց Տիգրանայ ա, թագաւորէ Վահէ՝ զօրացաւ ահեղ իշխանութբ և պատերազմեալ ը այնս, որք հարստահարել կամէին զկողմանս ինչ իւրոյ տէրութեան՝ վանէ գլխովին. բայց յերկրորդում պատերազմի յաղթական հանդիսացեալ ընդդէմ ահեղ յարձակման աշխարհակալին Աղէքսանդրի, թէև առնել արար զբազում հարուածս, բայց ՚ի վերջոյ անկանի ՚ի մարտին. աւանդեալ նովին զտէրութի իւր՝ որով և բարձումն թագաւորութեն հայկազանց: 351.

Ծանօթութիւն:

Ի Հայաստան տիրէր վաղուցին կռապաշտութիւն ցայս միջոցի. հայք ածացուցանէին զՎահագն. տեսեալ զդիւցազնութիւն նորին՝ կարդան զնա Հերքիւլէս Հայոց, այնպէս համբաւ քաջութեան Աքիլլեայ յաշխր հռչակեալ՝ քաղէր զարմանս ամենեցուն. նմա բագին կանգնեն հայք և վերջ համարեալ ած ուժոյ և քաջութե. հայք տան նմա պաշտօն և կոչեն Վահէվահեան. և զտաճար նր հռչակաւոր՝ կառուցանեն ՚ի Տարօն և յԱշտիշատ. տես Մ. Խորենացի:

Յետ մահուան Վահէայ յԱղէքսանդրէ Մեծէ, Հայաստան անկանի ընդ մակեդոնական իշխանութեամբ. և կուսակալք առաքեալ ՚ի նմանէ՝ կառավարէին զհայաստան. երբեմն և ՚ի Սելևկեացւոց անտի, որոց յայնու ժամանակաւ զօրացեալ տիրէին Ասորւոց և Մարաց. երբեմն և յերևելեացն հայոց,

# Է. ԱԶԳ ԱՓՐԻԿԵՑՒՈՑ։

## Ա. Եգիպտացիք։

Եգիպտոս է փոքր, բայց յոյժ պտղաբեր մասն Ափրիկոյ յարևելս հիւսիսոյ. սոյն պտղաբերութի առատանայ ՚ի տարեկան հոսմանց Նեղոսի. ՚ի հնումն էին աստանօր տէրութիւնք Թեբայի և Մեմփիսայ. բայց պատմութի նց հիմնեալ է իբր ՚ի բազումս յառասպելաբանութի. ուստի յայտնի են անուանք ոմանց թագաւորց Թեբայի, յորոց Ոսիմանդոս երևելի՛ է բարեպաշտութբ, արդարադատութբ, իմաստութբ օրինաց և սիրով առ գիտութիւնս։

2000. Հիմնադիր թագաւորութե Մեմփիսայ՝ համարի Մենէս. յորոյ և ՚ի յաջորդացն արժան
է յիշատակի Մերիս, որոյ ըստ հրամանի բացաւ յեգիպտոս ընդարձակ լճակ՝ կոչեցեալ Մերիսեան, մի հաւասարեցուցանելոյ զջուրս Նեղոսի ՚ի ժամանակի հոսման նորա։ Սեսոստր էր
1500. մեծ աշխարհակալ. իսկ միւս թագաւորք պանծացուցանեն զեգիպտոս շինութբ հոյակապ տա

ճարաց [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] ՚ի [illegible] [illegible], և [illegible] աշխարհին։
[illegible] ժամանակաւ [illegible] [illegible]
[illegible] [illegible] 176. ամաց [illegible] [illegible] [illegible] [illegible]
և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible]
՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible],
[illegible] [illegible] [illegible] ՚ի Մակեդոնացի [illegible] ՚ի [illegible] [illegible]
[illegible] [illegible] ՚ի [illegible]՝ [illegible] Արշակունեաց։

ճարտ, մեծաշէն բրգանց և լաբերինթի.

Մինչև 'ի ժամանակս Պսամետիքեայ յաճախ բաժանէր եգիպտոս 'ի բազում տէրութիւնս. 670.
'ի սոյն ժամանակէ կացուցանէր զմի միապետութի, որոյ գլխաւոր քաղաք էր Մեմփիս.
Եգիպտացիք որ ոչ լինէին դաշնակից օտարաց՝
եղեն յունաց. որդի Պսամետիքեայ Նեքաւով 620.
ընդ արձակէ զնաւագնացութի և զվաճառականութի եգիպտացւոցորոց, ըստ ցանկութե փիւ-
նիկեցիք ձեռնարկ լինին 'ի ծովային ճանապար- 560.
հորդութի՝ շուրջ զԱփրիկէիւ: 'Ի թագաւորաց եգիպտացւոց արժանի է՝ յիշատակի Ամասիս գերապանծն առաքինավար գործովք և քա-
ջահմուռն. բայց փառք եգիպտոսի կործանէր 525.
արդէն: Յաւուրս Պսամենիտեայ նուաճեաց զայն Կամբիւսոս արքայն պարսից.

Ծանօթութի զԵգիպտոսէ. Եգիպտոս էր 'ի հնումն աշխարհ բարեկեց և լուսաւոր, ուր 'ի յետին ժամանակի գիտութիւնք և արհեստք առաջին զեծ կատարելութիւն, մինչ զայս աշխարհ իրաւամբք կոչել բազմաց դայեակ լուսաւորութե. յորոյ յոյնք ուսան զիմութի, երկրաչափութի, աստեղաբաշխութիւն և զայլ մաթեմաթիքական գիտութիւնս, զորս ըմբռնէին եգիպտացիք. ընդ որս և բուսաբանելըն տիակոն. հայական բրգունս կանգնեալս 'ի նոցանէ՝ վկայեն զկատարելութենէ նոցա յարհեստս մեքենայութե. օրէնք նոցա վկայք զերարբերութեան լուսաւորութենէ նոցա 'ի գիտութիւն, որ կայանային 'ի նշանագիրս, որոց և մեկնութի՝ կորեաց վասն ծանօթ:

Հասարակ եգիպտացւոց՝ էր կառավարութի, չէ պաշտէին զարեգակն և զլուսին, զորս կոչէին Օսիրիս և Իսիս. Գերագոյն Ած նոց էր Ամոն ցուլ սուրբն. բայց յայսցանէ տարէշր, նորա գէտ և բազմութի կենդանեաց պաշտէին

## 2. Կարթագինեցիք։

Դիդոնայ քոյր Թագաւորին Տիւրոսի Պիգմաղիոնի հեռացեալ յԱփրիկէ յափունս միջերկրական ծովուն (յայժմեան Թունիս նահանգի) հիմնէ զԿարթագինէ իբր ութն հարիւր ամօք յառաջ քան զՔն․ կարթագինեցիք ըստ օրինակի փիւնիկեցւոց ոչ անագան ձեռնարկեալ ՚ի ծովագնացութիւն՝ ՚ի կապակցութիւն մտին ընդ հեռաւոր կողմանս աշխարհի և հաստատեցին զբնակութի իւրեանց ՚ի կղզիս միջերկրական ծովուն և ՚ի Սպանիա։ Հարստութի նոցա առաւել ևս ընդարձակեցաւ սոյնօրինակ ձեռնարկութբ, որովք մարթ էր գուշակել, զի սոյն քաղաք եղիցի հզօր և երևելի քան զՏիւրոս։ Սակայն հակամիտութի նոցա ՚ի հարստանալ՝ եղև իւրեանց վնասակար կերպ առ աշխարհակալութի․ քանզի կամեցեալ նոցա տիրել սիկիլիացւոց, մղեաց զնս ՚ի պատերազմ ընդ Յոյնս, և հուսկ ընդ հռոմայեցիս։ Ուստի՝ երևելի են ՚ի պատմութն նոցա երեք պատերազմունք կոչեցեալ Պունիկեան (1) վերջացեալք աւերմամբ Կարթագինեայ և անկմամբ բովանդակ հասարակապետութն նոցա։

Կարթագինեցիք ՚ի հաստատութն կառավարութն իւրեանց հետևէին փիւնիկեցւոց, քանզի իշխանութի Թագաւորաց նոցա որ կոչէին Սոփէտք՝ էր կախեալ ՚ի ծերակուտէն զժողովրդոց․ ըստ որոյ և միապետութի նոցա կոչեցաւ հասարակապետութի․ գլխաւոր հակ-

՚ի նոցանէ [illegible]։

(1.) Պունիկեան պատերազմն տե՛ս ասոր ՚ի պատմութեան հռոմայեցւոց։

միութիւն նոցա 'ի վաճառականութիւն, որ էր առաջին առարկայ առ նոսա, չեթող զնոսա յառաջանալ 'ի գիտութիւնս. պատերազմական զօրութիւն նոցա էր ծովային և ցամաքային. առաջինն էր ինքեանց բնական, իսկ երկրորդն՝ առեալ իբր 'ի բազում յօտար ազգաց:

Հաւատ կարթագինեցւոց էր կռապաշտութիւն, որոց գլխաւոր ա՟ծ՝ էր Մողոք, սմա 'ի պատարագ բերէին զմարդ, նաև երբեմն զսեպհական զաւակունս իւրեանց:

## ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՐԿՐՈՐԴ.

### Թագաւորութիւն Պարսից:

'Ի 550. ամ՟ ց330. նախ ք՟ն զք՟ս:

Կիւրոս շառաւիղ յազնուական տոհմէ պար- 550.
սից Աքեմենիդեան, կառավար և առաջնորդ
լեալ նոցին՝ աշխարհակալեաց յարևելս. այնինչ պարսիկք էին ընդ իշխանութեամբ մարաց, ցանկացեալ սորա 'ի ձեռս ածել զանկախութիւն պարսից, հակառակ զէնս ընդդէմ հաւուն մարաց՝ Աժդահակայ. ստացեալ զյաղթութիւն, զա՟մ տէրութիւն նորա հնազանդէ իւրում իշխանութեան: Լիւդիան, Բաբելոն, բովանդակ փոքր Ասիա և այլ նահանգք հարկատուք լինին սմա: Տէրութիւն պարսից տարածեցաւ վաղվաղակի յԱրշիպեղագոսէն ցՀնդիկս. և 'ի կարմիր ծովուց՝ ցհաւային Ովկիանոս:

Կամբիւսոս որդի և ժառանգ Կիւրոսի կցէ 529— 22.
զեգիպտոս իւրում միապետութեան: Դարեհ 522—486.
վշտասպ կամեցեալ մեծացուցանել զայն աշ-

խարհակալութեամբ Ափրիկիոյ և Հնդկաց՝ չէ յաջողեցաւ նմա. վասն զի յայսմ ժամանակի ծագեցաւ ընդ մէջ պարսից և յունաց շփոթ պատերազմի, որոյ պատճառ եղև այն, զի պարսիկք կամէին հնազանդեցուցանել զՅոյնս փոքուն Ասիոյ: Ճառեալ զանցեալ պատերազմացս 'ի պատմութեան ազգի յունաց (1.) աստնշանակեսցուք միայն, թէ այսոքիկ պատերազմունք յերկարաձգեալ ցժամանակս Դարեհի վշտասպայ և ցթագաւորութիւն որդւոյ նորա Քսերք-
486–65. սեսի, շփոթեցին զմիապետութիւն պարսից, որ մերձ էր յանկանել չափազանց շռայլութեամբ ախտացւոց և տգիտութեամբ բարուց թագաւորաց իւրոց և հպատակաց նոցին: Աղէք-
336–33. սանդր մակեդոնացի հնազանդեցուցանէ զայն միապետութիւն իւրում իշխանութեան՝ յաւուրս Դարեհի կոդոմանայ:

Տէրութիւն պարսից բաժանեալ էր 'ի 20. սատրապս (նախարարութիւնս) կամ 'ի նահանգս. և վասն հաղորդակցութեան 'ի մէջ նոցա կարգեալ էին փոստ (նամակատունք): Միապետն պարսից իշխան էր ընչից և կենաց բովանդակ հպատակաց իւրոց, զոր կոչէին Արքայ արքայից. նմա տային զպատիւ աստուածոց և ամ հպատակք առանց բացառութեան կոչէին ստրուկք նորա:

Հաւատ պարսից կարգեալ 'ի լուսաւորական Զրադաշտայ, բաղկանայր յայն՝ յորմէ ճանաչէին նոքա զերկուս սկզբունս զբարի և զչար զառաջինն Որմիզդ, և զերկրորդն՝ Արհմն. սրբազան մատեանն, յորում մեկնեալ էր պատուիրանք հաւատոց նոցա՝ կոչի Զենտաւեստա. իսկ քուրմք նոցա՝ մոգք:

(1.) 'Ի բաժանումն երրորդ:

# Արշակունեան Թագաւորութիւն Հայոց.

՚Ի հիմնարկութենէ Արշակունեան թագաւորութեան ՚ի Վա-ղարշակայ առաջնոյ՝ ցԱրտաշէս վերջնոյ թագաւոր. ՚ի 189 ամ Նք, ցԴ. ամ ՔՆ:

Արշակ երկրորդ ազգաւ պարթեւ զօրացեալ 189.
հզօր քաջարութեամբք՝ յարձակի ՚ի Հայաստան.
յորում վանեալ զսելեւկիացի իշխանութիւն,
թագաւորեցուցանէ Հայոց զեղբայրն իւր զՎա-
ղարշակ արշակունի:
Արժանայիշատակ այս Վաղարշակ վերականգ- 149.
նեալ զանկեալ միապետութիւն Հայոց, զանուն
յորջորջէ նմին թագաւորութե Արշակունեաց.
կազմեալ զպատրաստութիւն զօրաց, յետս դը-
րաւէ կրկին զսահմ գաւառս աշխարհին Հայոց ՚ի
սահմանամերձ ազգաց, որոց յառաջագոյն բը-
նութեամբ տիրեալն էին. սահմանէ նախարա- 141.
րութիւնս ըստ գաւառաց գաւառաց ՚ի քաղա-
քական եւ ՚ի զինուորական իրողութիւնս մանա-
ւանդ մարքունիս իւր իսկ տայ զսահմ շքեղու-
թիւնս կարգաց ըստ հռովմայեցւոցն օրինակի.
ցանկացեալ սորա գիտել զանցս նախնի միապե-
տաց աշխարհին Հայոց, հանէ ՚ի ձեռն Մարի-
բասայ ուրումն կատինայ ասորւոյ զպատմութի
Հայկազանց ՚ի դիւանատանէ վաղեմի թագաւո-
րացն ՚ի Նինուէ որ ընդ իշխանութեամբ եղ-
բօր իւրոյ Արշակայ:
Տէրութի Հայոց անպարտելի գտանէր յա- 114.
ւուրս Արտաշիսի որդւոյ նորին թագաւորա-
կան քաջամասնութեամբ եւ բազմութեամբ ան-
թիւ զօրաց. եւ եղեւ այնուհետեւ նախագահքան

տէրութիւն պարսից՝ որ ցայնվայր երկրորդ էր
812. նմին։ Սորա կամեցեալ տիեզերակալել, յարու-
ցանէ զօրս յարեւելից հիւսիսոյ. առնու զցամա-
քականն Ասիոյ. ծովագնացն լեալ՝ յաղթէ Փիւրա-
կիոյ և Ասլադայ և լակեդեմոնացւոց (բնակ-
չացն մօռայու) յորոց առարէ զդիւցապատկերս
ածոցն յունաց, համբաւ յաղթութեանն ի ամե-
նայն ազգս հռչակեալ։

89. Իսկ յաւուրս որդւոյ սորին Տիգրանայ՝ ամ-
բարձաւ թագաւորութիւն հայոց յաթոռ փառաց
և անընկճելի կարողութե. իբր զի՛նա ինքն Տիգ-
րան քաջասաստ գոլով թշնամեաց՝ խորտակեաց
զպարծանսն յունաց. որոց լուեալ զմահ Ար-
տաշխի՝ ասպատակ սփռեալ էին յաշխարհ հա-
յաստանեայց. տիրէ Պոնտոսի և միջերկրեայց
ի փոքուն Ասիա, զորմէ հռովմայեցի պատմիչք
արձանագրութեանն՝ "բազմութիւնք թագաւորաց
գերեալք ծառայել նմին և ի սպասու կալ ի
85. հրապարակախօսելն" Յաղթութիւնք մեծապետիս
ի վերայ ասորեստանեայց, և սելեւկիացւոց,
և քաջագործութիւնք ի վերայ զօրագլխապե-
տացն հռովմայեցւոց առ տիգրանակերտ քաղա-
քաւ և առ սահմանաւ Կապադովկիոյ, և ս և
պաշարումն զօրացն նորա զերուսաղէմաւ, զընդ-
հանուր հրէաստանաւ և զփիւնիկէիւ ցիկոնիոն
հանդերձ գերելովք և բազում աւարաւ ի
ձեռն մեծ զօրապետին իւրոյ քաջարի առն Բար-
զափրանայ՝ ած արկեալ ընդ ամենայն հռովմա-
յեցի իշխանութիւնս, հանդիսաւորէն հռչա-
կեցին զանուն Տիգրանայ մեծ ազգին փառօք և
նորանոր յաջողուածովք յաշխարհ յամենայն ի
սաստ ազգաց։ Հուսկ ապա՝ հաշտութիւն Տիգ-
րանայ ընդ զօրապետին հռովմայեցւոց Պոմպէի
կարճեաց զպատերազմն յերկոցունց կողմանց,

և այնուհետև սկսաւ և նա ընդարձակել տէրութիւն հայոց և յառաջանալ մեծամեծ յաջողուածովք :

Ծանօթութիւն : Բարեպաշտութիւն հայոց և ընդհանուր քրիստոնէական կարգք և աշխարհի կարգաւորութիւնք էին առ հասարակ գրեթէ՝ յառաջին կարգէն և յառաջնոյն և ՚ի պանծալի դրութեան. երևելի՝ էին յայսմ Մծբին քաղաք և Տիգրանակերտ կանգնեալն ՚ի նոյն երկ ՚ի Տիգրանայ՝ որք էին յայնժամ առաջնորդք թագաւորացն հայոց և առջանին գանձք և ամ քրիստոնէական պատմութեանց :

Հայք կառավարեցան յառաջս վաղարշակեանց առաջնոց, յանդգնի հանեալ զնախնիս իւրեանց. որոց ձեռն կանգնեալ վաղարշակ ՚ի Մծբին. դնէ անդ և զիշխան արեգական և լուսնի, փոխեալ անդր և զարձանս նախնեաց իւրոց (թերևս յարքայական քաղաքէն Մծբնայ). քուրմն կացուցանէ նոյն զարս պաշտօնեայս ՚ի վահանեանց աշխէ ՚ի սերնդոց վահագնեայ:

՚Ի ժամանակս Տիգրանայ Բ, կառավարեալ էին հայոց յածուխս Մծբին՝ որ կանգնեալ արքայն զաստուածային պատկեր դիցն. ՚ի Մծբինէ՝ յորում զԱրամազդայ. ձԱրէշ արամազդ զԱ-նահիտայ. ՚ի Բագաւանին՝ յոր զԱստղկայ. զՄիհր որ զԱրամազդայ. որոց ան քուրմ էին վահանեանք. ընդ որս յառաջեալ ընծենու զնոսա Տիգրան ՚ի կրօնութենէ. Խոր. գրոց Բ. գլ՝ 14 :

# ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑ ԵՐՐՈՐԴ

## Յոյնք

ցմահուանն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ։

2000. Գաղթականք ասիացւոց կոչեցեալ Պեղասք, բնակեցան 'ի հարաւային մասին Եւրոպիոյ յայժմեան Յունաց։ Հաւանական է, թէ ստացաւ գաւառս այս զկոչումն յունաստան՝ յանուանէ կառավարի նց Յոնի. սորա պեղասգք և կամ Յոյնք անքաղաքավարք և անկիրթք, որք 'ի սկզբն ժամանակի 'ի սփիւռ բնակեալ կային և 'ի լերինս, անծանօթ էին քաղաքական հասարակապետութեանց.

1500. Կեկրոպէս եգիպտացի և Կադմոս փիւնիկեցի բնակեալք 'ի յունաստան, դնեն անդ զսկիզբըն կրթութեան բնակչացն. յորում ժամանակի երևեցան ասաէն թագաւորութիւնք Արգեսացւոց, Միկինեացւոց, Աթենացւոց, Լակեդեմոնացւոց և այլոց։

Ամփիկտիոն որդի Դևկալիոնի հաստատէ 'ի յունաստան զդատաստանատունս, ուրանօր վճռէին զգործս կախեալս զընդհանուր յունաստանէ, և որոշէին զվէճս և զծանր գործս։

1250. Յայսու ժամանակաւ յոյնք ծովագնաց եղեն 'ի Կողքիդէս (յայժմեան վրաստան) վասն յափշտակութեան, ոչ ասէին նոքա, ոսկեղէն գեղմամն։ Այս ուղեգնացութիւն, որ յանուն Արգոնաւորդաց՝ ընդարձակեաց զաշխարհագրական գիտութիւնս և զվաճառականութիւն յունաց. Ի վերջոյ ոգի դիւցազնութեան և վրիժու ստիպեաց զյոյնս կրկին ծովագնաց լինել 'ի փոքրն Ասիա ընդդէմ Տրովադայ. զոր յետ

տաճարաց պաշտամանն՝ առին և աւերեցին.

Նա քանզի բազումք ՚ի Թագաւորաց յու- 1185.
նաց ոչ վերադարձան ՚ի Տրովադայ, ծագեցան
պատերազմունք վս ժառանգութեան աթոռոյ,
սփռեալք ընդ բոլոր յունաստան. ՚ի Թշուա- 1110.
ռութիւնս, զորս պատճառեցին այս պատերազ-
մունք, յաւելան և յարձակմունք Հերակ-
լեանց այն է սերնդոց Հերքիւլեայ ՚ի Պեղոպո-
նեսոս: Յայնժամ՝ Յոյնք բազումք հեռա-
ցեալք ՚ի փոքրն Ասիա, զհիմն արկին բնակութե̅
հաստատելով ՚ի յետոյն ժամանակս ՚ի բազում մե-
ձակ բարգաւաճ. ՚ի սմին ժամանակի յունաստան
զփոփոխումն բազում ստացեալ յեղանակի անդ
կառավարութեան, բոլոր միապետութիւնք յու-
նաց փոխեցան ՚ի հասարակապետութիւն (բաց
յՍպարտայ) յորոց միջի վսեմ և գլխաւորագոյն
եղև սպարտացւոյն և աթենացւոց:

՚Ի Սպարտա յետ փոփոխութեան միապե-
տական կառավարութեան ՚ի հասարակապետու-
թիւն, յարեան անհամաձայնութիւնք և երկ-
պառակութիւնք. ՚ի պատիւ հասարակապետու-
թե̅ս այսօրէն յարեաւ ՚ի մէրջոյ Լիկուրգոս մե-
ծանուն. որոյ տուեալ ՚ի Սպարտա զկարգա-
դրութիւն, նախագրէ նա զխստագոյն օրէնս.
բնաջինջ արար ՚ի նմա զշռայլութիւն և զհարս-
տութիւն. ուսոյց սպարտացւոց զաշխատսիրու-
թիւն, զվտառաւոր կեանս և զժուժկալութիւն.
զարթոյց ՚ի նո̅ զազնուական սէր առ հայրենիս,
և առհասարակ արար զնոսա ազգ քաջ և կորո-
վի. յետ երեք հարիւր ամաց զկնի Լիկուրգոսի 888.
յարեաւ և ՚ի հասարակապետութեան աթենա-
ցւոց իմաստուն և առաքինին Սողոն օրէնսդիր,
որոյ փոխեալ զխիստ օրէնս Դրակոնեան, ետ նց̅
զայլս հեզագոյնս և բարերարս, որոց նպատակ էր

ութե՛լ Աթենացւոց զհանգստութիւն և զբա֊
րեբաղդութիւն, առնել զնոսա զօրականս, կեր֊
թս և առաքինիս: Ի նմին ժամանակի յոյնք մանա֊
ւանդ Աթենացիք պարապեալք 'ի ծովագնացու֊
թիւնս, ծաւալեցան 'ի փոքրն Ասիա, 'ի Սիկիլիա,
յԻտալիա և յափունս սեաւ ծովուն և յայլ
տեղիս:

Հուսկ ուրեմն՝ ոգի դիւցազնութեան և
եռանդն զգացումն սիրոյ առ հայրենիս, հոգի֊
ացոյց զյոյնս և միաւորեաց զնոսա անձկագոյն
կապանօք. ցանկացեալ սոցա պահպանել զազա֊
տութիւն և զանկախութիւն ասիական բնակու֊
500. թեան իւրեանց, մարտ դնեն ընդ պարսից. եր֊
կեքին առնեն զինքեանս պանծալի քաջագոր֊
ծութեամբք 'ի վերայ բազմաթիւ թշնամեաց
իւրեանց: Հռչակաւոր զօրագլուխ Աթենացւոց
Միլտիադէս արար յոյժ զերևելի յաղթութիւն
'ի վերայ պարսից 'ի Մարաթոն. արքայ Սպար֊
տացւոց և զօրագլուխն Լեոնիդ քաջութեամբ
մարտուցեալ Յ̃ պարսս, մեռաւ փառօք 'ի Թեր֊
մոպիլէ. գերապանծ զօրագլուխ Աթենացւոց
Թեմիստոկլէս հռչակելի՝ արար զյաղթութիւն
իւր 'ի վերայ պարսից՝ 'ի ծովու 'ի Սաղամինա
կղզւոջ, ուր և 'ի փախուստ դարձոյց զՔսերք֊
սէս: 'Ի վախճանի՝ յաղթութեամբքն առ Պղա֊
տեաւ և Միկաղեաւ՝ պսակեցան յոյնք նոր իմն
փառօք. այսու օրինակաւ բովանդակ զօրք Քսեր֊
քսեսի որ էր 2, 600, 000, արանց, բազմա֊
հարուած 'ի սփիւռ՝ տարածեցան. ըստ այսմ
450. Արտաքսերքսես առաջին ժառանգ Քսերքսեսի
անձապարէ զդաշն խաղաղութեան դնել ընդ
յոյնս և յօժարութեամբ պահպանել զազատու֊
թիւն և զանկախութիւն բնակութեանց յու֊
նաց 'ի փոքրն Ասիա: 'Ի ժամանակս այսոցիկ պա֊

տերազմաց բնակէր յԱթէնս և վարէր յօգուտ և 'ի փառս բովանդակ յունաստանի գերիմաստն և առաքինին Արիստիդէս․ որ կրեաց զանուն արդարադատ։

Ամս յետ վերջաւորութեան պարսկական 431․
պատերազմացն, ո՛չ անագան ծագեցաւ ներքին պատերազմն անուանեալ Պեղոպոնեսեան, որոյ գլխաւոր պատճառ էր ձգտումն Սպարտացւոց և Աթենացւոց յառաջնութիւն 'ի յունաստան։ Այս մարտ պատերազմի յարատեւեալ զամս 27․ ամայի արար զողջոյն Յունաստան․ յետ որոյ սպարտացիք լինին հզօրագոյնք 'ի նմա․ 'ի սկիզբն պատերազմիս կառավարէր զհասարակապետութիւն Աթենացւոց հռչակաւոր այրն Պերիկղէս գերաղանցամիտ․ յորոյ 'ի ժամանակի ծաղկէր ոսկեղէն դար գիտութեանց և հանճարոյ։

Ձգտումն Սպարտացւոց 'ի տիրապետութի
յունաստանի, յարոյց զերկրորդ պատերազմ 370–361․
ներքին։ Թեբացիք զինեալք 'ի պաշտպանումն հասարակաց ազատութեան, առաջնորդութեամբ երկուց երևելի զօրագլխաց իւրեանց Պեղոպիդայ և Եպամինոնդայ յաղթէ Սպարտացւոց առ Լևկտրեաւ և Մանդինեաւ․ բայց այս յետին յաղթութիւն ծանրագին՝ եղև նոցա․ քանզի՝ Եպամինոնդ մահու չափ վիրաւորեալ 'ի մարտի՝ գնայ զիւրովին։

'Ի վերջ երկրորդ պատերազմի, սկիզբն եղև երրորդին 'ի յունաստան, որ յայտնի՛ է անուամբս Փոկեան։ Փիլիպպոս արքայ Մակեդոնիոյ օգտեալ 'ի հանգամանացս, խառնի 'ի գործ յունաց և ածէ զամենեսին զնոսա ընդ իշխա- 330․
նութեամբ․ իսկ որդինորա Աղեքսանդր գլխովին հաստատեաց զիշխանութի 'ի վերայ նոցա։

# ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՉՈՐՐՈՐԴ

## Միապետութի և Տէրութի Մակեդոնիոյ կանգնեալ յաւերակաց նորին։

Բնակութիւնք հաստատեալք 'ի յունաց 'ի
800. Մակեդոնիա, եղև հիմն միապետութե մակե-
դոնացւոց. այլ այս միապետութի մինչև ցժա-
մանակս Փիլիպպեայ էր փոքրոգի իմն. ըստ որոյ
և պատմութի նորին յայտնի է սակաւուք և
լցեալ բազում կեղծիւք։
360–36. 'Ի թագաւորել անտի Փիլիպպեայ յաթոռ Մա-
կեդոնիոյ՝ սկսանի դար փառաց միապետութե
նորա։ Սա հանճարեղութեամբ ընդարձակեալ
զսահմանս իւրոյ միապետութեան, հաստատէ
զիշխանութի իւր 'ի վր յունաց, որք անհաշտ
նախանձախնդիր էին ազատութեան իւրեանց.
կարգէ փաղանգս և զկանոնաւոր զօրս հաստա-
տունս և ահեղս վասն ամենեցուն։
336–23. Պանծալի՛ ևս հռչակեաց զմիապետութիւն
Մակեդոնիոյ որդի Փիլիպպեայ մեծամանունն Ա-
ղեքսանդր դիւցազն վաղեմի դարուց. որոյ
յաղթեալ 'ի փառասիրութենէ և յորձից առ
աշխարհակալութի, 'ի միտի եդ հնազանդեցուցա-
նել իշխանութեան իւրում զաշխարհս ամ, որք
յայտնի էին յայնժամ։ Նյապէս սորա հաստա-
տեալ զիշխանութի 'ի վր յունաց, խաղաց 'ի
փոքրն Ասիա 35000, զօրօք. որոյ յաղթութիւն
'ի վերայ պարսից առ Գրանիկեաւ՝ գուշակեաց
զանկումն Թագաւորութե նորա. 'ի պատերազմի
անդ առ Իսոսաւ, ինքնին Թագաւոր պարսից
Դարեհ կոդոման, որ առաջնորդէր զօրաց իւրոց՝
անձնապարտ դարձաւ 'ի փախուստ։ Հուսկ ա-

մեծայնի՝ պատերազմին առ Արբեղաւ, սպանէ զԱղէքսանդր նորագոյն փառօք. որ եհատ զդատակնիք պարսից, արկանելով զայն ի յիշխանութի մակեդոնացի. Եգիպտոս, Հրէաստան, Փիւնիկէ և ընդհանուր կողմանք Միջերկրական ծովէ՝ ցԻնդոս. և ՚ի սեաւ և ՚ի կարմիր ծովուց ցհարաւային Ովկիանոս՝ անկան ընդ իշխանութե նորա. որովք լայնածաւալ եւս սփռեցաւ միապետութի մակեդոնացւոց:

Այնպէս ընդ մէջ փայլողական զինու յառաջադիմութեց, ընդ կէս ճանապարհ յաղթութեց և փառաց՝ մահանայ Աղէքսանդր յերեսուն և երկու ամի կենաց իւրոց. որոյ նախաժամեան մահ կենաց ընկէց զմիապետութի մակեդոնացւոց ՚ի վիճակ թշուառ. այն զի՝ ՚ի մէջ զօրագլխոց նորա ծագեալ արիւնահեղ պատերազմ՝ կործանեցաւ համատարած միապետութի Աղէքսանդրի. և ՚ի նմանէ ամբարձան բազում թագաւորութիք, յորոց արժանիք են յիշատակաց՝ ասորեստանեայց (թագաւորութի Սելեւկեացւոց) եգիպտացւոց (թագաւորութի Պտղոմեանց ) եւս և մակեդոնացւոց. յորոց եգիպտացւոցն ընդ կառավարութե առաջին թագաւորաց իւրոց առաջին, երկրորդ և երրորդ Պտղոմեանց՝ էր բարեբաղդ. ուրանօր ծաղկէին գիտութիք, արհեստք, քաղաքական կրթութիք և վաճառականութի. այսուհետև բոլոր տէրութիք յաղթեցան ապա ՚ի հռովմայեցւոց:

՚Ի տէրութեց անտի կանգնելոց յանկանգնելն միապետութե մակեդոնացւոց՝ արժանի է յիշատակի յուդայեանն. Սիւրոս տիրեալ բաբելոնի՝ հրամայէ դառնալ հրէից ՚ի հայրենիս, վերանորոգել զթագաւորութիւն իւրեանց և զտաճարն երուսաղէմի: Յետ մահուան Աղէք-

սանդրի, որ տիրեաց հրէից, հրէաստան անկա-
նի ընդ իշխանութբ Թագաւորաց Ասորւոց.
յորոց Անտիոքոս չորրորդ յարոյց հալածանս 'ի
վը նորա : Այլ հաւատ 'ի ճշմարիտն Այծ տու-
եալ յամենայնի ձեռին նոցա զօրութի, ազա-
տէր 'ի կորստենէ : Այծ առաքեաց նոցա զոմն
ազատարար յազգականց նոցա զքաջապաշտ դի-
ցազն զՅուդայ-Մակաբէ. այլ անհամաձայնու-
թիւնք և երկպառակութիւնք ծագեալ 'ի Թա-
գաւորութեան յուդայ ընդ մէջ աղանդոյ փա-
րիսեցւոց և սադուկեցւոց, եղեն պատճառ կո-
րստեան նր :

5508. 'ի ստեղծ- մանէ աշխ, Հռովմայեցիք տիրեալ Երուսաղէմի, նըս-
տուցանեն յաթոռ Թագաւորութեան յուդայ
զօտարազգին Հերովդէս. յորում ժամանակի
կատարէր խորհուրդ մարմնաւորութեան Այծոր-
դւոյն. ծնաւ 'ի Բեթղեհէմ ակնկալեալ Մե-
սիայն Քրիստոս, որ սահեղծ ցեկեղեցի նորոյ
ուխտի և վերանորոգեաց զաշխարհ : 'Ի վերջոյ
խոտորումն հրէից յԱստուծոյ ճշմարտէ և ան-
թուելի անօրէնութիւնք նոցին պատճառեն
զաստուծոյ արդար բարկութի 'ի վերայ նոցա :

79. ամի Տն Հռովմայեցիք տիրեն նոցա. Տիտոս որդի կայ-
սեր հռովմայեցւոց Վեսպասիանոսի պատ-
ժեալ զհրէայս վասն խռովարկութեանց՝ այրէ
զտաճարն 'ի հիմանց. 'ի Թագաւորութեան Կայ-
սեր Անդրիանոսի՝ բովանդակ Երուսաղէմ ա-
134. ւերեալ էր և ընդհանուր ազգ յուդայ՝ 'ի
սփիւռ ընդ երկիր. որպէս նախատեսեալ է զը-
մանէ 'ի Սուրբ գիրս :

Ծանօթութիւն պչուհատանէ : Մի տարի 'ի հին ժա-
մանակս կարգաւորութիւն ժամանակին հաշուոց այնպիսի յառաջա-
դիմութիւնս կարծեաց, որպէս 'ի յայտնի, քանզի լուսաւոր կէ

զօրութեանց հասանէր ՚ի նա ՚ի կատարելագործ աստիճան, որ էր շառաւիղին ազնուութեան և երաժշտութեան։ Հռչակաւոր բանաստեղծք յունաց՝ էին Հոմերոս (էր 900 ամօք յառաջ քան զՔս) Հեզիոդոս, Պինդարոս, Անակրէոն և այլք. Պատմաբանք՝ Հերոդոտոս, Թուկիդիդէս, Քսենոփոն. Պոլիբոս, Պլուտարքոս և այլք։ ՚Ի մէջ բազում հռետորաց յունաց մանաւանդ Աթենացւոց՝ գերազանց՛ են. Երևեցան [illegible] իմաստութեանն. Իմաստասէրք յունաց՝ էին Թալէս, Սոլոն, Քիլոն, Պիտտակոս, Պերիանդրոս։ ([illegible] կոչեցեալ [illegible]) [illegible] և Կլէոբուլոս. [illegible] համարին ՚ի մե-ծերագոյն յունաց՝ Սոկրատ, Պղատոն և Արիստոտէլ։

Գեղեցիկ դպրութիւնք, նկարագրութիւնք և անդրիագործութիւն ծաղկեալ էին ՚ի յունաստան, մանաւանդ ՚ի հասարակապետութեան Աթենացւոց, ՚ի ժամանակս Պերիկլեայ հասեալ էին ՚ի կատարելութիւն։

Հասարակ յունաց կացուցեալ էր ՚ի բազմաստուածութիւն. և երկրպագանէին ած բազ կարծեաց նց կառավարիչ [illegible] յին մասն աշխարհի. Զևս համարէր [illegible] և կայծակաց ած. Կրոնոս՝ ած ժամանակաց. Ապողոն՝ ած երաժշտութեան և ճարտարութեան. Նէպտուն՝ ած ծովու. Պլուտոն՝ դժոխոց և այլք։ [illegible] բազմութիւն անձանց. [illegible], Պալլադայ կամ Միներ-վայ և [illegible]. [illegible] և [illegible]. [illegible] ձն։ [illegible] ՚ի [illegible] յունաց էր Ողիմպիական, որ համարէին [illegible] կարգեալ ՚ի պատիւ [illegible]։ [illegible] ՚ի [illegible] էին [illegible] և [illegible]։

# Միապետութիւն Հայոց:

'Ի թագաւորութենէ Աբգարու արշակունւոյ՝ [illegible] Արտաշէսի: 'Ի I. ամէ տեւեալ ցամն 129:

Թագաւորեալ Հայոց Աբգար յարշակունի
տանէ, թէ և հարկատու հռովմայեցւոց, բայց
ըստ հեզութեան քաղցրահամբոյր բարուցն բը-
նութեան կառավարէր խաղաղութեամբ զաշ-
30. խարհն իւր: Սա լինի առաջին հայր քրիստոնէ-
ական հաւատոյ հայաստանեայցս եկեղեցւոյ. որ
լուեալ զնշանագործութեանցն Քրիստոսի զարմա-
ցեալ յԵրուսաղէմ և հաւատացեալ առ 'ի նը-
մանէ փրկագործութեանց՝ գրէ թուղթ առ նա խը-
նդրեալ միանգամայն և զբժշկութիւն հիւանդու-
թեան, զոր կրէր յայնժամ. ընկալեալ քրիստոսի զգիր
նորա՝ առաքէ առ նա յետ համբարձման իւրոյ
զմի յառաքելոց իւրոց. որով Աբգար և պալա-
տըն գլխովին. 'ի նոյն յորդորէ և զամ Եդեսիա
լուսաւորեալ 'ի հաւատս ճշմարտութեան:

Թագաւորութիւն Հայոց որ յընթացս իբրև
37. ամաց եղծեալ էր ըստ մեծի մասին զօրով
հարկատու երկուց սահմանամերձ տէրութեանց
հռովմայեցւոց և պարսից՝ եղև այստ 'ի հարկէ
88. առ հռովմայեցիս: 'Ի ժամանակս Արտաշիսի
երկրորդի որդւոյ Սանատրկոյ կանգնի վերստին
անկեալն հայաստան ըստ մասնէ իշխանութեան
և փոքու ինչ լուսաւորութեան. իբր զի՝
114. սոյն սա Արտաշէս կանգնեալ զմիապետութի
Հայոց, յաղթեաց ողջոյն Ասիոյ նուաճեալ ըն-
կապադովկացիս և զ յոյնս, որոց տիրապետեալն
էին այնոցիկ կողմանց. հրդեհ արկեալ 'ի տե-
115. ղիս 'ի տեղիս. հուսկ՝ ապա դաշն խաղաղութե դնէ

ընդ կայսեր Տրայիանոսի մտեալ ընդ հարկաւ հռովմայեցւոց։

Յաւուրս սորա բաժանեցան զօրք Հայոց 'ի չորս վիճակս. յարևելեան, յարևմտեան 'ի հիւսիսային և 'ի հարաւային. յանձն արարեալ զերեսն երից որդւոց իւրոց և զչորրորդն' գլխաւոր զօրավարին իւրում Սմբատայ Բագրատունւոյ ասպետի, յորմէ սերեալ էր բազմօք զհաւատարմութիւն։

Ծանօթութիւն

Յաւուրս Սեվերոսի Հայաստան ընկալեալ զերիշխանականն հաւատս, առ հաստարակ պայծառատնայր ա̄ծայն գերութե և միրութե զորհեա. ամ առքեա խաստացան եհեզեցեա և ա̄ծայեն պաշտամանեա ցամ աեղեա արբութե խասարեաշ. ջարալութե Աւետարանին ցծագս հայաստանեայց աշխարհաց ընկալցաւ հարուստ ներքործութե։ Նայց և այնպես յեա նահանան Սեվերոս' արդեա նորին ընդէալ ճածապատութեան, բանան հրջին շատանցս խոսց նախնեաց հայաստանի և խոստապաշտեն։

Յայսմ ժամանակի յառաջադէմ պանծայր Հայաստան հանդապայնակ քննադրութեամբ մասպետի 'ի պէսպէս գիտութիս աշխարհական արհեստից և ճարտարութեց. մինչ զի և նախանձելի բազմաց լեալ օտարազգեաց, ընդունէր ղեաղանս 'ի այսն իւր. ծաղկեալ էր 'ի նմա քաղաքականութի, գետութի ասպետականութեց, շատ և ժամանակաց. նոյն և այլոց էրաց. և դէ յայնմ ժամանակի ոչ գոյր գէր հայկական, բազում յառաջադիմութիս գործէր լեզու հայոց պարոէր գրոցն. համբաւ լուսաւորութե ճախալեալ 'ի Պրրսկաց և յհեստանր աշխա իւր։

# ԲԱԺԱՆՈՒՄՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## Տէրութիւն Հռովմայեցւոց

յ753. ամէ յՇին. և 'ի ծննդենէն Քրի՝ յ476. ամ.

Ըստ փոխմութեն և ընդարձակութեն պատմութեն՝ Հռովմայեցւոց, մարթ է բաժանել զայն 'ի շրջանս. և յայս միտ առնուլ զերիս գլխաւոր թուականս՝ 'ի հիմն. 1. Հիմնադրութիւն Հռովմայ (753. ամէ ցքն.) 2. կարգադրութիւն հասարակապետական կառավարութեան (509. ցքն.) 3. Սահմանադրութիւն կայսերական արժանաւորութեն (30. ցքն) որոց առաջին պարունակէ յինքեան զպատմութիւն միապետութեն Հռովմայեցւոց. երկրորդն՝ զհասարակապետութեն. և երրորդ դրն՝ զտէրութեան նոցա:

# ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

## Միապետութիւն Հռովմայեցւոց.

յ753. ամէ յ509 ցՔրիստոս.

'Ի 1. ամէ յ244. 'ի հիմնարկութենէ Հռովմայ.

Նախնի պատմութիւն Հռովմայեցւոց յայտնի է սակաւուք, և լցեալ բազում կեղծիւք. վաւերական թուի, զի յետ աւերմանն Տրովադայ 'ի յունաց, Էնէաս անցեալ յԻտալիա՝ կալաւ զբնակութիւն իւր յաշխարհին լատինացւոց. ո-

րդ որդի Ասկանիոս հիմնէ անդէն զԹագաւո-
րութիւն Ալբայեցւոց: Ի յետնորդաց նր Նու-
միտոր անկանի յաթոռոյ յեղբօրէ իւրմէ յԱ-
մուլիոսէ. Թոռունք Նումիտորի Հռոմուլոս 753.
և Հռեմոս հալածեալք յԱմուլիոսէ և ապ- 733–16.
րեալք ի մօտալուտն վտանգէ, սպանեալ զնա
ինքն Ամուլիոս, նստուցանեն վերստին զՆու-
միտոր ի գահ Ալբայեան. ապա Նումիտոր ի
փոխարինել նոցա զտրիտուր բարերարութե,
հատոյց նոցա զմասն իշխանութե իւրոյ յափու-
նըս Տիբերոս գետոյն. ուրանօր Հռոմուլոս և
Հռեմոս կառուցանեն զՀռովմ: Յետ մահուան 711–670.
Հռեմեայ, Հռոմուլոս միայնակ կառավարէ ըզ-
Հռովմայեցիս. ստանայ զտիտղոս արքայական.
կարգէ զդատաւորս և զյառաջապահ քուրմս.
կազմէ զօրականս և զքրմապետս և մարզէ ըզ-
հպատակս իւր ազգ քաջ և պատերազմական.
Ժառանգ նր հեզաշունչն Նումայ—Պոմպիլիոս
քաջալերէ զՀռովմայեցիս յերկրագործել. Սա
գրեաց նոցա զօրէնս և զարարողութիւն ած-
պաշտաւն: Ի Թագաւորութե Տուղղեայ—Հոս 670–40.
տիլեայ՝ Հռովմայեցիք ընդարձակեն զտէրութի 640–14.
իւրեանց հնազանդեցուցանելով զԹագաւոր-
ուի Ալբայեան. Թոռն Նումայ—պոմպիլեայ Անկ-
մարկիոս կառավարէ զՀռովմայեցիս: Սակայն
այսու ամենայնիւ՝ ի բոլոր կեանս խաղաղասի-
րութե իւրոյ, յարուցանէր զմարտ ընդ Լատի-
նացիս ընդ Սաբինացիս և ընդ այլ ազգս. ընդ-
որս և մեծացուցանէր զիւրն իշխանութիւն:

Ի Թագաւորութե անտի հնոյն Տարկվի-
նոսի՝ ծաղկէին ի Հռովմ արհեստք և քաղաքն 611–508.
իսկ շքեղացեալ բազում քարագործ շինուա- 508–54.
ծովք: Հանճարափայլն Սերվիոս—Տուղղիոս ար-
ժանիշատակն ի պատմութեան հռովմայեցւոց-

իւրով շահաւէտ օրինադրութեամբ որոշեալ զհպատակս իւր 'ի դասս դասս և 'ի հարիւրաւորս ըստ իւրաքանչիւր չափու կարողութեան, հրամայեաց խօսել 'ի ժողովս ոչ ըստ թուոյ անձանց, այլ ըստ հարիւրոցն. զրկեաց զհասարակ քաղաքացիս յիշխանութէ՝ զոր ունէին 'ի ժողովս, տուեալ զայն՝ ազնուականաց. թեթևացոյց զռամկական ժողովրդեանն պատուէր տուեալ հատուցանել հարկս ոչ ըստ գլխաթուոյ, այլ ըստ հարիւրականին. իսկ որովհետև ազնուականք և մեծատուանք հռովմայեցիք էին կարի բազումք, ամեն իրի և հարկս՝ հարկանէին առաւել քան զհասարակ ժողովրդեանն:

Մահու մատնի բարեպաշտն Սերվիոս-Տուղղիոս. և նմա յաջորդի հաղորդն մանութեա՝ փեսայ նորին Տարկվինոս անուանեալ հպարտ. որոյ ըստ խստութե և առաւել ըստ ապականութեան բարուց որդւոյն նր յարեաւ խռովութի 'ի հռովմ. որ և վերջացաւ հալածմամբն Տարկվինոսի 'ի Հռովմայ՝ և անկանելով միապետական կառավարութեան:

# ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

## Հասարակապետութի Հռովմայեցւոց

'Ի 509. յ30. յ.ք.

Յետ հալածմանն 'ի Հռովմայ Տարկվինեայ հպարտի, հռովմայեցիք հաստատեցին յինքեանս զհասարակապետական կառավարութի և յանձնեցին զամենայն իշխանութին՝ բդեշխաց, որոց

ընտրութիւն լինէր ամի՛ ամի՛. սակայն ոչ կարէ֊
ցեալ իմացեալ զվնասակար հետեւումն հասա֊
րակապետական կառավարութեան, բդեշխք
և ընդհանուր պատրիկք սկսան հարստահարել
զազգն. ըստ այսմ բռնանդակ հասարակապե֊
տութիւնն էր ՚ի մեծ վտանգի: Հուսկ ամի ազգն
խիզախեալք ընդդէմ պատրկաց՝ մեկնեցան ՚ի
Հռովմայ և ոչ ընդ փոյթ վերադարձեալ անդր
եդուն զհամաձայնութիւն ՚ի Սինկղիտոսն ՚ի
հաստատութիւն ազգային ատենակալաց, որոց
գլխաւոր պարտաւորութիւն էր պաշտպանել
իրաւանց ազգին: Նա ՚ի ժամանակս իսկ խռո֊
վութեան ծագելոյ ՚ի Հռովմ յետ ոչնչացուցա֊
նելոյ զմիապետական կառավարութիւն, կարգե֊
ցան փաստաբանք (դիկտատորք) որոց առ այս֊
պիսի խառնաշփոթ քաղաքական հանգամանաց՝
յանձն եղև գրեթէ անպայման իշխանութիւն ՚ի
վերայ բոլոր հասարակապետութեան առ բարին
հասարակաց ցամիս մի և երբեմն ցամ մի: Եր֊
ևելիքն ՚ի նոցունց՝ էին Կինկիննատ վսեմ իւրով
բարեպաշտութեամբ և սիրով առ երկրագոր֊
ծութիւն: Կամիղոս ազատիչ Հռովմայ ՚ի կորս֊
տենէն ՚ի ժամանակս յարձակման գաղղիացւոց:
Սակայն նոյն իսկ մեծ իշխանութիւն փաստաբա֊
նաց անմարթանայր կատարելապէս վերականգ֊
նել զանդորրութիւն ՚ի հասարակապետութե
Հռովմայ: Ատենակալք (տրիբունք) անդադար
յարուցանէին զհասարակութիւն ընդդէմ Սինկ֊
ղիտոսին: ըստ որոյ և հասարակապետութիւնն
գլխովին դղրդէր անհամաձայնութեամբ և երկ֊
պառակութեամբ:

Սակայն Թշնամիք Հռովմայ հայեցեալ ՚ի ներ֊
քին խռովութիւն հասարակապետութեան, թէ
և առնել առնէին զպատերազմ, այլ այնուամենայ֊

չկարէին քաղել՝ի նոցունց զօգուտս ինքեանց. քանզի՝ Հռովմայեցիք որ վառեալ էին եռանդուսիրով առ Հայրենիս, տեսանելով զխարդախանս թշնամեաց, մոռացան զբովանդակ առանին երկպառակութիս, և ածեալ զպատերազմ՝ի վերայ ազգաց Իտալացւոց Սաբինացւոց, Էտրուրացւոց, Վոլկացւոց, Լատինացւոց, Սամնիտացւոց և այլոց, հանդիսանային միշտ՝ի վերայ թշնամեաց իւրեանց. որովք և ընդարձակեցին զիշխանութիւն իւրեանց յԻտալիա:

Իսկզախումն Հռովմայեցւոց առ աշխարհակալութիւն և նպատակ նոցին հնազանդեցուցանել իշխանութեան իւրեանց զՏարէնտ:

Մեծահարուստ քաղաքականք յունաց բնակեալք ՝ի Հարաւային Իտալիա, բռնադատէին զՊիւռոս արքայ Եպիրոսի բանալ զպատերազմ
282. ը̅ Հռովմայեցիս. սակայն Հռովմայեցիք յաղթա-
յքա. նակեցին զթշնամիս իւրեանց. ՝ի ժամանակս պատերազմին հասարակապետութիւն նոցին ունէր զբարեպաշտ քաղաքացին Փաբրիկիանոս, որ թէև համոզիւր ՝ի Պիւռոսէ յիւր կողմն, այլ ոչ դաւեցաւ նորին առատատուր ձրիւք. և որոյ ընդ համեստութիւն զարմացեալ էր նա ինքն Պիւռոս: Յետ վախճանի մարտին ընդ Պիւռոսի՝ Հռովմայեցիք հնազանդեցուցին զողջոյն Իտալիա և զգացեալ զզօրութիւն ձեռին իւրեանց՝ յարձակեցան անձամբ ՝ի սահմանս նորա, և ըսկիզբն արարին յարձակիլ ՝ի համաշխարհական աշխարհակալութիւն. յորոց ծագեցան պատերազմունք ընդ կարթագինեցիս՝ կոչեցեալ Պունիկեան:

262—38. Առաջին պատերազմ Պունիկեան տևեալ

զամս 24. վախճան առնու այնու՝ զի կարթագի-
նեցիք յաղթեալք ընդ ծով և ընդ ցամաք, հար-
կեցան թողուլ հռովմայեցւոց զամ՟ իշխանութի՟
իւրեանց ՚ի կղզիս Սիկիլիոյ: Յերկրորդումն՝ որ 219—202.
տևեաց զամս 17. երևեցան յերկուց կողմանց
հռչակաւոր զօրագլուխք. դիւցազն կարթագի-
նեցւոց մեծ զօրավարն Աննիբաղ անցեալ ընդ
Ալպիական լերինս՝ խորտակեաց զհռովմայեցիս
՚ի Տեսինէ, ՚ի Տրեբիա, ՚ի Տրազիմէն, և հուսկ
մեծապէս յաղթեաց նոցա ՚ի Կաննաք. Սակայն 214.
հռովմայեցիք ոչ վհատեալք ը՟ կառավարութե՟
զօրագլխի իւրեանց Սկիպիոնի՝ յաղթեցին կար-
թագինեցւոց յԱփրիկէ առ Զամաւ, յորմէ 202.
կարթագինեցիք հարկեցան առնել խաղաղութի
ընդ հռովմայեցիս, թողուլ նոցա զամ՟ իշխանու-
թիւն իւրեանց արտաքոյ Ափրիկոյ, վճարել ըզ-
վնասն կրեալս հռովմայեցւոց ՚ի նոցունց, և տալ
նոցա զքովանդակ նաւախումբս, որ հրձիգ եղեն:

Երրորդ պատերազմ Պունիկեան յարաձ- 149—46.
գեալ զամս 3, աւերս էառ եղծմամբն կարթա-
գինեայ և փոխադրութեամբ ողջոյն հասարակա-
պետութեան՝ ՚ի գաւառ հռովմայեցւոց: Յայսմ
ժամանակի յունաստան, մակեդոնիա և մասն
փոքուն Ասիոյ հարկեցան հնազանդել հռովմա-
յեցւոց:

Այսպիսի տիրապետութիւնք և հարստու-
թիւն ՚ի ձեռս բերեալ ՚ի նոցանէ, յարոյց զ-
փոփոխումն ՚ի բնաւորութեան հռովմայեցւոց.
՚ի սպառ ջնջեցան մաքրութիւն բարուց և ող-
ջոյն առաջին հասարակապետական բարեպաշ-
տութի. և փոխանակ նոցա տիրեալ էր արծաթ-
սիրութիւն, զեղխութիւն և ապականութիւն
բարուց:

՚Ի սմին ժամանակի ծաղկեալ էր յԱսիա

վսեմիմաստ քաջարին Միհրդատ վեցերորդ Թա-
գաւոր Պոնտացւոց, որ ջանայր սանձահարել
զփառասիրութիւն Հռովմայեցւոց. և ընդ երկար
տայր պատերազմ ընդ նոսա. սակայն բոլոր ձիգն
նորա էանց ընդունայն և յետ մահուան նր Հռ-
ովմայեցիք իշխեցին բովանդակ փոքուն Ասիոյ,
Ասորեստանեայց և Պաղեստինոյ. իսկ յեւրոպիա՝
տիրեցին ողջոյն Գաղղիոյ, ընդ արձակեալ զզէնս
իւրեանց մինչև ՚ի Բրիտանիա։

Նաև ՚ի ժամանակս այսպիսի գովանի յառա-
ջադիմութեց զինու Հռովմայեցւոց, բացաւ ՚ի
նմա ներքին պատերազմ ծագել՚ ՚ի փառասի-
րութեանց զօրագլխոց հակամիտելոց ՚ի ծայրա-
գոյն իշխանութիւն։

Մարիոս և Սիղղա երկոքին վտանգաւոր փա-
ռասէրք ամբոհացեալ մի ընդդէմ միոյ, հուսկ
ապա Սիղղա կարգեցաւ փաստաբան իշխող Հռ-
ովմէական հասարակապետութե. յետ մահու-
ան նորա սկսան յարձակիլ ՚ի ծայրագոյն իշխա-
նութի Պոմպիլէոս և Յուլիոս կեսար. յորոց
յաղթեցաւ ՚ի նորոյ ներքին պատերազմ. ըստ ո-
րոյ և Հռովմայեցիք յանձնեցին Յուլիոսի կե-
սարու զամենայն ծայրագոյն իշխանութի ՚ի հա-
սարակապետութեան, կոչելով զնա անփոփոխ
փաստաբան և կայսր (հրամանատար) զօրաց։
Սորա կառավարեալ զհասարակապետութիւն,
ձիգն թափէր հանել զհռովմայեցիս յանդորր
և յերջանիկ վիճակ. բայց հանդերձ այսու ա-
մենայնիւ այս այր մեծ ոչ կարացեալ պահել
զանձն ՚ի չարանենգ թշնամեաց՝ սպանաւ ՚ի նո-
44. ցանէ։ ՚Ի հանգամանաց աստի՝ ծագեցաւ ՚ի
Հռովմ երրորդ պատերազմ ներքին. յորում
ժամանակի հակառակորդք էին Անտոնինոս և
Թոռն Յուլիոսի Ոկտավիանոս. հասարակապե-

տութեն ընդերկար ներեալ յայսոցիկ պատե-
րազմաց, հուսկ ամենայնի՝ պատերազմն եղեալ
յԱկտիում, արար իբրաւունս այսչափ անիրաւու-
թեանց։ Օկտաւիանոս յաղթեալ Անտոնինոսի
և վերադարձուցեալ զԵգիպտոս ՚ի գաւառ 30.
հռովմայ՝ ստացաւ զանուն Օգոստոս կայսր
հռովմայեցւոց. ըստ որոյ և բարձաւ հասարա-
կապետական կառավարութիւն ՚ի Հռովմ։

## ԴԱՐՔԱՆ ԵՐՐՈՐԴ.

### Տէրութիւն Հռովմայեցւոց.

ի 30. ամէ յառ. Քի մինչ ի 476. ամ տեառն։

ի 723. ամէ ի 1229. ՚ի հիմնադրութենէ Հռովմայ.

Մեծ երջանկութի համարեալ հռովմայե-
ցւոց հնազանդել միում ինքնակալ իշխանու-
թեան, ընտրեցին կառավարիչ ինքեանց Օկտաւի- 30.]
անոս — Օգոստոս. որոյ անցեալ ՚ի միահեծան իշ-
խանութի խոհեմ կառավարութբ իւրով և
զօրութբ վախճան ետ ներքին պատերազմաց ՚ի
հռովմ, լեալ պատճառ անդորրութե և բարօ-
րութե հռովմայեցւոց. յաւուրս կառավարու-
թեան սորա ծագեալ էր անդանօր գիտութի,
արհեստք և վաճառականութի. յորոյ երեսնե-
րորդ ամի թագաւորութե մարդացաւ ակնկա-
լեալ Մեսիայն Քս փրկիչ աշխարհի.

Հռովմայեցիք ընդհանրապէս առ կառավա-
րութբ Օկտաւիանոսի օգոստեայ, և ազգ որոց
հնազանդեալք էին իշխանութեան նորին՝ համա-

ըէին զանձինս բարեբաղդս. բայց սոյն այս է
մեզ ապացոյց առայն, թէ միապետական կառա-
վարութիւն է ամենագովելի յաշխարհի. իբր հա-
մաձայն բնական կարգի իրաց և բովանդակ
ածային օրինաց: Նա թէ՝ զկնի սորա եղեն ՚ի
Հռովմ զեղխամիտ բռնաւորք Տիբերիանոս,
Կալիկուլաս, Կղոդիոս, Ներոն և այլք, գիտե-
լի՛ է, զի այդ էր արագագնաց յայնժամ. վա՛յ
արժան է համարել զայդ բացառութիւն յընդ-
հանուր կանոնէ. մանաւանդ զի՝ զկնի այսոցիկ
բռնաւորաց, տեսանեմք յաթոռն հռովմէական
69—79. զաշխատասէրն Վեսպասիանոս. զողորմածասիր
79—81. որդին Տիտոս, որ կորուսեալ համարէր զժամանա-
ամ քն. կըն, յորում ոչ կարէր առնել ումեք զբարի.
և ըստ այսմ իրաւամբք կոչեցաւ մխիթարութիւն
մարդկան. տեսանեմք զիմաստունն Տրայիանոս,
98—117. զարժանաւոր ժառանգն նր Ադրիանոս. բարե-
117—38. պաշտ և զհեզն Անտոնինոս և զթագաւոր փի-
138—61. լիսոփայն Մարկոս-Ավրելիոս: Այսպիսի արքայք
161—80. թագաւորեալք հեզութբ և արդարադատու-
թեամբ, այո՛ կենդանացուցին վերստին ՚ի հը-
պատակս իւրեանց զոսկեղէն դար երջանկու-
թեան:

Բայց այս երջանկութիւն բարձաւ մահուամբ
Մարկոսի-Ավրելիոսի. հռովմայեցի զօրք գրա-
ւեալ ինքեանց զմեծ իշխանութիւն և սկսեալ
զհրաւունս առնել կայսերաց իւրեանց, ՚ի բո-
լոր տէրութեան յարուցանէին զմեծամեծ աղ-
մուկ:

Նա ՚ի վտանգել զայս տէրութիւն, զանա-
զան ազգք մանաւանդ հիւսիսայինք յարձա-
կեալք յամ կողմանց, սկսանէին կողոպտել
և ամայի՛ առնել զգաւառս հռովմայեցւոց և
հաստատել ՚ի նոսին զիշխանութիւն իւրեանց:

Դիոկղետիանոս կայսր վերանորոգէ զկարգ 'ի
թագաւորութե. Կոստանդիանոս մեծ կոչեցեալն 306–307.
սբ. կատարեալ իմաստութբ աւարտեալ զայս
գործ, հաստատէ զմիահեծան իշխանութիւն
իւր. որ և ընտրեալ ինքեան զաթոռանիստ քա-
ղաք զԲիւզանդիա, կոչէ յիւր անուն՝ Կոստանդ-
նուպօլիս: Նոյն միապետիս անմոռանալի է 'ի
քրիստոնեայս. զի թողեալ սորա զմոլար կռապաշ-
տութիւն, հաւատաց 'ի ճշմարիտ աւետարանն,
զոր տարածեաց 'ի բոլոր տէրութեան իւրում.
և ըստ այսմ եկեղեցին Հռոմի որ էր հալածա-
կան ընդ երկար ժամանակ, յաղթական հանդի-
սացաւ և հաստատեցաւ 'ի վերայ անդրդուելի
հիման:
Յետ մահուան սորին Կոստանդեայ՝ 'ի կորուստ
եղև հռովմէական միապետութիւնն. քանզի՝ 'ի
ներքին խառնակ շփոթութիւնս՝ յաւելան ար-
տաքին դժբաղդութիւնք ևս, հզօր ապստամբութիւնք 375.
հիւսիսային ազգաց և վայրենի աշխարհակա-
լաց Հոնաց 'ի տոհմէ Թաթարաց և մուղալ ազ-
գաց. որք ելեալ 'ի հիւսիսային կողմանց սինեա-
ցւոց յարուցին զհզօր տատանումն և զմեծ ա-
ւեր ընդ ամ տէրութիւնս Հռովմայ:
Թէոդոսի Կայսեր բաժանեալ զտէրու-
թիւն հռովմայեցւոց յերկուս յԱրևելեան և
յԱրևմտեան, կացոյց նոցա կայսերս՝ զերկուս 395.
որդիս իւր զԱրկադէոս և զՈնորիոս. զա-
ռաջինն կայսր արևելեան և զերկրորդն՝ արև-
մտեան:

Արևմտեան տէրութ հռովմայեցւոց կրէ ոչ
անագան զթշուառութիւն. իբր զի՝ Գութք և
Վանդալք տիրել Հռովմայ, պատճառեցին զմեծ
աղմուկ շփոթի 'ի նմա. յորում ժամանակի ծա-
գեալ 'ի մէջ Գոթաց վայրենի աշխարհակալն Ա-

Ատտիլայ՝ կոչեցեալն մտրակ Աստուծոյ, աւե-րեալ զամ՟ տէրութիւն Հռովմայեցւոց, հա-սուցանէ զայն 'ի մեծ թշուառութիւն և յան-
476 . դառնալի կործանում: Հուսկ ապա՝ Օդոակրոս իշխան Հերուլեաց տիրեալ Հռովմայ, իջուցանէ յաթոռոյ զկայսրն Օգոստոս-Հռոմուլոս, հա-տանելով զիշխանութիւն իւր յԻտալիա. 'ի կոր-ծանումն արեւմտեան տէրութեան Հռովմայե-ցւոց՝ յարեաւ առաջնորդ Փրանկաց Կղոդովէ-կոս. յետ յաղթութեանն, զոր արար սա 'ի վերայ տեղապահին Հռովմայեցւոց Սիագրեայ 'ի Գա-ղղիա առ Սուասոնա, կործանեցաւ այս տէրու-թիւն. յորոյ աւերակաց ամբարձան նորագոյն տէրութիւնք Եւրոպացւոց:

Ծանօթութիւն Հռովմայեցւոց: Ո՛չ մի ազգ ամբար-ձաւ 'ի հնումն յայնպիսի բարձր աստիճան զօրութեան փա-ռաց և յաղթութեան՝ որպէս Հռովմայեցւոցն. և ո՛չ ոք ան-կաւ յանարգութիւն որպէս նոքին: Հռովմայեցւոց ամբարտաւանու-թիւն — Հռովմ յերկրագործականաց էր իշխող ընդ հանուր աշխարհաց. որ զաւակս ծառայականն էին. ձանչէ՝ տէրութիւն նոր ընդարձակեալ էր յԱտլանտեան ծովէ մինչև ցԵփրատ և ցՆեղոս. և 'ի Սկովտիոյ և 'ի Արաբիոյ և 'ի Տանայիսեայ՝ ցանապատս Ափրիկոյ. Եւ և հասեալ հա-ջողեցուցեալ չափ տէրութիւնն. այսր զօրէնս ընդ հա-նուր աշխարհի, առաջին 'ի վերջոյ ամենայնի՝ անկաւ ընդ հա-րուածովք այլ և այլ վայրենի հիւսիսային ազգաց. ընդ որս և պատահս ամբարձման և անկման նորա արժանի՛ է ուշադրութեան մերոյ:

Մեք աստ հայեցեալ, հնազանդութիւն օրինաց և իշխա-նութեանց մաքրութիւն վարուց, հայրենասիրութիւն պա-տերազմական հմտութեանց և հետևորդ նոցին և անդադար յաղթանակութիւնք տարածին զՀռովմայեցիս իշխող ընդ հանուր աշխարհի, այլ զփափկանաց շռայլութեան նոյն և նոքին պա-

աէրաշխունք Բուղայացւոյն զամենայն չէարքացական և չինա-կան զօրութեան նոցին ։

Հռովմայեցիք որ անուանիք էին առաջինութեամբ ՚ի հը-նումնոց, ստուարքին ժամանակս հաստաբանազգեցութեան իւրեանց, հաւաք այս հաւաքեցան մեծագոյն անօրէնութեամբք ։ Պա-տերազմական հմտութիւն նոցա որ հիմնեալ էր ՚ի վերայ հաս-տատագոյն հիման և ՚ի սէր առ հայրենիս, ՚ի ջերմին ժամա-նակի պահպանեալ զինուոր մարդն և էր շահ և ազգահութե-ան հարստութիւն ։ Մինչդեռ հեռաւորն ազնուական անձ-ման իշխանութեան կոչեցաւ զանձամբ Հռովմայ ։

Յաւուրս Հռովմուլեայ հռովմայեցիք էին անխաղաղականք և վայրենիք. Նումա — Պոմպիլիոս կրթեաց նոցա զօրէնս և ըն-կալան տեղակալութեան՝ էր զհետ կրթութեան նոցա. ա-կացն և այնպէս զհեա երկնեալ նոցա պատերազմական գո-ւոյ, չեղեն յառաջադէմք ՚ի գիտութիւն և յարհեստս. Հռովմ՝ հարուստ ազգաց, հաւանեցան ա-նոսա, և յայնմ հետէ՝ Յոյնք յաղթեցան ՚ի Հռովմայեցւոց՝ ե-ղեն յաղթականք զան զնոսա. իւրեանց ՚ի յունաստանէ մա-տուցին իւր ՚ի բաղում ՚ի Հռովմ արհեստք և գիտութիւնք ։
Օգոստոս կայսր և երևելի հրամանատար և բարեկամ նորին Մեկենաս ջգեցին զնոսա յառաջանալ կատարելութեան բարե-բաղդութեան պաշտպանութեամբ իւրեանց ։ Ի սմին ժամանակի ծաղկեալ էին ՚ի Հռովմ բանաստեղծութիւն և լաւագոյն ճարտարք՝ շարժ օգտակար գործ, որ էին՝ Հորատիոս և Վիրգիլիոս. պերճախօսութիւն նախանձ [illegible] ՚ի հաստատութեան ժամանակի. և մեծամեծագոյն ՚ի հռե-տորաց նոցա՝ էր Կիկերոն. պատմութեան իմաստութիւն յա-նոյ ծաղկեալ էր ՚ի Հռովմ այնպէս, մինչև յարուցանել ըն-բաղում բարեպաշտ կաղախայքս ։ Պատմաբանք նոցա՝ էին Տիտոս, Լիվիոս և Տակիտոս, որք ընդ պլուտարքեայն օրէ-նակի [illegible] Տրայանոսի. յաղթա-հագրացն Հռովմայ՝ մեծանուն էր Պլինիոս. գերազանց արհեստք, ճարտարապետութիւնք, նկարչութիւնք բարգաւա-ճեալ էին արդէն ՚ի բարձրագոյն կատարելութեան ։

Նաւատ հաւաքմայեցաւց հաստատեալ ՚ի Սուրբն Պօղ-ղոսեայ՝ նայանայր ՚ի բազմապատահմանութիւնս, որք բազ նա-պաշտեց յանուց պաշտէին զբաշմութիւն տեղւոյ և տեղւոյ հեաց. Ի-բրաւանշեւրամ ՚ի նեշծահնար տեղւոյ ընծայէին զնոր-հաւորութիւն որ և Երկի մարին աշխարհի. Գնաւոր պաշտպան Եւրեանց համարէին զմին պատերազմի՝ Սարապայ. էին անդ և բազմութիւն կռոց, յորս յայտնէին էին Մելքոր նամ նեւստհմայք, որոց նախագուշակ ժողովրդեան զպատանելի՝ առնէին զհաւահմայութիւն, զօդահմայութիւն, զընդերա-հմայութիւն և զայլ այնպիսիս: Նոյն այն՝ ճշմարիտ արե-գական արդարութեան ցուցեալ ՚ի Բեթղեհեմ, յաւուրս մեծին Կոստանդիանոսի ցրուեաց զխաւար կռապաշտութեան և ե-բաց ժողովրդեան զճանապարհ առ ճշմարիտ աստուածգիտութիւն.

Ընդ այսր ժամանակի , ՚ի 129 ․ ամ․ փրկչին՝ 4392 ․ ամ ․

Թագաւորք Հայոց յաջորդեալ զաթոռ յետ Արտաշիսի , հարկեցան երկուց իշխանալութեանց պարսից և Հռոմայեցւոց ․ յաւուրս 114 ․
Խոսրովայ տեսանէր Հայաստան զխաղաղութի ․ զի նա պանծալի քաջագործութեամբ իւրով զարքայն պարսից հալածական ցհնդս տանէր ․ 246 ․
այլ սակայն յետ անկմանն Խոսրովայ ՚ի դաշտին ՚ի դաւանացն Անակայ , ոչ անագան վերադարձեալ արքային պարսից , ՚ի սուր հանէ զարքու- 260 ․
նին Խոսրովայ ՚ի Վաղարշապատ , մինչև ումանց յորդւոց և ՚ի դստերաց նորին փախստեայ անկանիլ յայլ և այլ կողմանս աշխարհի ․ յորոց և Արքայազունն Տրդատ՝ ՚ի Հռոմ ։
Որդի Խոսրովայ Տրդատ Թագաւորէ Հայոց պը- 286 ․
սակադրութեամբ ՚ի Հռոմ ՚ի ձեռն կայսեր Դիոկղետիանոսի ․ որ ըստ օրինակի հօրն ընդարձակեալ զիշխանութիւն իւր ՚ի վր պարսից , ՚ի կարգ քաղաքականութեան յարդարէ զհայաստան գերծեալն ՚ի նոցունց ։

Սորա յետ տալոյ զբազմատանջ չարչարանս 286—302 ․
սրբոյն Գրիգորի յաղագս քրիստոսական հաւատոց , հաւատացեալ քարոզութեցն ՚ի նմանէ մկրտի յԵփրատ գետ հանդերձ արքայազնովք և զինուորականօք , ընկալեալ ՚ի ճակատ զկնիք դրոշմին սրբութեան առ Ս․Ծ հաւատոց և միանգամայն առաքելականացն աշակերտել բանից ՚ի լոյս ա՟ծգիտութեան անդր վերածաւ ։

Յետ մահուան Տրդատայ անկանէր բարձ- 314 ․
րացեալն Հայաստան և մե՛րթ ընդ մե՛րթ զրկեալ ՚ի Թագաւորութենէ և ՚ի քաղաքական միաբա-

344 · նութենէ հասարակաց. քանզի՝ յետ յաջորդելոյ
զթագաւորական աթոռն ժառանգորդաց Տր֊
353 · դատայ, ծագեցան աւուրք դառնութեան հա֊
յաստանեայց. յարեան մեծամեծ աղմուկք շփո֊
թից և խռովութիւնք առ նախարարս հայկական
տէրութեան, մինչև յառնել ՚ի վերայ միմեանց
և զաշխարհն հայրենի անմարդաբնակ առնել
համօրէն ։

381 · Պատերազմ պառակտեալ նախարարաց հայ֊
կական տէրութեան զարհուրելի՛ ին ստորագրի
՚ի պատմութեան լեալ ՚ի դաշտին Ձիրաւ առ
Նպատ լերամբ ՚ի Հայաստան ՚ի գաւառին Տա֊
րօնոյ յաշխարհին Տուրուբերան. գլխաւորք ՚ի
նախարարացն յարելոց ՚ի պարսիկս՝ էին Նահա֊
պետ արծրունեաց ուրացեալն Մեհրուժան և
Վահան մամիկոնեան, որ խաբեալն էր անդանօր
՚ի մարտին պարսիկ զօրօք ընդ արքայազն նոցա
Արտաշիր. իսկ որոց յեցեալն էր առ յոյնս՝ գլխ֊
խաւորքն էին Նորապսակ արքայ հայոց Պապ որ֊
դի Արշակայ, կամսարականն Սպանդարատ, Մու֊
շեղ մամիկոնեան քաջ անուանեալ և սպարապե֊
տըն հայոց Սմբատ սպետ բագրատունի, որ զու֊
րացեալն Մեհրուժան անդէն ՚ի մարտին եբարձ
չարաչար. ընդ սոսա և յունական զօրուն սպա֊
րապետ Տերենտիանոս ստորաբելաւ յօգնութի
հայոց ՚ի Վաղէնդոս կայսերէ ։

386 · Յանհետանալ աղետալի դժբաղդութեանցս
՚ի հայաստանեայց առ անդորրութիւն աշխար֊
հին, Վաղէնդոս մեծ կացուցանէ զերկուս թագա֊
ւորս յարշակունի տանէ՝ զԱրշակ և զՎաղար֊
շակ ՚ի հպատակութիւն աթոռոյ իւրոյ, և առ
այս իսկ թագաւորութիւն հայոց բաժանեալ
յերկուս մասունս յունաց և պարսից, ՚ի բաժ֊
նին յունաց նստաւ Արշակ, և ՚ի բաժնին պար֊

ոյց՝ Խոսրով. Մուշանի Արշակ, և Խոսրով արքայ բաժնեին պարսից՝ կալանաւորի ՚ի Հայոց ՚ի թելադրութենէ նախարարացն ատելութեանց :

Ծանօթութիւն :

Յաւուրս Տրդատայ չքնեն ընկալաւ Հայաստան քրիս-տոնէական Հաւատոյ և պաշտամանց եկեղեցւոյ քրիստոնէ-իցն ։ Ամենագիտութեան եւ րծր ՚ի գլուխ հանդերձանաց ՚ի բե-րանոյ մանկանց տղայոց . Եւ էին գաղտաղն խաղաղէին քրիստո-նեայք և յաւ-Հասարակ Հայաստանեայս քրիստոսի մարդե-ղութեան դաւանեցին ճշմարտութիւն ։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒ

'Ի կործանմանէ հարաւային տէրութեան հռովմայեցւոց՝ ցգտումն Ամերիկոյ.

'Ի 476. ամէ (500) ց1492. (1500)ամ տեառն:

## ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

'Ի կործանմանէ հարաւային տէրութեան հռովմայեցւոց՝ ցկարողոս մեծ. 'Ի 476. ամէ ց771. (800) ամ տեառն:

Յանկումն հարաւային տէրութեան հռովմայեցւոց, որ յարոյց զմեծ փոփոխութիւն յաշխարհի, եղև հիմն գրեթէ' այժմեան ընդհանուր եւրոպացի տէրութեանց և այն ամենայն ազգաց, որք յայնմ' ժամանակի փոքու իւիք յայտնիք՝ արդէն գլխաւորք և տիրապետողք.

### Ա. Գաղղիա:

Կլոդովիկ գլխաւորապետ գաղղիացւոց հը-
նազանդեալ իւրում իշխանութէ զբոլոր Գաղ-
486. ղիա, եդ հիմն միապետութեան նորին. այլ այս
միապետութի յետ մահուան Կլոդովիկայ են-
թարկի ներքին պատերազմաց, առաւել 'ի պա-
տուասիրութենէ և յատելութէ և 'ի խռո-

վութենէ երկուց դշխոյից Ֆրեդեկոնդիոյ և Բրունեգիլդեայ՝ հակամիտելոցն 'ի ծայրագոյն իշխանութիւն. յայսմ ժամանակէ հետէ իշխանութի թագաւորաց 'ի Գաղղիա եղծաւ գլխովին. իսկ իշխանութիւն կառավարչաց թագաւորութեան կամ պատրկաց՝ յանչափս զօրացաւ. երևելիքն 'ի կիւրապաղատից՝ էին իմաստունն Եբրոյին, քաջն Պիպին-Գերիստալ, որդի նորա վեհանձն Կարոլոս-Մարտելլոս և բանագէտն Պիպին-Կարճահասակ. որոց ունելով յանձինս զպաշտօն պատրկութեան, կառավարէին զմիապետութիւն գաղղիացւոց անկախ զթագաւորաց իւրեանց ժառանգորդաց թուլամորթն Մերովինկեայ: 'Ի վերջոյ ամենայնի՝ Պիպին Կարճահասակ ձեռնտուութեամբ պապին հռովմայ Զաքարիայ՝ նստաւ յաթոռ գաղղիացւոց: 474.

## Զ. Իտալիա.

Օդովակրոս իշխան հերքիւլաց գահավէժ արարեալ 'ի հռովմէական աթոռոյ զկայսրն Օգոստոս-Հռովմուլոս, բառնայ զարևմտեան տէրութիւն նորին, հաստատեալ զիշխանութիւն իւր յԻտալիա. իսկ արևելեան Գութք կառավարութեամբ հանճարեղն Թէոդորիկայ իրաւամբք կոչեցելոյ մեծ՝ յարձակեցան յԻտալիա, և աւերեալ 'ի նմա զիշխանութիւն Հերքիւ-
լաց՝ հիմնեցին աստէն զհզօր թագաւորութիւն 493.
արևելեան Գոթաց: Զօրագլուխք արևելեան կայսեր հռովմայեցւոց Յուստինիանոսի՝ Բելիսարիոս և Նարկեսս կործանեալ զայս թագա-
ւորութիւն, զմեծ մասն նորա միացուցին ընդ 556.
արևելեան տէրութեան հռովմայեցւոց, զորս

կոչեցին մեզ տէրութի Յունաց (Էկզարխատ)։

597. ՚Ի վերջոյ՝ Լոնգոբարդք առաջնորդութեամբ Ալբոյինայ մեջամուխ լեալ յԻտալիա՝ տիրեն հիւսիսային մասին նորա և հիմնեն անդէն ըզ-հզօր և զփառաւորագոյն թագաւորութիւն Լոնգոբարդաց, որ մնաց ցժամանակ Կարոլոսի Մեծի։

՚Ի կատարածի շրջանիս այսորիկ քահանայապետք Հռովմայ ստացան զմեծ ներգործութի յԻտալիա։ Պիպին-կարճահասակ և Կարոլոս Մեծ՝ բազում մեծացուցին զտէրութիւն և զիշխանութիւն նոցա, իբրև պարտաւորեալք երախտագիտութեամբ և յարգութեամբ, զոր ունէին առ նոսա՝ իբրև առ հոգևոր կառավարիչս քրիստոնէից։

՚Ի ժամանակս արշաւանաց Գոթաց և այլոց ազգաց ՚ի վերայ արևելեան տէրութեան Հռովմայեցւոց, բազումք ՚ի նոցանէ փախեան ՚ի կղզիս հիւսիսային մասին Ադրիական ծովու. ուրանօր տեղակալեալք, եդին զհիմն Վենետ-
450. կոյ։ Նաւագնացութիւն և վաճառականութի եղեն գործք պարապմանց նոցա. ըստ որոյ և Վենետիկ ոչ անագան եղև հարուստ և վաճառաւոր քաղաք։

## 3. Սպանիա։

Բազմաթիւ խուժանք Սվենաց, Վանդալաց, Ալանաց և այլոց ազգաց անդադար աւերեցին զՍպանիա։ Արևելեան Գոթք աքսորեալք յերեսաց Փրանկաց ՚ի Գաղղիոյ, յարձակեցան յայս նահանգ. յութներորդ դարու թափեալք անդր Արաբացիք զզէն յաղթութեան, հաստատեցին

անդ զաթոռ իշխանութեան իւրեանց ։ Այսու պատճառաւ Սպանիա էր 'ի սմին ժամանակի ը̅ իշխանութեամբ երկուց գլխաւոր ազգաց արևելեան Գոթաց և Արաբացւոց ։

## 4. Բրիտանիա ։

Յետ հեռանալոյ հռովմէական զօրուն 'ի Բրիտանիոյ՝ բնակիչք Սկովտիոյ հեղեալ յայս կողմն, կործանեցին զայն. բրիտանացիք զօգնութ̅ խնդրեն յանգղիացւոց և 'ի սաքսոնացւոց, և հնազանդ արարեալ զԲրիտանիա իշխանութե̅ իւրեանց, հիմնեն անդէն զեօթն անգղիական և սաքսոնական թագաւորութիւնս, զորս և կոչեցին ընդհանրապէս Եօթնապետութիւն ։ 426.

## 5. Արևելեան Հռովմայեցւոց (տէրութիւն յունաց ։)

Յետ անկման արևմտեան տէրութեան հռովմայեցւոց, արևելեան տէրութիւն նոյն եկաց զամս մինչև 1453. արժանին յիշատակաց 'ի կայսերաց թագաւորելոց 'ի նմա յայսմ շրջանի՝ է Յուստինիանոս անուանեալն մեծ. որ եդ օրէնս և պարգևեաց տէրութեանն՝ զերկուս զօրագլուխս Վելիսարիոս և Նարկիսոս. որք արարեալ զյաղթութիւն 'ի վերայ Գոթաց և Վանդալաց՝ հռչակեցին զանուն արևելեան տէրութեան. սակայն այսպիսի փառք չէին երկարատև. զի Պարսիկք, Լոնգոբարդք, Բուլղարք, Արաբացիք, Ռուսք և այլ ազգք սկսան վաղվաղակի ասպատակ սփռել 'ի սոյն տէրութե̅ 528—84.

## 6. Թագաւորութիւն Արաբացւոց։

Եօթներորդ դարուն Քրիստոսի արաբա-
571. ցիք եղեն ահեղ աշխարհակալք և գլխաւոր իշ-
խողք յարևելս։ Մահմէտ ծնեալ ՚ի Մէկքայ,
սկսաւ քարոզել զկանոնս հաւատոյ հիմնելոյ ի-
բրև ՚ի բաղումն յաւելորդապաշտութիւն. տե-
սեալ՝ թէ բնակիչք Մէկքայի դիմադառնանն նմա,
փախչի ՚ի Մէդինէ. որոյ բնակիչք ընդ փոյթ
622. ընկալան զուսումն նորա։ Այսպէս բորբոքեաց
սա ընդ ամենայն Արաբիա զյաղթական կորո-
վութիւն և զանընկճելի կիրս առ աշխարհակա-
լութիւն։ Առ ժառանգորդաւ սորա արաբացիք
առին Ասորեստանեայց, Միջագետաց, Պա-
ղեստինոյ, Թագաւորութեան Պարսից, հիւսի-
սային Ափրիկոյ, մեծ մասին Սպանիոյ և այլոց։
742. սակայն մեծ կիւրապաղատն գաղղիացւոց Կա-
րոլոս—Մարտելլոս բեկեալ զնոսա ահեղ պա-
տերազմաւ, ազատէ զԵւրոպիա յաշխարհա-
կալաց սոցա։

Այնածաւալ նահանգք պարտեալք յարա-
բացւոց՝ բաժանեցան յերիս Ամիրապետութիւնս
(Թագաւորութիւնս) արևելեայց, սպանիացւոց
և ափրիկեցւոց. յորում ժամանակի՝ նուազե-
ցաւ յարաբացիս կիրք առ աշխարհակալութիւն.
և որք զառաջինն էին ահեղ աշխարհակալք
զուրկք յամենայն լուսաւորութենէ, մինչև ա-
ւերել յԵգիպտոս զհռչակաւոր մատենադա-
րանն հիմնեալ ՚ի Պտղոմեայ, եղեն անձնամա-
տոյց մեծաւ եռանդեամբ յարհեստ և ՚ի գի-
796—803. տութիւնս. և ՚ի Թագաւորութեան արևելեան
ամիրապետութեան Հարունալրայ—Ռաշիտայ՝ ե-
ղեն լուսաւորք և բարեկիրթք։ Բաղդատ ա-
Թոռանիստ քաղաքամայր արևելեան ամիրապե-

տութեան և Կորդովայ գլխաւոր քաղաք ամի-
րապետութեանն ʼի Սպանիա, ʼի սմին ժամանակի
եղեն աղբիւրք բազում օգտակար գիտութեանց։

## 7. Թագաւորութիւն Հայոց.

ʼԻ Վռամշապհոյ՝ ցվերջ արշակունեան թագաւորութեան
հայոց. յ393. ամէ՝ ցամ տեառն 428.

ʼԻ բազմելոյ անտի յաթոռ թագաւորութե 393.
հայոց Վռամշապհոյ եղբօր Խոսրովայ արշակու-
նւոյ, կանգնեցաւ վերստին միապետական իշխա-
նութիւն հայոց ընդ հարկատուութեամբ եր-
կուց ինքնակալաց. յորմէ և աւուրք ազատու-
թեան. ծաղկեցաւ կրկին քաղաքականութիւն
և վաճառականութիւն ʼի Հայաստան։
Երջանկայիշատակ այս Վռամշապուհ հպա- 403.
տակեալ յունաց և պարսից, խոհեմ կառավա-
րութեամբ ʼի վերայ ազգին՝ վարէ յանդորրու-
զտէրութիւն իւր. Ձեռնտու լինի սրբոցն Սա-
հակայ և Մեսրովբայ ʼի գիւտ հայկական գրոց.
և ʼի լուսաւորութիւն ազգի կառոյց ամ ուրեք
դպրոցս. զորոց ամի հրամայէ յարքունիս ար-
ձանագրել ʼի յիշատակ հայրենասիրացն ամծա-
րեալ որոնց և ʼի պարծանս իսկ իւրոյ թագա-
ւորութեան ընդ դարս ժամանակաց։
Այսօրինակ սորին ջանասիրութեամբ պայ-
ծառացեալ եկեղեցիք Քրիստոսի, փոխեցան
բովանդակ պաշտօներգութիւնքն ʼի բարբառ
հայրենի, որ ցայն վայր էր յոյն և ասորի գրով։
Յայսու ժամանակաւ կալեալ զաթոռ թա- 415.

գաւորութեան Հայոց, Շապուհ որդի արքային
415. պարսից, յանմի ձիգն թափէր մուծանել զհայս
'ի պարսիկ կրօն. ըստ որոյ և Հայր իւր յարու-
ցանէր զխիստ հալածանս 'ի վերայ քրիստոնէից.
բայց մնացեալն Հայաստան ամենայն տեսչութբ
փրկեցաւ հրաշիւք. քանզի՝ երկոցունց հալած-
չացն հաւատացելոց՝ 'ի միում ժամանակի հա̃
մահ ժանտամահ:

Յընթացս այսոցիկ ժամանակաց մասն Հայաս-
տանի որ էր 'ի ձեռս պարսից՝ անապատանայր 'ի
սպառ: Արտաշէս որդի Վռամշապհոյ վերջին թա-
գաւոր յարշակունի տանէ, կալեալ զաթոռն,
հուսկ՝ յանուղղութենէ իւրմէ ըստ չարախօսե-
լոյ նախարարաց իւրոց 'ի դուռն արքունի՝ աք-
սորեցաւ 'ի խորին պարսկաստան, ուրանօր և
428. վախճան առնու կենաց՝ որով և վախճան արշա-
կունեան թագաւորութեան Հայոց.

8. Այլ ամենայն ժամանակակից ազգք:

1. Սաքսոնացիք բնակեալք առ կողմամբ Էլ-
բայի, Վեզերիոյ և ընդ մէջ գերմանական ծո-
վուն, էին առ. քաջութեան իւրեանց՝ ահեղք
յաչս ամենեցուն: Կարոլոս մեծ յետ բազում
ջանից և արիւնհեղութեանց, հնազանդեցուցա-
նէ զնոսա իւրում իշխանութեան:

2. Բաւարիացիք սերեալք յայժմեան թագա-
ւորութեան բաւարիացւոց՝ անկանին հուսկ՝ ընդ
իշխանութեամբ Կարոլոսի մեծի:

3. Բուլղարք զառաջին տեղակալեալք զկող-
մամբ Էդիլ գետոյ յայժմեան նահանգս Ռու-
սաց, ուր են Կազան և Նովգորոդ, ելին ան-
տի ապա և անցեալք ընդ Դունայ՝ բնակեցան

՚ի կողմանսն՝ որոյ այժմ անուն կոչի Բուլղարիա։

4. Բողարք թափառէին յայժմեան հարաւային Ռուսիա ՚ի սահմանս Տոնաւիսայ։

5. Հունգարացիք (մաճառք) աստանդեալ երկար ժամանակ ընդ արևելս հիւսիսային եւրոպէական և հիւսիսային ասիական Ռուսիոյ, կալան զբնակութիւն հուսկ ՚ի Հունգարիա, յայժմեան Մաճառստան։

6. Ռուսք տնաւորեալք ՚ի հիւսիսային կողմանս կասպիական ծովուն՝ եղեն վնասակար արևելեան տէրութեան հռովմայեցւոց։

7, Սլավէնք ՚ի ժամանակս արշաւանաց այլևայլ ազգաց յարևմտեան տէրութիւն հռովմայեցւոց, ելին յերեսաց Դունայի ՚ի հիւսիս. և յայնմ հետէ սկսան տարածիլ յԵւրոպիա. բազումք ՚ի նոցանէ բնակեցան յայժմեան հարաւային Ռուսիա. իսկ այլք ՚ի լիճս Իլմէնի և յափունս Վոլքովայ՝ հիմնեցին զՆովկորոդ հաստատեալ ՚ի նմա զհասարակապետական կառավարութիւն. բնիկ յատկութիւն նոցա՝ էր քաջարութիւն, վեհանձնութիւն, հիւրընկալութիւն և արդարախոհութիւն. գլխաւոր աղբիւրք հարստութեանն նոցա էին հօտարածութիւն և երկրագործութիւն։

Հաւատ Սլավենաց էր կռապաշտութիւն ըստ օրինակի հռովմայեցւոց և կռապաշտ Յունաց. ընդունէին նոքա զբազմութիւն աստուածոց և աստուածուհեաց. Պերուն համարիւր առ նոսա գլխաւոր աստուած։ Վոլոս՝ պաշտպան. Կոլէդա՝ աստուած խաղաղութեան. Սվէտովիդ՝ որոյ գլխաւոր մեհեան էր ՚ի վերայ կղզւոյն Ռուկենայ՝ ած պատերազմի. այս ած ըստ կարծեաց նոցա նախակուշակ լինէր մարդկան՝ զապառնւոյ. բայց յայսմանէ ՚ի մոլորութեան անդ

ունէին նոքա զկախարդս և զկախարդուհիս, հաւատացեալք և ՚ի յաւերժահարսունս։

# ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ։

՚Ի Կարոլոսէ Մեծէ՝ ցխաչակիր զօրս. 771 ամէ (800) 1093. (1100) ամ Տեառն։

## I. Գաղղիա։

771—814. Ազգաւորէ՛ Գաղղիոյ Պիպին — կարճահասակ զամս եօթն և տասն. որում ժառանգորդէ որդի նորին Կարոլոս. որոյ արդիւնաւորեալ ըզվաստակս զօրաց իւրոց, մեծացուցանէ զխաղաղտէրութիւն իւր. նուաճէ զթագաւորութիւն Լոնգոբարդաց. բաւարիացւոց և զմասն հիւսիսայինն Սպանիոյ. միայն սակսոնացիք ընդ կառավարութեամբ զօրագլխի իւրեանց Ուիտէկինդայ երկար արիութեամբ հակառակեցան սմին. մարտուցեալ ընդ նոսա Կարոլոսի զամս 33. ահեղ պատերազմաւ՝ հնազանդեցուցանէ զնոսա իւրում իշխանութեան: Այսոքիւք աշխարհակալութեամբք միապետութիւն Գաղղիոյ ընդարձակեցաւ ՚ի բալթիական ծովէ մինչև յԷբր գետ (՚ի Սպանիա) և յԱտլանդեան ծովէ մինչև ցգետն Ռաբայ՝ (՚ի Հունգարիա)։

Ջանացեալ Կարոլոսի տալ իւրում թագաւորութեան զբարօրութիւն, հրատարակէ զհասարակօգուտ օրէնս, կանգնէ դպրոց ՚ի Գաղղիա և առ պալատամբ իւրով զճեմարան, կազմէ զնաւախումբս և առ հասարակ հիւսէ զտէրութիւն իւր ՚ի վիճակ բարեկարգ. փառք սորա եւս առաւել մեծանայր, յորժամ

քահանայապետն Հռովմայ Լևոն Գ. գիտացեալ զնա արժանի օգնութեան պսակին՝ կոչեաց արև- 800.
մտեան կայսր Հռովմայ:

Յետ մահուան սորա, Գաղղիա կրեաց զմեծ խռովութիւն ՚ի թուլամորթ ժառանգորդաց նորա. և յայնմհետէ Նորմանացիք 1. սկսան աւերել զայն. այսու հանգամանօք զրկեցաւ տունն Կարոլոսի յարքայական պսակէ. քանզի հռչակաւորն արդեամբք և սերնդովք Հուգոյ 938.
Կապետ ամբարձաւ յաթոռ Գաղղիոյ:

## 2. Իտալիա:

՚Ի սմին ժամանակի հարաւային Իտալիա եղծանէր յարաբացւոց և ՚ի Նորմանաց. գահն Հռովմայ հզօր զօրացեալ կառավարեաց զգործս Եւրոպիոյ. Վենետիկ պատաղեալ էր իբր ՚ի բազում ՚ի ծովագնացութիւն և ՚ի վաճառականութիւն:

## 3. Սպանիա:

Յայսմ շրջանի գլխաւոր պատերազմող ազգէին Արաբացիք և Վեստ—Գոթք. արաբեան Սպանիա եհաս ՚ի մեծ կրթութի և բարօրութիւն. ծաղկեալ էր ՚ի նմա գիտութիւն, արհեստ, երկրագործութիւն և վաճառականութիւն. տէրութիւնք Գոթաց ՚ի Սպանիա՝ էին արրակոնացւոց և Կաստելացւոց:

1. Ընդհանուր անուամբ Նորմանացիք՝ իմանին վաղեմի բնակիչք Դանիոյ, Սուեդիոյ և Նորվեգիոյ:

### 4. Անգղիա։

827. Եգպերտոս մին յանգղիական թագաւորաց սակսոնացւոց հնազանդեցոյց ի ներքոյ իշխանութեան զընդհանուր Բրիտանիա և յայս ժամանակէ հետէ այս կղզին ստացաւ անուն Անգղիա.
827—901. Նորմանացիք յարձակեցան 'ի սոյն թագաւորութիւն. բայց Ալֆրետոս արքայ ազատեաց զայն յայսոսիկ ահեղ աշխարհակալաց, և երևելի քաջութեամբ արար զյաղթութիւն բազում 'ի վերայ Նորմանացւոց և անդորրացոյց զԱնգղիա. հրատարակեաց զօրէնս և առհասարակ քաղաքացւոց զանձրուն իւր. ընդարձակեաց անխոնջ աշխատութեամբ 'ի մէջ հպատակաց իւրոց զկրթութիւն և զուսումնութիւն. և առ այս նպատակ կանգնեաց Օքսֆորտեան համալսարան։

Վահանայ յետ մահուան Ալֆրետոսի և երջանկութիւն Անգղիոյ։ Դանիացիք և Նորմանացիք տիրեն նմա. 'ի վերջոյ Դուքորգ–Նորման Վիլգելմ աշխարհակալ հնազանդեցուցանէ զԱնգղիա ներքոյ իշխանութեան։

### 5. Գերմանիա։

Գերմանիա բաժանի 'ի Գաղղիոյ յետ մահուան Կարոլոսի Մեծի և լինի առանձին թագաւորութիւն, և յընթացս ժամանակաց՝ հզօրագոյն. փառք սորա ևս առաւել մեծանայր, յորժամ Յովհաննէս երկոտասաներորդ, քահանայապետ Հռովմայ զրկեալ զԹուլամորթ յետագայս Կարոլոսի Մեծի 'ի կայսերական պսակէն, եհան զԳերմանիա յարժանաւորութիւն թա

գաւորութեան անուանեալ զԹագաւորն Գերմանիոյ զ( )տոն առաջին՝ կայսր արեւմտեան Հռոմայեցւոց. սա և ժառանգք սորա կալեալ զանուն կայսերութեան և լեալ մեկենաս գիտութեան, սփռեցին 'ի Գերմանիա զկրթութի և զուսաւորութիւն։

6. Տէրութիւն արեւելեան Հռոմայեցւոց։

Այս տէրութիւն 'ի յետին դարու անդադար դղրդեալ 'ի ներքին խռովութեանց և յարտաքին թշնամեաց՝ խոնարհեցաւ 'ի յոռութիւն. իսկ հռչակաւոր կայսրն Յովհաննէս Աիմեան կալաւ զզօրութիւն և զփառս նորա. 'ի վերջ մետասաներորդ դարու նոր Թագաւորք եղեն աՀեղ վասն Թշնամեաց 'ի Թուրքս։ 969—76.

7. Թագաւորութիւն Արաբացւոց՝
Թուրքք և Մոնգոլք։

Հռչակաւոր ամիրապետութիւն արեւելեան արաբացւոց գտեալ 'ի սմին ժամանակի ընդ կառավարութեամբ Թուլամորթ ամիրայից, զրկեցաւ յառաջին փառաց իւրոց և բեկաւ 'ի մասունս։ Թագաւորութիւնք կրթեալք 'ի նոցունց եղեն հնազանդ Թուրքաց, որք էին ընդ կառավարութեամբ դիւցազնի իւրեանց Սաղադինայ. որք և աշխարհակալեալք հաստատեցին զիշխանութիւն իւրեանց յարեւելս։ 'Ի վերջոյ 'ի բաժանեալ մասանց Ասիոյ նորոգ երևեցան ամեհի աշխարհակալք մոնգոլք, կառավարիչ նոցա Տէմուչին (Ջէնկիզ խան) խորտակէ զբազում Թա-

գաւորութիւնս յՄիսիա . որոյ ժառանգք՝ի ծառայութիւն ածեալ զՄուսիա, թափեն զարհաւիրս ընդ ամենայն Եւրոպիա :

## 8 . Հայաստան

Զօրէ՛ հարցէ՛ր վերստանալ պատերազմունք հայոց յանկախանութեան ժամանակի յաւուրս նախարարաց, ներքաղաքացւոց և օտարաց :

՚ի 439 . ամէ (461) 850 . ամ՛ տեառն :

Բազմաժամանակեայ պատերազմունք գետօրէն յորդեալք ՚ի Հայաստան, սրբեցին յողողեցին զընդհանուր փառս և զվայելչութիւն առ հասարակ իշխանութեան նորա, զթագաւորութեն յաջողածեան զօրութիւն, զեկեղեցեաց քրիստոսի կարգ և բարեզարդութիւն, հոգևորականաց առ ածայինս ջերմեռանդութիւն և զամենայն իշխանաւորաց հայոց զօրաց և զօրապետաց նոցին ոյժ և քաջասրտութի, որովք անշըքանայ Հայաստան յընթացս չորից հարիւրոց վաթսուն և միոյ ամաց, նուաճեալ ՚ի պարսիկ մարզպանաց և յաւէտ ՚ի հայազգի ուրացողաց :

Յայսու ժամանակաւ Յազկերտ արքայ
450 . պարսից առաքեալ զպարսկադէն զուսուցօրինաց իւրեանց առ Հայս, բռնադատէր կռապաշտել, որում դիմադրաւ Հայք յառաջ մատուցեալ վասն քրիստոնեական հաւատոց ընդ կառավարութեամբ մեծ սպարապետին Վարդանայ Մամիկոնենի սուրբ կոչեցելոյ, մարտ եդեալ կոտորին ՚ի նոցանէ ոգիք իբրև 1036 . ՚ի դաշտին Աւարայր գեղջ, կոչեցեալ յանուն Վար-

դանայ Մամիկոնենի՝ Վարդանանց պատերազմ։

Այսու պատճառաւ նահատակին և դասք հոգևորականաց կալանաւորեալք ՚ի բանտի առ հաստատուն կալոյ ՚ի վերայ ճշմարտութեան հաւատոյ և յեկեղեցին քրիստոսի. և քանզի յառաջադէմ ՚ի նոսին Ղևոնդ երէց գտանէր ՚ի պատասխանատուութիւնս և ՚ի հարցափորձս զիրաց հաւատոյ, բովանդակ մարտիրոսութիւն սրբոցն յանուն նորա կոչի՝ Ղևոնդեանց նահատակութիւն։

Յայնմ հետէ թէ և պարսիկք անվեհեր ձեռն արկանէին ՚ի հայաստան աւարել զկապուտ կողոպուտ ՚ի հայազգեաց, սակայն բնական քաջարութիւն նախարարաց ոմանց և սէր առ հայրենիս, թեւադիր լեալ նոցին ընդդէմ կալ անիրաւ պահանջմանց և բռնակալութեց պարսիկ մարզպանաց, յորուցանէր զարս քաջս ՚ի զէն պատերազմի անօրինացն հակառակ։ Վահան Մամիկոնեան եղբօրորդի Վարդանայ մեծի նախանձախնդիր քրիստոսական հաւատոյ ընդ բարեկաւութեանց բարուց քաջութբ և խոհական խորհրդովք դաշնադրեալ ընդ հաւատապահ նախարարազունս հայոց ՚ի դաշտին Շիրակայ, պատրաստի ՚ի մարտ ընդ պարսից յաղթութիւն եկեղեցւոյ քրիստոսի ՚ի կասպակրօնից արևապաշտութեան. զօրք նորա հարուածեն զթշնամին առ Մասիս լերամբ՝ յԱրկուռի գեղջ։ Յերկրորդում նուագի պատերազմին Վահան ինքնին ախոյեան հանդիսանայ ՚ի վերայ պարսից յԱրտազ գաւառի. խօսի զխաղաղութե ընդ պարսիկս առ Ներ գաւառաւ. գնայ առ արքայ պարսից և մեծարեալ ՚ի նմանէ՝ դառնայ ՚ի հայս, առեալ և զմարզպանութիւն Տին՝ հիմնայատակ առնէ զկրակատունս, որոց առ ու-

րացութեանն ուխտադրաւ հայոց ոմանց յաճա-
խեալն էր 'ի հայաստան. և զառ յարշաւանացն
485. պարսից զեկեղեցիս աւերեալս վերականգնէ և
փոխանակ կռոցն անշէջականաց՝ զտունս աստուա-
ծոյ տնտեսէ ձեռնտու ինքեան արարեալ զՅով-
հան կաթողիկոս մանդակունի. յորոց 'ի վր̅
ամենեցուն տեսուչ կարգէր զՂազար փարպեցի
պատմաբան: Սա և հուսկ դրժեալ ուխտին ը̅
պարսից՝ անկանի փոքու գնդաւ 'ի վերայ մո-
գուցն բռնելոց 'ի տեղիս տեղիս յերկրին հայոց. և
ածեալ զպարսիկ վերակացուս 'ի սուր սուսերի՝
քաջաձեռն յաղթութեամբ հուսկ ուրեմն ար-
510. ժանանայ երջանիկ մահուան 'ի խորին ալեզար-
դութեան յետ երեսուն ամի իշխանութեան
604. իւրոյ: Յետ այսպիսեաց աստի՝ քաջագործութբ̅
Գայլ — Վահանայ 'ի վերայ պարսից 'ի հանդար-
տութեան թողու զերկիրն առ ժամանակ մի. հուսկ
ամենայնի՝ հայաստան բոլորովին անկեալ ընդ
իշխանութեամբ պարսից, լինի հարկատու որպէս
էրն յառաջագոյն. և 'ի ձեռն պարսիկ մարզպա-
նաց աւքատանայ առաւել քան զառաջինն, ըստ
որոյ և իշխանք հայոց ոչ իշխէին յառնել 'ի վր̅
նոցա. այլ հպատակեալ նոցին անհաճոյ գնացից՝
այր իւրաքանչիւր քամակ շրջեալ միաբանու-
թեան՝ զգուշանային անձանց 'ի լեռնակողմանս
և յամուրս աշխարհին:
691. Հայք ծանրացաւուեմն եղեալ յանօրէն բռ-
նակալաց անտի՝ մտանեն ընդ իշխանութբ̅ Յու-
նաց տուեալ զհարկ երկրին նոցա միայնոյ. հագա-
րացին մուտ գործեալ 'ի հայաստան, հարկանէ
զհայս 'ի բերան սրոյ և ապստամբեցուցեալ
'ի կայսերէն՝ հնազանդէ իւրում իշխանութե̅.
առ այս ապստամբութիւն խաղայ կայսր ինքնին
'ի հայս և նուաճէ զնոսա. իսկ հագարացին վե-

րատին զօրացեալ տիրէ Հայոց և յայնմհետէ զՀետ լինին արբուցանել զսուր իւրեանց յարիւն աւագանւոյն Հայոց։ Բուղայ ոստիկան կալեալ ՚ի Տարօն գաւառի զմարտիկ զօրս ՚ի Հայոց, մաշէ ՚ի սուր. զիշխանս և զտեարս առ ամիրապետն առաքէր. Թողեալ զռամիկս և զքաջազեղունս փոխել զօրէնս յօրէնս Հագարացի. 1։

## Հիւսիսային Տէրութիւնք։

### 9. Սուէդիա. 10. Դանիա. 11. Նորվեգիա. 12. Պողոնիա։

՚Ի մետասաներորդ դարու հաւատն քրիստոնէական տարածեցաւ յայսոսիկ տէրութիւնս, յորմէհետէ պատմութիւն նոցա յայտնագոյն եւս եղև և արժանահաւատ. բնակիչք Սուէդիոյ, Դանիոյ, և Նորվեգիոյ էին ազգք քաջք և պատերազմականք. բազմաթիւ խուժանք նոցա աւերեցին զընդհանուր Եւրոպիա։

### 13. Ռուսիա։

Սլաւէնք Նովգորոդայ միաբան եղեն ՚ի վերջոյ հաստատել զմիապետական կառավարութի. յայս միաբանութիւն հրաւիրեն զերիս եղբարս 860.

1. Էր սա կիսաբէկն նոյն և սա հայրէնիս, ո՛րմ հետաշօտէր աչք մեր և կա ՚ի բարբարոսացն ժամանակի, բոբոքեալ ընդդարձակէր ՚ի հայաստան. հանգնէին դպրոցս ըստ կատարա՛յ կատարա՛յ և օրըստօրէայ համապատասխանութեամբ եաշխանայք Բէ- կրակիւայ յաշկէ մերամ։

զՎարեագօ — Ռուսս (1) զՌուրիկ, զՍինէոս և զՏրուվոր. որոց բովանդակ գաւառ, յորս բնակէին՝ կոչեցաւ Ռուսիա. յետ մահուան
862. Սինէոսի և Տրուվորայ, Ռուրիկ կալեալ զբնա-կութիւն իւր 'ի Նովգորոդ, դնէ զհիմն տէ-րութեան Ռուսաց և թագաւորէ զամս տասն և եօթն:
862—79. Ժառանգ իշխանութեան գահի նորա Օլեգ իշխէ բովանդակ երկրին 'ի Նովգորոդայ մինչև
879—912. ցդժուարանցանելի տեղիս Դնեպրայ. և հաս-տատեալ զաթոռ իւր 'ի Կիեվ, մեծամեծ քա-ջագործ յաղթութեամբք ի վերայ յունաց.
912—45. որդի Ռուրիկայ կոչեցեալ Իգոր պահպանեաց զերկիրն՝ զորս նուաճեալ էր նախնեաց նորա, և կալաւ զարժանաւորութիւն իւրոյ տէրու-թեան. ամուսին նորա Օլգայ կամ Հեղինէ (սբ) արժան յիշատակ է 'ի տէրութեան ռուսաց՝ զի
955. ընկալաւ զքրիստոնէական հաւատս 'ի Կոստան-դնուպօլիս. որդի Իգորայ քաջ պատերազմա-
845—72. կանն Սվեատօսլաւոս դնէ 'ի մտի հաստատել զաթոռ իւր 'ի Բուլղարս, յափունս Դունայ գետոյն 'ի Պերեասլավ, յորմէ ծագեցան պա-տերազմունք ընդ յոյնս. ուրանօր Սվեատօսլա-ւոս հռչակեալ՝ արար զինքն բազում քաջագործ յաղթութեամբք և պատերազմական անձնըն-ծայութեք. թէպէտև ոչ կարաց բոլորովին նուաճել զԲուլղարիա, սակայն զէն նորա եր-կիւղ էարկ 'ի վերայ արևելեան տէրութեան, մինչև բռնադատել յարգել զանուն Ռուսաց:
Սվեատօսլաւոս սպանի 'ի Պեչենեկաց. զենի

1. Վարեաքօ — ռուսք էին անուն կարծեաց ժողովոց 'ի մէջ Վարեկաց կամ Նորմանաց. և ըստ ոմանց հատուա-ծոյ բնակէին 'ի Սուէտիա, կոչեցեալ Ռոսլագէն:

որոյ ծագեցան 'ի Ռուսիա պատերազմունք 'ի
մէջ որդւոց նորա Յարօպօլկայ՝, Օլեկայ և
Վլադիմիրի. Հուսկ ապա Վլադիմիր տիրեալ
Ռուսիոյ, զիշխանութիւն իւր անմոռաց արար
վասն ռուսաց, զի ծանուցեալ զճշմարտութիւն 980—1050.
քրիստոսական հաւատոց՝ մեծաւ փառօք ընկա-
լաւ զայն, զորոյ զլոյս ճշմարտութեան սփռեաց
'ի տէրութեան իւրում. ընդ քրիստոնէական
հաւատոց՝ մո՛ւտ արարին 'ի ռուսաստան գի-
տութիւնք, արհեստք և քաղաքական լուսաւո-
րութիւնք:

Վլադիմիր ըստ օրինակի հօր իւրոյ և ըստ
բերման ժամանակին բաժանեաց զՌուսիա 'ի
մէջ որդւոց իւրոց 'ի մասունս մասունս. ուստի
ծագեցան ներքին պատերազմունք, որոց վաղ-
ճան առ երջանկութիւն Ռուսիոյ եղև. զի Յա- 1019—54.
րոսլաւ որդի Վլադիմիրի ամբարձաւ յաթոռ
իշխանութեան Կիեվայ. սա անուանի' է 'ի պատ-
մութեան ռուսաց իմաստութեամբ, կրթութբ
և առաւել նախանձաւորութեամբ 'ի քրիստո-
նէական հաւատոյն. սիրով՝ առ հայրենիս և
իւրով օրինագրութեամբ՝ որք ասին կանոնա-
գիրք դատաստանական, անուանեալ Ճշմար-
տութիւն Ռուսաց:

Յետ մահուն Յարոսլաւայ յարեան 'ի բոլոր
Ռուսիա ներքին պատերազմունք. յորոց թու-
լացեալ Ռուսաց, անձնատուր լինին Մոնղո-
լաց. բայց այսուքիկ ժամանակք ներքին պատե-
րազմաց և թշուառութեանց հայրենեաց նոցին՝
հռչակեն կենցաղավարութեամբք, պատերազ-
մական գործովք և առաքինութեամբք Վլա- 1115—23.
դիմիրի Մոնոմաքոսի առն քաջասրտի և իմաս-
տուն քրիստոնէի, որոյ յիշատակ է կտակն՝ զոր
եթող նա զաւակաց իւրոց:

## 14. Թագաւորութիւն Բագրատունեանց։

յԱշոտոյ Բագրատունւոյ՝ ցՍմբատ տիեզերակալ անուանեալ

յ885. ամ. տեառն՝ ցամն 980։

Աշոտ ՚ի Բագրատունեաց տանէ բարւոք կա-
885. ռավարութեամբ պայազատեալ զիշխանութիւն Բագրատունեաց, ՚ի միջնորդելոյ նախարարացն արժանի՛ լինի թագաւորական պսակի յերկուց ինքնակալութեանց յունաց և պարսից. Նորոգէ զաթոռ թագաւորութեան Հայոց և ածէ ՚ի նա զամենայն կարգ բարեվայելչութեան։

Յայսու ժամանակաւ բազմաց ՚ի նախարա-
916. րացն նախանձ ընդ ժառանգսն Սմբատայ բերեալ և երկձեղքեալ ՚ի միմեանց՝ զարիւն ըղ միմեանց թափէին. յորոււստ ոգի առեալ և պարսից կրկին յարձակեցան յաւեր աշխարհին. բոց նախարարացն խռովութեանց տեսեալ և գեղջկականաց և ստորադրելոց առ հասարակ, այր իւրաքանչիւր ՚ի զէն ընթացեալ ողողեն զհայաստան արեամբ ազգակցաց, որովք եղև համարձակ մուտ օտարաց թշնամեացն ընդ համօրէն Հայաստան։ Յայսպիսի ահեղ պատերազմաց պատճառեցան թշուառութիւնք ՚ի Հայս. քանզի՝ առ անգործ մնալոյ անդոց անդաստանաց, պակասեցան բերք և եղև սով սաստիկ։

՚Ի սմին ժամանակի երեք հակառակաթոռ թագաւորութիւնք Հայոց լինին. Հարազատ թագաւորութիւն Աշոտոյ երկրորդի ՚ի Բագրատունեան տանէ ՚ի Շիրակ։ Գագկայ Արծրունւոյ ՚ի Վասպուրական աշխարհ, և Աշոտոյ շապուհեան ՚ի Դվին. որոց առաջին և վերջին սաստիկ հարուածովք յարուցանեն զպատերազմ։

Ընթացս իբր 38 · ամաց բնակիչք Հայաստա-
նի պակուցեալք յասպատակութեանց և 'ի հի-
նից ևս և յանխնայ կոտորածէ թշնամեաց, թո-
ղեալ զկալուած սեպհականութեան իւրեանց,
փախստեայ անկեալ յամուր ամրոցս, 'ի լերինս,
յայրս և յօտար աշխարհս, կային 'ի դառնագին
նեղութեան. և յաւէտ նախարարք զերկիւղ 'ի
միմեանց կրելով, որջացեալ էին 'ի յորջս ամ-
րութեան և ոչ փութային գալ յազատութիւն
հայրենեաց իւրեանց, ձեռն տալ օգնականու-
թագաւորաց իւրեանց:

Այլ յամին 961 · առ հասարակ անդորրաց-
եալ Հայաստան 'ի պատերազմաց, գաղթականքն
դիմեցին 'ի հայրենիս, լեալ զօրավիգն թա-
գաւորաց իւրեանց 'ի բազում յաստուածահա-
ճոյ շինութիւնս վանորէից, եկեղեցեաց և քա-
ղաքական պայծառութեանց, յաւուրս թա-
գաւորութեան Աշոտոյ ողորմած կոչեցելոյ:

Արևելք էր թագաւորանիստ քաղաքն Անի
վաճառականութեամբ և ազգային տուրևա-
ռութեամբ և հարստութեամբ և գերապանծ
բրգամբք և ահեղ շինուածովք 'ի թագաւորու-
թեան որդւոյ ողորմածի՝ Սմբատայ տիեզերա-
կալ անուանելոյ. որ խաղաղութեամբ ապահո-
վեալ զաշխարհ իւր պայծառացոյց զՀայաստան 993 ·
շինուածովք եկեղեցեաց և քաղաքաց. և զար-
քունական քաղաքն իւր Անի գերազանցին տե-
սողաց գործեաց. ուրանօր էր յայնմ ժամա-
նակի և աթոռն հայրապետական:

## 15. Ժամանակակից ազգք:

1, Հունգարացիք (Մաճառք) բնակեալք 'ի Հունգարիա, յընթացս ժամանակաց եղեն ազգք քաջարիք, հզօր և բարեկիրթք. արհեստ գիտութե տարածեցաւ 'ի նո̅ ը̅ քրիստոնէական հաւատոց. և հռչակաւոր արքայ նց̅ Ստեփաննոս (ո̅ր) 'ի լոյս էած զօրէնս: 2, Բողարք: 3, Պոլոնացիք: 4, Պեչենեկք. Թափառէին յափունս Սոկայի, Դոունայի, և Դնեբր գետոց. որք կենցաղավարէին յափշտակութեամբք, առնել լով զաւազակութի 'ի Ռուսիա և յարևելեան տէրութիս հռոմայեցւոց:

[illegible] վերջնոյ [illegible] ընդ որս [illegible] Եւրոպիա էր նախարարական կառավարութիւն հաստատեալ էր 'ի բազում 'ի Եւրոպայոյ, որոց իշխանք կամ վասալք, տիրեցին բազում [illegible] 'ի թագաւորութիւնս, որոց իշխանութիւն [illegible] 'ի [illegible]. 'ի [illegible], [illegible] ընդդէմ [illegible] և թագաւորաց [illegible], ծագեցան մեծամեծ աղմուկ և անկարգութիւնք ընդ որ թագաւորութիւնս. յառաջադիմութիւնք [illegible] էր [illegible]. Երկրագործութիւն և վաճառականութիւն անկեալ էին [illegible]. օրէնք 'ի այն ժամանակի [illegible] յանդգնութեամբ և 'ի նախարարութեան. և ընդ այսմ ո'չ կարէին հաստատել [illegible] թագաւորութիւն և պահպանել [illegible] 'ի [illegible] հզօրին. [illegible] ժամանակս մա'րթ է [illegible] հաստատ [illegible] ընդդիմանալ ընդ որս [illegible] թագաւորութեանն:

# ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ։

'Ի պատերազմաց խաչակիր զօրաց՝ ցգտումն Ամերիկոյ։
'Ի 1095․ (1100) ց1492․ (1500) ամ տեառն։

'Ի վերջ մետասաներորդ դարու գրեթէ ը̃- 1095—1201․
հանուր Եւրոպիա զինեցաւ ընդդէմ Ասիոյ և
յանձամ եղեն բազմաժամանակեայ արիւնա-
հեղ պատերազմունք քրիստոնէից ընդ ազգս
անհաւատից՝ որք 'ի պատմութիւնս ասին պա-
տերազմունք խաչակիր զօրաց․ Եւրոպացիք վա-
ռեալք քրիստոնէական հաւատով փութով փու-
թային կորզել 'ի ձեռաց Թուրքաց զԵրուսա-
ղէմ և զերկիրն Պաղեստին․ ուր մարմնացեալ Քն̃
քարոզեաց զա̃ծային վարդապետութիւն իւր․
ընկալաւ վասն փրկութեան մերոյ զչարչարանս
և մահ․ յարեաւ փառօք և համբարձաւ յեր-
կինս։ Այս ձեռնարկութի̃ խրախուսեաց զԵւ- 1095․
րոպիա՝ պիկարդեան անապատաւորն Պետրոս 'ի
ժամանակս քահանայապետին հռովմայ Ուրբա-
նեայ Բ̃․ ամենեքեան, որք մասնակից այսմ լի-
նէին, կրէին 'ի վերայ իւրեանց զնշան սրբոյ խա-
չի․ յորմէ անուանեցաւ այս պատերազմ՝ խա-
չակրաց։

Պատերազմունք խաչակրաց տեւեալք զամս
իբր 200․ գլխաւորք 'ի նոցունց էին չորք․ ի-
րաքանչիւր 'ի նոցանէ տեւեաց զամս իբր 50․
առաջինն վաղճան էառ այնու, զի քրիստոնեայք 1096—1146․
յետ բազում ձգանց և արիւնահեղ մարտից՝
տիրեցին Երուսաղէմի, և զիշխանն Կոդոֆրե-
դոս դուքսն Պուլիոնայ՝ կացուցին արքայ Երուսա-
ղէմի․ Մե՛ծ եղև ուրախութիւն քրիստոնէից,
այլ ոչ բազմաժամանակեայ․ քանզի՝ Թուրքք
վերստին տիրեալ նմին, յարուցին զերկրորդ

պատերազմ․ որ չեղև երևելի՝ յառաջադիմու-
1146–1187. թեան քրիստոնէից․ յերրորդումն գտան արքայն
1187–1246. գաղղիացւոց Փիլիպպոս–Օգոստոս, և արքայն
անգղիացւոց Ռիչարդ (առիւծասիրտ)․ յոխորտու-
թենէ և յանհամաձայնութէ ծագելոյ ընդ մէջ
նոցա, քրիստոնեայք ո՛չ կարացին յաղթանակել
1246–291. ՚ի սմին պատերազմի ։ Չորրորդ պատերազմն
խաչակիր զօրաց արար երևելին գործովք և պան-
ծալին առաքինութեամբք արքայն գաղղիացւոց
Լուդովիկոս իններորդ, զոր հռովմէական եկե-
ղեցին ճանաչէ սուրբ․ սակայն այնինչ սոյն սա զի-
նէր ՚ի ճակատ թուրքաց յԱֆրիկէ, Մամելուքք
տիրեցին Երուսաղէմի և ընդհանուր Պաղեստի-
1291. նոյ․ յայնժամ դադարեցան խաչակրաց պատե-
րազմունք ։

Պատերազմունք խաչակրաց են վսեմագոյն
անցք ՚ի պատմութեան միջին դարու, և հետե-
մունք նոցին՝ զգալի՛ ի մէջ Եւրոպիա․ այսոքիկ
պատերազմունք կործանեալք զբազում ազգս,
արժեցին մեծագոյն ծախուց․ սակայն ՚ի մէջ
այսոցիկ վնասակար հետևմանց՝ գտան և օգտա-
կարք․ որք բազում նպաստեցին բարձման նա-
խարարական կառավարութեան և հաստատու-
թեան միապետական իշխանութեան այնու, զի
բազում տէրութիւնք վասալաց, որք անկան
՚ի ժամանակս այսոցիկ պատերազմաց Եւրոպիա,
եղեն ընդ իշխանութեամբ թագաւորաց․ ՚ի վե-
րայ այսր ամենայնի՝ խաչակրաց զօրք վերադար-
ձեալ յԵւրոպիա, տարածեցին զի՛նչ ինչ կրթու-
թիւնս Եւրոպիա, ստացեալս յարևելեան տէ-
րութէ ։ Վենետիկ և այլ իտալացի քաղաքք ստա-
ցան զօգուտ յայսոցիկ խաչակիր զօրաց․ հաստու-
ցանելով նոցա զամենայն հարկաւորսն և առա-
քելով զնոսա ծովու՝ Եւրոպիա․ այսպէս իւրա-

ցուցեալ ինքեանց զբռնաւորական փաշայականութիւն 'ի հարաւային Եւրոպիա և 'ի բազում ասիական նահանգս, ստացան զմեծ հարստութիւն: 'Ի այն ժամանակի հիւսիսային քաղաքք եւրոպացւոց Համբուրգ, Լիւբիկ, Պրեմէն, Նովգորոդ, Պսկով և այլք եդին զդաշն 'ի միջի, անուանեալ 'ի պատմութիւնս գանսայեան դաշնադրութիւն, ընդհանուր տարածել զվաճառականութիւն. որում հետևեցան և քաղաքք Հոլանդիոյ և Անգղիոյ. սովաւ խաչակիր զօրք զարթուցին յԵւրոպիա զոգի վաճառականութեան և ազգային տուրևառութեան. իսկ հարստութիւն, զոր ընկալան բազում ազգք 'ի վաճառականութենէ, ետ նոցա հնարս գտանելոյ զքաղաքական ազատութի. և որովհետև բազմութիւն վասսալաց սպանեալ յԱսիա կամ ըստ այլոց որոց և իցէ պատճառաց ոչ վերադարձաւ յԵւրոպիա, ազգ, որք էին ընդ իշխանութեամբ նոցա՝ եղեն ազատականք. յայսմ ժամանակէ հետէ բարձաւ արծաթագին ծառայութիւն յԵւրոպիա և սկիզբն եղև ազատութեան քաղաքականաց. ընդհանրապէս յետ պատերազմաց խաչակիր զօրաց, եւրոպէական թագաւորութիւնք հասին 'ի բարւոք աստիճան կատարելութեան:

## I. Գաղղիա:

'Ի ժամանակէ անտի խաչակիր զօրացն արշաւանաց, նախարարական կառավարութիւն 'ի Գաղղիա սկսաւ անկանիլ. իսկ միապետական իշխանութիւնն՝ հաստատիլ. յառաջատուի նորին գերապանծ իմն ցուցաւ 'ի ժամանակս Լիւ-

1226—70 · դովիկեայ իններորդի արքայի իմաստնոյ և առա-
1285—314 · քինւոյ · Փիլիպպեայ չորրորդի գեղեցկի, որ ար-
ժանայիշատակ է սահմանադրութեամբ ՚ի մէջ
364—80 · Գաղղիոյ Թագաւորական ժողովոյն : Կարոլոսի
1416 · հինգերորդի իմաստնոյ · մանաւանդ յաւուրս
Լուդովիկեայ մետասաներորդի · սոյն այս կարի յոյժ ներգործեաց առ հաստատութիւն և պահպանութիւն կարգի և անդորրութեան ՚ի սոյն Թագաւորութեան :

## 2 · Իտալիա ·

Ազատականութիւն և ազգային տէրութիւն ՚ի գործունէութիւն էած զընդհանուր Իտալիա · ըստ որոյ և այս աշխարհ, որ յառաջն էր չքաւոր՝ եղև ամենահարուստ · աստանօր ոչ անագան երևեցան բազում հասարակապետութիւնք · յորոց հռչակաւորքն էին վենետիկեանն և Փլորենտիոյ · ըստ կառավարութե Մեդիկեանց, յայտնեցաւ ՚ի հասարակապետութեան Փլորենտիոյ՝ դար Մեդիկեանց, կամ ոսկեղէն դար գերապանծ արհեստից :

Հոգևորական իշխանութիւն արևմտեան հռովմայեցւոց ՚ի սկզբան շրջանիս եհաս ՚ի բարձրագոյն աստիճան, մանաւանդ ՚ի ժամանակս քահանայապետացն Գրիգորի Է · Պասկալիոյ Բ · Ուրբանեայ Բ · Իննովկենտեայ Գ · և Բոնիֆակեայ Ը : Իսկ ՚ի վախճան շրջանիս, գործակցութիւն պապին հռովմայ ՚ի մէջ Եւրոպիոյ՝ նուազել սկսաւ :

Վենետիկ ՚ի սմին ժամանակի զընդարձակ տուրևառութիւն իւր աճեցոյց և ևս ընդ բազում ազգս եւրոպացւոց և ասիացւոց · իսկ ա-

ռումն տաճկաց զԿոստանդնուպօլիս (յամի 1453).
գիւտ ծովային ճանապարհորդութեան յարև-
ելեան Հնդկաստան ը̄ ծոցն բարեյուսոյ յա-
մի 1498. և նուաճել տաճկաց զԵգիպտոս: 1515,
դադարեցուցին զայն. և յայնմհետէ խոնար-
հեցաւ 'ի յոռութիւն վենետկեցւոցն վաճա-
ռականութիւն:

## 3. Սպանիա:

'Ի սոյն շրջանի փառք ամիրապետութեան արաբացւոց շիջաւ 'ի Սպանիա. քրիստոնեայ թագաւորք սպանիացւոց հնազանդեցուցին իշխանութեան իւրեանց զբազում նահանգս այսր հռչակաւոր ամիրապետութեան. 'ի վերջոյ արքայ արրագոնաց Ֆերդինանդ կաթոլիկ տիրեաց 1492.
ապաստանարանի արաբացւոց Գրէնադ քաղաքի, յորմէհետէ իշխանութիւն նոցա բարձաւ 'ի Սպանիա:

Գլխաւորագոյնքն 'ի մէջ քրիստոնեայ թագաւորութեանց 'ի Սպանիա՝ էին արրագոնացն և կաստելլաց. 'ի 1515. ամի միաւորեցան առ հասարակ 'ի մի միապետութիւն. ընդ որ և յընթացս ժամանակաց միաւորեցան այլ քրիստոնեայ թագաւորութիւնք, որ 'ի Սպանիա:

Յուսկ այս եհաս դար փառաց Սպանիոյ, յաւուրս Ֆերդինանդայ կաթոլիկի և ամուսնոյ նորա Իզաբելայ. մեծն և անուանին 'ի պատմութեան՝ Քրիստափոր-Կոլումբոս ծնեալ 'ի Ճենեվիա և գտանելով 'ի ծառայութե Սպանիացւոց, ճանապարհորդեաց ընդ ծով ատլանդեան և եգիտ զԱմերիկա. այս գիւտ համարե- 1492.
լի է 'ի թիւս վսեմագոյն անցից. յայսմհետէ

ծովագնացութիւն և վաճառականութիւն եւ-րոպացւոց սկսաւ ընդարձակիլ ընդ ամենայն կողմանս աշխարհի ։

## 4. Փորթուգալիա ։

Փորթուգալիա սակաւ ինչ յայտնի՛ է 'ի վաղճանի շրջանիս. որ ստացաւ զանման փառս ծովագնացութեամբ և մեծ աշխարհագրական բացմամբ. Փորթուգալացիք ոգևորեալք հիւր-ընկալ հոգւով արքային Գենրիքայ որդւոյ արքայի իւրեանց Յովհաննու առաջնոյ՝ բացին
1595. զկղզիս կանարեան, ազորեան, կանաչ հանդրու-անին, մադերեան և զմեծ մասն ափանց արև-մտեան Աֆրիկոյ. 'ի կատարածի այսորիկ հետա-ւոր ծովագնաց նոցա Վասկոդեգամոս գնացել յերկրս հարաւային Ափրիկոյ, եբաց եւրոպաց-ւոց ընդ այն զծովային ճանապարհ յարևելեան Հնդս. յորմէհետէ այս աշխարհ սկսաւ հաս-տատել զտէրութիւն իւր յարևելս. իւրացոյց զամենայն վաճառականութիւն ընդ բովանդակ մասունս աշխարհի և զօրացոյց զթագաւորութիւն վաճառականութեամբ և ազգային տուրևառու-թեամբ ։

## 5. Անգղիա

Մեծամեծ փոփոխութիւնք եղեն յԱնգղիա 'ի սմին ժամանակի 'ի ներքին թագաւորութեան
1154—89. սորա. 'ի ժամանակս Գենրիքայ երկրորդի՝ նա-խարարական զօրութիւն նուազեցաւ. իշխանու-թիւն միապետական առաւել զօրացաւ յա-

ուրս Յովհաննու—բազզեմելեայ. իշխանք և ժո_
ղովուրդք ձեռներէց եղեալ՝ ստացան զներգոր_
ծութիւն 'ի գործ արքայական. 'ի հետևումն ա_
րոյ՝ եղև կարգադրութիւն ներքին (1265, ամ.)
և ծայրագոյն (1347, ամ.) Պարլամենտաց, որ կար_
ճեաց զիշխանութիւն արքայից և եղև ոչ սակա_
պատճառաւ մասնաւոր խռովութե. Հուսկ
ամենայնի Անգղիա ենթարկեալ մեծագոյն թշ_
ուառութեանց՝ կրեաց զներքին արիւնահեղպա_
տերազմ կոչեցեալ Աշխէտ և Սպիտակ 1. յարա_
տևեալ զամս 60. որ և վերջանայ այնու՝ զի թա_
գաւորեալ Տունն Անժույեանց (Պլանտագե_
նետեանց) բնաջինջ եղեալ՝ ամբառնայ յաթոռ 1485.
Անգղիոյ՝ Տունն Տիւդորեանց։

6. Գերմանիա. 'ի հն. Ալէմանիա։

Այս տէրութի 'ի սկզբան շրջանիս նեղեալ էր
'ի ներքին պատերազմաց յարուցելոց 'ի Գվել_
փաց և Գիբելլինաց, յորոց առաջինքն էին 'ի կող_
մն պապին Հռոմայ, իսկ միւսքն՝ կայսերաց. 'ի
վերջոյ՝ 'ի թագաւորութեան կայսեր Փրիդերի_
կեայ երկրորդի՝ բարեհանճար և գործավար ար_
քայի՝ կարճեցան սոյն պատերազմունք յօգուտ 1218—56.
Գիբելլինաց
Յետ այսորիկ ամբարձաւ յաթոռ կայսերուե
Ռուդոլֆ 'ի տանէն Հաբսբուրգեան. ժառ_

1. Այս ներքին պատերազմ ծագեցաւ յերկուց տոհմից յո_
րքեան և լանկաստերեան հակառակելոց 'ի գահակալութիւն.
տոհմն յորքեան ունէր 'ի նշան՝ սպիտակ վարդ. իսկ լանկաս_
տերեանն՝ աշխէտ. ըստ որոյ և յայս անուն պատերազմն կո_
չեցաւ։

անդ նորա Ալբերտ աւստրիացի՝ մտադիր եղև
հնազանդեցուցանել զՍուէյցիա. սակայն բնակիչք
աշխարհին ոգևորեալք հռչակաւոր Դիւցազնէ-
1315· իւ իւրենց Վիլգելմիւ Տէլլիւ, առնաբար խոր-
տակեցին զաւստրիական յարձակումն և 'ի մար-
տի անդ առ Մորգարտենաւ՝ հարին զնա 'ի հարուա-
ծըս յոյժ. հուսկ ամենայնիւ՝ գերմանացի կայսերք
երկար ետուն պատերազմ ընդ Սուէյցիս, զի
1648· հնազանդեցուսցեն զնոսա իշխանութեան իւր-
եանց. բայց ապա հարկաւ հարկեցան հաստա-
տել զանկախութիւն նոցա։

'Ի 1355· ամի՝ կայսր Կարոլոս չորրորդ հրատա-
րակեաց ոսկեգիր հրովարտակ, որով հաստատե-
ցաւ կարգ ժառանգութեան աթոռոյ և ծէս
ընտրութեան և թագաւորութեան գերմանացի
(հռոմայեցի) կայսերաց. վասն կարճելոյ զանհամա-
ձայնութիւն և զերկպառակութիւն ամբարձեալ
յայսմ ժամանակի յարևելեան եկեղեցին, ե-
1414· ղեն երկոքին արժանյիշատակ ժողովքն Կոս-
1433· տանեան և Բազելեան. յորում ժամանակի
յարեան 'ի Գերմանիա նոր աղանդաւորք հա-
կառակազինեալք քահանայապետաց Հռոմայ.
յորոց գլխաւորք էին Յոհաննէս-Հուս և ա-
շակերտ նորին Հերոնիմոս պրակացի. պատիժ նո-
ցա ետած զմեծ ալէկոծութիւն 'ի Գերմանիա նա-
խաձայնեալ զմեծ փոփոխութիւն 'ի հարաւա-
յին Եւրոպիա։

## 7· Արևելեան տէրութիւն Հռոմայեցւոց։

Այն տէրութիւն ընդ բազում ժամանակ տառապեալ 'ի ներքին խռովութեանց և յարձակմանց զանազան ազգաց, եղև կողոպուտ 'ի

Թուրքաց. ՚ի ժամանակս ինններորդն Կոստան֊ 1453.
դեայ (պալէօլօգեայ), մահմետ երկրորդ առեալ Կոստանդնուպօլսոյ՝ աւերեաց զայն և հիմնեաց զտէրութիւն Թուրքաց յԵւրոպիա։

## 8. Հայաստան

՚Ի սմին ժամանակի տէրութիւն հայոց բաժանեալ էր յերիս թագաւորութիւնս. ա՛, թագաւորութիւն մեծին հայոց՝ որում թագաւորէր Գագիկ Բագրատունի անուանեալ շահնշահ որդի տիեզերակալին ՚ի տանէ Բագրատունեաց։ Այս տէրութիւն ծաղկեցաւ յառաջինն Աշոտոյ Բագրատունւոյ. բ՛, թագաւորութի՛ Արծրունեաց, որում թագաւորէր Աբուսահլ ՚ի ժառանգորդաց Գագկայ Արծրունւոյ. իսկ այս ծագեցաւ ՚ի Բագրատունեաց և սկսաւ ՚ի Գագկայ քեռորդւոյ Սմբատայ առաջնոյ, որ ապստամբեցաւ ՚ի տանէ իսկ Սմբատայ յամին 908։ Արծրունեաց թագաւորութիւն ևս բաժանեալ էր յերիս, որոց թագաւորեցին երեք որդիք Աբուսահլայ. գ՛, թագաւորութի՛ Վանանդայ ՚ի Կարս, որում թագաւորէր Մուշեղ՝ ՚ի ժառանգորդաց Աբասայ եղբօր Աշոտոյ Գ՛, արքայի երկաթ կոչեցելոյ։ Այս տէրութիւն մնաց յետ մեռանելոյ Աբասայ արքայի հայոց՝ որոյ աթոռն ՚ի Կարս, որոյ երկու որդիք միանգամայն թագաւորեալք, Աշոտ ողորմածն կոչեցեալ՝ նստաւ յԱնի, և Մուշեղ ՚ի Վանանդգաւառի ՚ի Կարս, յորմէ և տևեաց այն տէրութիւն ցվերջ թագաւորութեան Բագրատունեաց։

Յաւուրս Յովհաննու—Սմբատայ՝ թագաւո

1024 · բռնիտոն Անի քաղաք բազմամարդ մատնի 'ի ձեռըս յունաց. քանզի սորա չունելով զզինուորական քաջամանութիւն, յահէ սկիւթացւոց գրով աւանդէ յունաց զքաղաք իւր թագաւորական՝ գտանել զօգնութիւն 'ի նմանէ ընդդէմ սկիւթացի զօրուն: Եղբօրորդի Յովհաննու սմբատայ Գագիկ յետ երկուց ամաց յաջորդեալ 'ի թագաւորութիւնն, այր բազմահանճար կրթեալ յուսումն հելլենացի լեզուաց, բազում անգամ մարտ եդեալ ընդ յոյնս, անպարտելի ախոյեան հանդիսանայ. իսկ 'ի վերջոյ՝ 'ի սադրելոյ նախարարացն իւրեանց գնայ 'ի Կոստանդնուպօլիս ըստ հրաւիրելոյ Մոնոմաքոսի կայսեր յունաց. և անտեղեակ առ յիւրայնոցն նենգութեանց՝ կալանաւորի 'ի կղզիմի. նախարարքս սորա տան 'ի կայսր զԱնի բազ-
1069 · մամարդ և զարքունիս արքային. ապա և ինքնին Գագիկ սպանանի 'ի յունաց 'ի կողմանս Տարօնոյ յամրոցն Կեզիստրայ. որով և առ հասարակ բարձումն թագաւորութեան հայոց՝ 'ի տանէ բագրատունեաց:

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

### 9. Ռուսիա:

Բովանդակ Ռուսիա ընկալաւ զքրիստոնէական հաւատս յայսմ ժամանակի և հաստատեցաւ 'ի նմա միապետական կառավարութիւն. յերեքտասաներորդ դարու սուավէացիք եղեն աշխարհակալք. զօրագլուխ նոցա Բիրկեր հնազանդեցուցեալ զբոլոր Փինլանդիա, միջամուխ

եղև ՚ի Ռուսիա. սակայն ախոյեան ռուսաց իշ-
խան Նովգորոդայ սուրբն Աղեքսանդր Նեւսկի 1241.
անձն հարուածովք հարուածեաց յափունս
Նեւայ և կասեաց զյառաջադիմութի զինուորն։

## 10. Դանիա.

Դանիա ՚ի սմին ժամանակի լինի՛ հզօր թա-
գաւորութիւն յաւուրս Ալդեմարայ առաջ- 1157.
նոյ մեծի. բայց նախարարական կառավարութե
արմատացեալ ՚ի սոյն տէրութիւն՝ յաճախ յա-
րուցանէր ՚ի նմա զխռովութի և զանկարգու-
թիւն։

## 11. Նորվեգիա. ՚ի հն. Նորբենէ.

Այս տէրութիւն ընդ երկար դղրդեալ ՚ի
ներքին այլեւայլ խռովութեանց ծագելոց իբր
՚ի բազում ՚ի վիճմանց առ ժառանգութիւն
աթոռոյ։ Յուսկ ապա միաւորեցաւ ընդ Սուէտի-
ոյ և Նորվեգիոյ ըստ կալմարեան դաշնադրու- 1397.
թեան։ Մարգարիտ թագուհի Դանիոյ՝ եղև
հրամանատար այսոցիկ երից միաբանեալ թագա-
ւորութեանց.

## 12. Պողոնիա. ՚ի հն. Սարմատիա Եւրոպիոյ.

Իշխանութիւն պողոնիացւոց ստացեալ ըզ- 1025.
պատուանուն թագաւորութեան ՚ի ժամանա-
կացն Բոլեսլավայ առաջնոյ, երկար էր ընդ ձե-
ռամբ գերմանացի կայսերաց. սակայն Մոնղոլք

ահեղս դղրդեցին և բնաջինջ արարին զայն ։ 'Ի 1386 · ամի կալաւ զաթոռ թագաւորութեան տոհմն Եագեղոնեանց · յետ բարձման որոյ 1572 · հաստատեցաւ անդանօր ընտրողական կառավարութիւն ։

## 13 · Պրուսիա ։

Յերեքտասաներորդ դարու Պրուսիա տիրեալ յազնուականացն գերմանացւոց՝ դարձաւ 'ի հաւատս քրիստոսի, և յընթացս ժամանակաց անկաւ 'ի ներքոյ իշխանութեան Պողոնիոյ · իսկ 'ի վերջոյ, Մագիստրոս ասպետութեան Գեր_
1525 · մանիոյ Ալբերկտ 'ի Բրանդենբուրգայ՝ արար զայն ինքնագլուխ տէրութիւն և էած 'ի դքսութիւն ։

## 14 · Ռուսիա ։

'Ի բաժանմանց անտի կողմանց արևելեան շարժե_
1224 · ցան յերկոտասաներորդ դարու մոնղոլք յերկիւղ Ասիոյ և Եւրոպիոյ · յորում ժամանակի կառավար նց էր Թէմուչին կոչեցեալ Ջէնկիզ-խան · զօրագլուխք նորա բեկեալ զզօրս Ռուսաց առ Կալկայ գետով՝ ածեն զնիշտ 'ի ռուսաստան · որով և վաղվաղակի զեղեալ 'ի խորս նորա առաջնորդութեամբ Բաթի խանին հնազանդեցուցին և ամենայն արարին զՌեազան քաղաք, զՄոսկով, զՎլադիմեր, զԿիեվ և զայլ բազում քաղաքս ռուսաց · վաճառականութի ռուսիոյ անկանի ընդ իշխանութեամբ նց · միայն Նովգորոդ պահեալ զիւրն անկախութիւն՝ անդորր կայր 'ի սմին ժամանակի պահպանութեամբ

ազնուականի իւրոյ Աղէքսանդրի Եարոսլաւեան·
այն իշխան հռչակաւոր և սուրբ ըստ քրիստո-
նէական առաքինութեան՝ կարձեաց զկատաղու-
մըն սուամիացւոց ՚ի Ռուսիա·արար զմեծ յաղ-
թութիւն ՚ի վերայ նոցա յափունս Նեւայ գե-
տոյն·վասն որոյ և կոչեցաւ Նեւսկի։

Ռուսիա ընդ երկար եկաց ընդ իշխանու-
թեամբ Մոնղոլաց·իշխանք Ռուսաց էին հարկա-
տուք·իսկ հպատակք նոցա՝ ծառայք ամիրայից
նոցա·արիւն նոցա հեղաւ ՚ի սուր Թաթարաց.
քաղաքք և շէնք էին բնաջինջ·գաղթական ազգն
նուազեցաւ․ երկրագործութիւն և ազգային
տուրևառութիւն անկաւ բովանդակ և չքա-
ցաւ լուսաւորութիւն։ Յուսկ ապա եհաս ժաման-
նակ ազատութեան Ռուսիոյ։ Դիմիտր չորրորդ, 1362—89.
յովհաննէսեան զարթոյց ՚ի ռուսս զառաջին իւ-
րեանց արութիւն և եհար զառաջնորդ Մոնղո- 1380.
լաց զՄամայ առ Դոն գետով ՚ի դաշտին Կու-
լիկովայ. այսու մեծագործ յաղթութեամբ սկիզբն 1462—505.
արար ազատութեան Ռուսաց՝ և ստացաւ զա-
նուանակոչութիւնն՝ Դոնսկի։ Ի վերջոյ ամին՝
առ կատարեալ ազատութիւն Ռուսիոյ յիշխա-
նութենէն Մոնղոլաց՝ ծագեցաւ յանկարկու-
թենէ վերին տեսչութեան՝ Յովհաննէս երրորդ
վասիլեան, որ իւրով հանճարեղութեամբ, գոր-
ծովք և յառաջընթաց Պետրոսի առաջնոյ,
հաստատեաց զմիապետական իշխանութիւն ՚ի
Ռուսիա, ածեալ ընդ իւր և զՆովգորոդ
և զայլ բազում մասնաւոր իշխանութիւնս.
նուաճեաց զթագաւորութիւն Կազանացւոց
և էած զերկիւղ ՚ի վերայ Մոնղոլաց, յորմէ-
հետէ սկսաւ քաղաքական զօրութիւն և ընդ-
հանրապէս լուսաւորութիւն և կրթութիւն
Ռուսաց։

## Թագաւորութիւն Ռուբինեանց.

### յԻշխանութենէ Ռուբենէ առաջնոյ՝ ցԼևոն երկրորդ և ցվերջ թագաւորութեան Ռուբենեանց:

### 'Ի 1080. ամ Տեառն՝ ցամն 1384.

Տոհմն Ռուբենեանց տիրէ Հայաստանեայց յամի տեառն 1080. և այս միապետութիւն կամ իշխանութիւն Ռուբենեանց սկսաւ 'ի Ռուբէն իշխանազուն առնէ 'ի տանէ Բագրատունեաց յազգականութենէ Գագկայ վերջնոյ արքային Բագրատունեաց, յոյր անուն և բովանդակ իշխանութիւն և թագաւորութիւնն կոչեցաւ Ռուբենեանց:

1198. Իշխանութեան Ռուբենի ժառանգորդ յաւրեալ քաջարին Լևոն երկրորդ. պայազատեալ զհայրենի իշխանութիւնն, օծաւ թագաւոր ձեռնտուութեամբ կայսեր Հռովմայ. և յետ ամենայնի սխրագործ յաղթութեց 'ի թշնամիս, ապահովեալ զաշխարհն, նորոգէ 'ի հիմանց զՍիս քաղաք. կանգնէ զհիւանդանոցս և զանկելանոցս, ռոճիկ կարգեալ նոցա յարքունուստ. և զի ցայն վայր դրոշակք հայկական թագաւորութեան էին յատուկ արծուէնշանք, աղաւնէնկարք և վիշապաբարձք, փոխեցան յառիւծանշանս. զի՝ կայսրն Հենրիկոս 'ի պատիւ մեծարանաց առաքէ մերում արքային դրոշակ առիւծանշան կրել զայն 'ի տէրութեան և 'ի զօրսն իւր:

Զհայրենի պետութին պայազատէ դուստր Լևոնի Բ. Զապել հաւանութեամբ նախարարաց իւրոց և հայազգի իշխանաց, ամուսնա-

նեալ զնա Թագուհի Հայոց․ որ իբրեւ օրինակ
կուսութեան եւ զգաստութեան հայելի՝ բարե-
կարգէ զոճրութիւն իւր առաքինական վայ-
ելչութեամբք։

'Ի սմին ժամանակի սկիւթացիք ածեալ աս- 1237․
պատակ ահեղ ընդ ամենայն տիեզերս, զեղան եւ
'ի Հայաստան, զանհնարին չարիս գործեալ յերկրին
Սիւնեաց, յԱղուանս, 'ի Վիրս, յԱյրարատ, 'ի Շի-
րակ գաւառ եւ այլուր․ ուրանօր հանին 'ի բե- 1243․
րան սրոյ զԱնի․ քաղաք բազմամարդ․ կոխեցին զո-
տըս իւրեանց եւ 'ի բարձր Հայս․ առին զԿեսարիա,
զՍեբաստիա եւ զԿոնիկոյ եւ զայլ քաղաքս եւ
զիշխանութիւնս։

Յաւուրս Օշնի արքայի եղբօր երկրորդն 1319․
Հեթմոյ, լինի գետնաշարժ 'ի մեծն Հայաստան․
յորմէ կործանին աւանք եւ գեօղք ոչ սակաւ․
կործանի եւ Անի բազմամարդ, որոյ բնակիչք
'ի նմին ժամանակի հատուած գնացեալ անկա-
նին ոմանք յաշխարհ Վասպուրական, այլք
յերկիր պարսից, եւ մեծ մասն դիմեալ 'ի Ս-
կիւթիա (յայժմեան ռուսիա) յետ ժամանա-
կաց՝ գաղթեցան 'ի Թերակղզին Ղրիմոյ յամի
տեառն՝ 1331․ իսկ կէսք չուեն 'ի նոցունց 'ի
Պողոնիա (Լեհաստան) տեղակալեալք եւ յ
Վալագիոյ ('ի Մոլդավիա․) յորս 'ի սփիւռ-
կան ցայսօր ժամանակի։

'Իսկ 'ի ժամանակս վերջին Թագաւորին Հա- 1371․
յաստանեայց Լեւոնի վեցերորդի, կոխան լինի
բովանդակ աշխարհն յարշաւանաց եգիպտական
զօրուն․ յորմէ անձարացեալ եւ Լեւոն արքայ,
անձնամատն Թշնամեաց լինի եւ բանտի յԵգիպ-
տոս, յամի տեառն 1375․ զերծեալ անտի միջ-
նորդութեամբ Յովհաննու արքայի սպանիա-
ցւոց, հանդերձ գերդաստանօք յետ հինգամեայ

կալանաւորութեան իւրոյ. և դիմեալ յԵրու_
սաղէմ, գոհութիւնս մատուցանէ փրկչին առ
իւր ազատութիւն. և անդէն թողեալ զգեր_
դաստանս իւր, անցանէ ՚ի Հռովմ և անտի ՚ի
Սպանիա. պատուի ՚ի Յովհաննու արքայէ բա_
րեբարէն իւրմէ. ճանապարհորդէ ՚ի Գաղղիա,
յԱնգղիա և ՚ի վերադարձին իւր ՚ի փարէզ վախ_
ճան առնու երջանիկ կենաց իւրոց յամին Տ՟ն
1393. թողեալ զտէրութիւն իւր յանիշխանու_
թեան ՚ի ձեռս եգիպտացի զօրաց, որ և յետ
ժամանակաց մատնի օսմանցւոց. յորոց ՚ի ձե_
ռըս է ցայսօր ժամանակի և՛ աշխարհ Կիլիկիոյ
և՛ գրեթէ մեծ. մասն Հայաստանի:

Այսպէս վախճան հայկական թագաւորութեն
Ռուբենեանց:

Ծանօթութիւն յաղագս այսր շրջանի: Յայսմ շրջանի
Կիլիկիա գտանի առ հարաւ ՚ի լեռնագոյն և ցամա_
քային [illegible] վիճակի [illegible]. արհեստ և վաճա_
ռականութիւն և մանկանց կատարելագործեալ օրէնք առ.
ասել՝ փոխանակ առաջին օրինադրութեան [illegible] հրոյ
և ջրոյ, դատաստանական մենամարտութեանց ևայլն, քա_
ղաքակրթեալ օրէնս ցուցանեն: Այսպիսի կառա_
վարութիւն հաստատեցաւ ընդ ամ թագաւորութեամբ, և վե_
ճակ ազգաց ՚ի ծաղում յարաբերութեան:

Այն էր շրջան կալեալ վերջ և օգտակար գիտ ա_
րուեստ յառաջադիմութեամբ ՚ի ծաղկմանութեան և մեծ աշ_
խարհագրական յայտնութեամբ: ՚Ի վերջ (երեքտասաներորդ
դարու) Փլաւիոն — Մելին եգիպ [illegible]. Գերմանացի
[illegible] (՚ի չորեքտասաներորդ
դարու), և Կոստանդին (՚ի հնգետասաներորդ դարու)
շարժեալ մամենագրութեան: Ա[illegible] — [illegible] ընդ
ծաղկեալ [illegible]գրութեան յարմարեցեան հինդս. իսկ Սա_
[illegible]՝ զԱմերիկա:

Ի վերջոյ՝ ծանուցանեմք, զի այսոքիկ ժամանակք վսեմագոյն երեւեցան վասն անցից մարդկութեան. Հաստատ քրիստոնէական նախանձաւոր ճգամբք հանապազորդեան քարոզչաց նորա տարածեցաւ ընդ երկուս մասունս աշխարհի.

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿԱՄ ԵՐԻՑ ՅԵՏԻՆ ԴԱՐՈՒՑ։

՚Ի բացմանէ ամերիկոյ՝ ցմեր ժամանակս։ ՚ի 1492. ամէ (500) ցամ թուական 1818։

## ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ.

՚Ի բացմանէ ամերիկոյ՝ ցԼուդովիկոս չորեքտասաներորդ։ ՚ի 1492. ամէ (500) ցամ թուական 1661։

Ընդհանուր այս շրջան յանդիման կացուցանէ զարիւնահեղ պատերազմունս ընդ մէջ Կաթոլիկաց և Լուտերականաց կամ Բրոտեստանդաց. ՚ի սմին ժամանակի զրկեցաւ աթոռն հռովմէական յիւրմէ առաջնոյ մեծ ներգործութենէ ՚ի գործս Եւրոպիոյ։ Առ հասարակ իսկ յայսմ ժամանակի ծագեցան մեծամեծ փոփոխութիւնք ՚ի բաղում եւրոպէական տէրութիւնս։

## ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԻԱ.

### Գլխաւորագոյն Անցք։

### I. Պատերազմունք Իտալացւոց.

1494—1515.

՚Ի վերջին հնգետասաներորդ դարու քաղաքականութիւն հռչակեալ էր Իտալիա, որում

արեւմտեան թագաւորութիւնք եւրոպացւոց ջանադիր լինէին յաղթել: Պաղղիա 'ի ժամանակս Կարոլոսի ութներորդի և Լուդովիկեայ երկոտասաներորդի: Սպանիա յաւուրս արքայի իւրոյ Փերդինանդայ կաթողիկի. և քահանայապետք հռովմայ նախապատիւ էին. կամեցան հաստատել զիշխանութիւն իւրեանց 'ի նմա: Նա որ և բացաւ անդանօր ասպարէզ մարտի. թագաւորք յարձակեալք 'ի տիրապետութիւն նմին, ոչ կարացին առնել ինչ: Իտալիա թէպէտ և աւերեցաւ 'ի զօրաց, բայց պահեաց զիւրն անկախութիւն:

## 2. Պատերազմունք ընդ մէջ սպանիացւոց և գաղղիացւոց.

Ոսոխութիւն յարուցեալ 'ի ժամանակս պատերազմաց իտալացւոց ընդ Սպանիոյ և Պաղղիոյ, եղև' առիթ նորանոր մարտից ընդ մէջ այսոցիկ տէրութեանց. յարձակումն արքայի գաղղիացւոց Փրանչիսկեայ առաջնոյ 'ի տիրապետութիւն դքսութեան Միգիօլանայ, եւ կայսեր գերմանիոյ (արքայի սպանիոյ) Կարոլոսի Ե 1. ժամ պատեհ յարուցանել զմարտ ընդ Պաղղիոյ: Չորիցս վերանորոգեցաւ այս պատերազմն. առաջինն (1521—1526) վերջանայ հարուածովք գաղղիա-

1. Կարոլոս Ե. էր արքայ սպանիացւոց և կայսր գերմանացւոց. 'ի թիւս արքայից սպանիացւոց՝ կոչէր առաջին. իսկ 'ի մէջ կայսերաց գերմանացւոց՝ հինգերորդ. այլ 'ի պատմութեան աւելի' յայտնի է երկրորդ կոչմամբ. սա էր որդի Փիլիպպեայ գեղեցիկ որդւոյ կայսեր Մաքսիմիլիանոսի և յովհաննայ (դստեր Փերդինանդայ կաթողկի. ծնեալ 'ի 1500).

ցուց 'ի Պաւիէն. գերելով զարքայն նոցա՝ և խաղաղութեամբն Մատրիկեան. ըստ որոյ Գաղղիա մերժեցաւ 'ի հայթայթանաց իւրոց 'ի դքսութիւն Մէտիօլանայ. երկրորդն 1527—1529. կարճեաց խաղաղութիւնն կամբրէական. երրորդն 1535—1538. վախճան առնու հաշտութեամբն եղելով 'ի Նիկէ. իսկ չորրորդն 1542—1544. հաշտութեամբն 'ի Կրեպի: Ընդհանրապէս յայսոցիկ պատերազմաց պատճառեցան՝ Գաղղիոյ չըհասանել 'ի տիրապետութիւն դքսութե̃ Մէդիօլանայ: Սպանիոյ այսօրինակ ջատանալ զերևելի ինչ շահաւէտութիւն—երկուքին այսոցիկ տէրութիւնք կործանեցան և անկան:

3. Նոր աղանդաւորք յառաջացեալք 'ի Լուտերէ յարևմտեան եկեղեցին:

Յետ վերջաւորութեան պատերազմաց խաչակիր զօրաց, ոչ անագան երևեցան յԵւրոպիա նորաղանդաւորք հակառակագնեալք կարգադրութեան գահին Հռովմայ. յորոց ոմանք էին ա̃ծաբանն անգղիացւոց Վիկլեվ — Յոհան Հուս, աշակերտ նորա Հերոնիմոս և այլք. 'ի վերջոյ 'ի վեշտասաներորդ դարու յարեաւ 'ի Գերմանիա 'ի Վիտտենբուրգ ժրաջան և վտանգաւոր թշնամի քահանայապետացն Հռովմայ՝ Նոր աղանդն Լուտեր այր հանճարեղ, հաստատուն զօրութեամբ կամաց և գեղեցիկ ա̃ծաբանական հմտութեամբք, զինեալ հակառակ նոյնպէս կարգադրութեան գահին Հռովմայ. որ յերևան եհան զնոր կանոնս 'ի քրիստոնէական հաւատոյն. բազումք ընկալան զուսումն նորա. ընդ փոյթ և բոլոր հիւսիսային Գերմանիա,

Անգղիա, Սուէտիա և Պրուսիա օգտեցան 'ի հռովմէական եկեղեցւոյն և ընկալան զհաւատս քարոզեալս 'ի Լուտերէ և 'ի հետևորդաց նորին:

'Ի սմանէ ծագեցան արիւնահեղ պատերազմունք ընդ մէջ Կաթոլիկաց և Պրոտեստանդաց (1). 'ի ժամանակս որոց կայսրն Կարոլոս հինգերորդ յեղծ աղանդոց Լուտերականաց՝ յարձակեցաւ 'ի սարկացուցանել զընդհանուր Գերմանիա. հուսկ ապա խաղաղութին 'ի Պասսայ՝ հան- 1555.
դարտեաց զԵւրոպիա առ ժամանակ ինչ, որով Պրոտեստանդք ընկալան զազատութիւն կրօնից և քաղաքական օրինաց:

## 4. Պատերազմունք Սպանիոյ՝ ընդ Նիդերլանդացիս. յ1609: ամ փէտուն

Նիդերլանդացիք յայտնիք անուամբս Հոլլանդիոյ, այժմ են ընդ կոչմամբ Թագաւորութեան Նիդերլանդացւոց. գտանէին զայսու ժամանակաւ ընդ իշխանութեամբ Սպանիոյ. որդի Կարոլոսի հինգերորդի՝ Փիլիպպոս երկրորդ, մտադիր եղև 'ի սմին կողման անհետել զհաւատս Լուտերականաց. այլ այս դիտաւորութիւն նորին և խստութիւն սպանիացի կառավարչացն Նիդերլանդացւոց մանաւանդ դքսին Ալբիոյ, յարուցին զմեծ խռովութիւն 'ի գաւառս Նիդերլանդացւոց. յորոց հետևեցան պատերազմունք ընդ մէջ Նիդերլանդացւոց և սպանիացւոց. բնակիչք Նիդերլանդիոյ ցուցին ըկ-

2. Ընդհանուր անուամբ Պրոտէստանդք՝ կոչէին այնոքիկ ամենեքեան, որք որոշեցան յեկեղեցւոյն Հռովմայեցւոց 'ի ժզ դարու:

բազմօրինակ մեծանձնութիւնս, աներկիւղութիւն և սէր առ հայրենիս իւրեանց. Հուսկ ո-
1579. րոյ հիւսիսային գաւառք Նիդերլանդաց եղեն անկախք զիշխանութենէ սպանիացւոց: Այսօրինակ ծագեցաւ հռչակաւոր հասարակապետութիւն հոլլանդացւոց. և Վիլգելմ արքայ Օրանայեցւոց՝ եղև կառավարիչ (շտատդալտէր) նորին.
1609. Սպանիա տայր երկար ևս պատերազմ ընդ այս հասարակապետութե. իսկ 'ի վերջոյ՝ արար հաշտութիւն ընդ նմա զամս երկոտասան.

## 5. Երեսնամեայ Մարտ.

Այս մայր պատերազմի, որ յարոյց զմեծագոյն արհաւիրս յարևմտեան Եւրոպիա, ծագեցաւ 'ի Գերմանիա 'ի խռովութեանց յուզելոց մէջ Կաթոլիկաց և Բրոտեստանդաց. զառաջին ընդարձակեաց աստանօր Յովհան–Գուս զօտար կարծիս զքրիստոնական հաւատոց հակառակ աբարոզութեանց արևմտեան եկեղեցւոյ. պատուհաս մծաքանիս բորբոքեաց զաղմուկ 'ի հետևողս իւր, որք եղեն անհաշտ թշնամիք Կաթոլիկաց: Իսկ այսմ՝ ուսուցիչ Լուտերեան որպէս հակառակ ինչ կաթոլիկաց 'ի բազում դէպըս, կարի քաղցրացաւ բոյեմացւոց և առաւել ևս փոխադարձ ատելութիւն զօրացեալ՝ երկուստեք՝ գրգռեաց զպատերազմ:

Կաթոլիկք կործանեն 'ի Բրաուոնայ և 'ի Կլօստերբուրգ 'ի Բոյեմիա զտաճարս Բրոտեստանդաց. յորմէ խռովեալ նոցա և հրապուրեալք յառաջնորդաց իւրեանց 'ի կոմս Տուրնայէ և Յերնեստ Ֆօն–Մանսֆելդայ՝ ամենեքին 'ի զէն ընթացան, բորբոքեալ վառվառակի

զհրդեհ մարտի յարեւմտեան Եւրոպիա . ինքնա-
կալք Գերմանիոյ ՚ի տանէն աւստրիացւոց ժամ-
դիպող գտեալ՝ սկսան ընդ արձակել զիշխանու-
թիւն իւրեանց այնու միօք, զի եղծուսցեն ըզ-
հաւատս Բրոտեստանդաց . յարձակեալք ՚ի ըմ-
բռնութի գրաւել զողջոյն Գերմանիա : Յայսմ
իսկ ժամանակի յաջողեցաւ տանն Աւստրիոյ
ունել զբազում հոյակապ սպարապետս ՚ի թիւս
որոց՝ քաջազոյնք էին կոմսն Տիլլի և Վալեն-
շտէյն, որոց պարգևեալն էր տիտղոս դքսին
Ֆրիտլանտիոյ . ինքնակալն Ֆերդինանդ Բ . յու-
սացեալ ՚ի մեծագին տաղանդ և յոլովակի յաղ-
թութիւն դիւցազանցս այսոցիկ՝ եդեալ էր
՚ի մտի հաստատել զանսահման իշխանութիւն
իւր ՚ի վերայ ողջոյն Գերմանիոյ . սակայն նախա-
րարն գաղղիացւոց մեծանուն Կարդինալն Դը—
Րիշլիէ հետն ՚ի վեր տապալեաց զայս ամենայն 1630.
կարգ նորա . սա այր մեծանուն՝ ՚ի մտի եդ դնել
չափ ընդ արձակելոյ իշխանութեան տանն Աւստ-
րիոյ, որ երևէր վտանգ մեծ բերել ազատու-
թեան համօրէն Եւրոպիոյ : Եւ այս իսկ նպա-
տակ զարթոյց զարքայ Սուէտացւոց զԳուստաւ-
Ադօլփ տալ պատերազմ ընդ երկրորդն Ֆեր-
դինանդայ . այլ կրեալ նախատինս ՚ի Վալենշ-
տէյնայ՝ ցանկալով պաշտպան հանդիսացու-
ցանել զանձն անձնիշխանութեն Բրոտեստանդաց
և դաւանութեան նոցին, հաւան գտաւ յառա-
ջարկութիւն նախարարին գաղղիացւոց . սորին
վասն և չու արար ՚ի Գերմանիա . այնինչ զօրք
ինքնակալին յետս խուճապէին, Տիլլի լցեալ
մախանօք և հարեալ զամօթի, յարձակեցաւ ՚ի
Մագդեբուրգ, որում տիրեալ՝ ՚ի հուր ծա-
խեաց զայն բոլորովին, մինչև ոչինչ երևել ՚ի
նմա՝ բաց ՚ի շեղջակոյտ մոխրոց և տեսարանաց

աւերակաց. մաշեաց 'ի հուր և 'ի սուր աւելի
քան զ30000. բնակիչս այսր քաղաքի: Գուստավ-
Ադոլֆ վրէժխնդիր լինելով վասն այսպիսի ա-
մենակործան աւերնաց Մագդեբուրգայ, զհետ
6113. պնդեցաւ Տիլլեայ, զոր չարաչար խորտակեաց
առ երի Լէյպցիխայ: Երկրորդ հռչակաւոր պա-
տերազմն եղև առ Լեխ գետով. ուրանօր ըստ
առաջնոյն խորտակեալ Տիլլի՝ ընկալաւ յանձին
զհարուած և փչեաց զոգին. յայնժամ Վալ-
լենշտէյն, որ ցայն վայր զառանձնութեանն վա-
րէր կեանս, կարգեցաւ ծայրագոյն սպարապետ
միահամուռ կայսերական զօրուն և մղեաց զյո-
լով պատերազմ ընդ Գուստավայ-Ադոլֆայ
'ի Լիւցէն: Սոավեացիք քաջաքոյն պատերազ-
մեալք ստացան զյաղթութի գնեալ ազնուա-
գին արեամբ բարեպաշտ արքային իւրեանց՝ որ
կնքեաց զկեանս իւր յայսմ մարտի: Վալենշ-
տէյն չեղև՝ արժանի ըստ օրինակի դիւցազնէիս
փչել 'ի պատերազմական դաշտի զիւր վերջին
1632. շունչ. այլ սպանաւ 'ի ձեռաց ապերախտից.
քանզի՝ խորհուրդ արարեալ ոմանց ամբաստա-
նութեան ընդ այս փառամոլ այր, սպանին յԷ-
գեր 'ի Բոյեմիա:

Զկնի մահուան Գուստավ-Ադոլֆայ, սին-
կղիտոսն Սոավիոյ յանձն արար զկառավարութի
գործոց վերաբերելոցն 'ի Գերմանիա՝ ատենա-
դպրի իւրում Օքսէլ-Օքսինշտերնայ. որք և
ընդ սպարապետութե զօրավարաց իւրեանց և
այլոց ոմանց Թէպէտ փոփոխակի յաղթութեամբ
մղէին զպատերազմ, սակայն անգամ ուրեմն ը-
հանրական սպառուամն զօրութե՝ ստիպեաց զպա-
տերազմօղ ինքնակալս առնել զխաղաղութի: Այս
1648. խաղաղութիւն եղև 'ի Վեստֆալիա յերկոսին
քաղաքսն միանգամայն 'ի Մյունստեր և յՕս-

նաբրիկ. որոյ տղայն ՚ի պատմագրութեան կոչի վեստփալեան խաղաղութիւն:

Պրոտեստանդք ընկալան զհակառակ ազատութիւն կատարել համարձակ զժամերգութիւն իւրեանց և զքաղաքական կարգ: Յունն Աւստրիական սահմանափակ եղև. քանզի տուան գերմանացի իշխանաւորաց բազմապիսի իրաւունք և արտօնութիւնք: Գաղղիա հպատակեցոյց իւրեան զնահանգն Ալզաս. իսկ Սուէդիա՝ զՊոմերանիա և այլ ևս թագաւորք և գերմանացի իշխանք համբերեցին յընթացս այսոցիկ պատերազմաց՝ վարձատրեցան ըստ արժանւոյն: Այսու օրինակաւ վեստփալեան խաղաղութի վերականգնեալ անդրէն զանդորրութիւն յ̃ս քրիստոնէից, հիմն եդ ազատութեան և քաղաքականութեան հասարակապետութեան Գերմանիոյ և ողջոյն արևմտեան Եւրոպիոյ:

## Ընթացք այսր ժամանակի:

### 1. Գաղղիա:

՚Ի սկզբան այսր շրջանի վրդովեցաւ Գաղղիա ՚ի ներքին բազմածախ պատերազմաց պատճառաւ ՚ի հալածանաց յարուցելոց ՚ի Պրոտեստանդս (դուգինեանս). սարսափելի արիւն- 1572.
հեղութիւն դիպեցաւ ՚ի փարէզ յանուն բարդուղիմեան գիշերոյ, յորում ժամանակի մաշեցան ՚ի սուր սուսերի եօթանասուն հազար պրոտեստանդք, ապացոյց է դառնագին յիշատակաց անապաշխարութեան և բանդագուշանաց այսոցիկ ժամանակաց: Ընդ աղբիւրանալ այսորինակ ամենակործան աղանդաւորութեանց, Գաղղիա

դնէր 'ի յետին թշուառութիւն. սակայն 'ի բա-
րեբաղդութիւն նորա ամբարձաւ յաթոռ տէ-
1589. րութեանն Գաղղիոյ Գենրիք չորրորդ 'ի տա-
նէ Բուրբոնեանց, որ ձեռնտուութբ իմաստնա-
գոյն նախարարի իւրոյ Սիւլլեայ՝ խաղաղացոյց
բազմօք զտէրութի իւր պարգևեալ նմին ըղ-
1610. հանգստութիւն: Սակայն յետ սպանմանն նորա 'ի
Ռաւայլեակէն, Գաղղիա ընկղմի 'ի գուբ տա-
ռապանաց. հուսկ ապա յարեաւ կարդինալն
Դը–Րիշել 'ի վերականգնումն տէրութեանն.
որոյ գոլով նախարար Լուդովիկեայ երեքտա-
սաներորդի՝ վերականգնեաց անդրէն 'ի Գաղղի
ա զմիահեծան իշխանութիւն. խաղաղացոյց ըղ-
Բրոտեստանդս. և ընկճեալ, նուաճեալ զբռ-
ռըն զօրութբ աւստրիական աթոռոյն՝ ետ Գաղ
ղիոյ զկարողութբ 'ի գործ Եւրոպիոյ: Նմա
յաջորդի կարդինալն Մազարին. յորոյ 'ի նա-
խարարութե ժամանակի, պատերազմն, որ ծա-
1659. գեցաւ ընդ մէջ Սպանիոյ և Գաղղիոյ՝ աւարտ
եաւ պիրենեան խաղաղութեամբ.

## 2. Իտալիա:

Ընթացս այսր շրջանի Իտալիա ըստ բերման բնչ կախեալ էր մասամբ զգաղղիական, զսպանիական և զաւստրիական իշխանութեանց. միմիայն Վենետիկ և Հռովմ պահէին զինքնիշխանութիւն և զանկախութիւն զօտարազգի ինքնակալաց:

## 3. Սպանիա և փորթուգալիա.

1556—98. 'Ի ժամանակաց անտի փիլիպպեայ երկրոր-

դի՝ գլխաւոր հիմն քաղաքականութեան Սպա-
նիոյ՝ էր միահեծան ինքնակալել և հաստատել
ոչ միայն ՚ի Սպանիա, այլև՝ յայլ թագաւորու-
թիւնս զհռովմէականթոլիկ դաւանութիւնս.
յորմէ նա ինքն Փիլիպպոս և ժառանգք նորին
յարուցին զանդադար մարտ պատերազմի ընդ
ինքնակալս պրոտեստանդաց և յաւէտ ընդ Հոլ-
լանդիա և ընդ Անգղիա. յորոց և պատճառե-
ցան թշուառութիւնք Սպանիոյ։

՚Ի մէջ այսոցիկ հանդամանաց Փորթուգա-
լիա, որ էրն ընդ իշխանութեամբ Սպանիոյ ՚ի
ժամանակաց Փիլիպպեայ երկրորդի՝ կանգնեաց
զիւրն անկախութիւն և յաթոռ իւրոյ իշխա-
նութեան կացոյց զՅովհաննէս դուքս բրակա- 1640.
նացի։

## 4. Անգղիա.

Ի այսու ժամանակաւ եղեն յԱնգղիա մե-
ծամեծ փոփոխութիւնք, որ երկար ժամանակ
ընդ կոպարաւ մուծին զվիճակ նորա։ Եղիսա-
բէթ թագուհի անգղիացւոց եմոյծ յայս տէ- 1558—603.
րութիւն զհաւատս պրոտեստանդաց. ուր վասն
Անգղիա հարկեցաւ տալ պատերազմ ընդ հռով-
մէական տէրութիւնս մանաւանդ ընդ Սպանի-
ացիս։ Երբէք, զի ունէր յաղթել Անգղիա ՚ի
մին պատերազմի. սակայն յաղթանակեաց և
յետ խորտակման մեծ և անյաղթ նաւախմբին 1604—25.
սպանիացւոց, եղև հզօր թագաւորութի յԵւ-
րոպիա։ Յաւուրս ժառանգին Եղիսաբէթի Յա-
կոբայ առաջնոյ ՚ի տանէն Ստուարտաց՝ զօրու-
թիւնք Անգղիոյ ևս քան զևս մեծացան այնինչ
միացան ընդ Շոտլանդիոյ. բայց այսու ամենայ-

նիւ՝ բազումք հպատակեալ հռովմէական դաւանութեան, յարուցին յԱնգղիա զպատերազմ ընդ մէջ կաթոլիկաց և պրոտեստանդաց, որ հզօր իմն ճարակեցաւ ընդ ողջոյն Անգղիա. այսու պատ-
1649. ճառաւ գլխատեցաւ արքայ Անգղիացւոց Կարոլոս առաջին 'ի դահաւանդակին, և Անգղիա դարձաւ 'ի հասարակապետութիւն, որոյ կառավարիչ (պրոտեկտոր) եղև Կրոմվել. գլխաւոր պատճառ խռովութեանս. բայց զկնի մահուան Կրոմվելայ՝ աթոռն անգղիական հաստատե-
2660. ցաւ անդրէն, զոր կալաւ Կարոլոս երկրորդ՝ որդի Կարոլոսի առաջնոյ։

## 5. Դաշնակից Նիդերլանդք։

(Հոլլանդեան Հասարակապետութիւն։)

Զկնի անցանելոյ ժամանակաւոր հաշտութեան արարելոյն 'ի Հակա (1609)՝ Նիդերլանդք անդրէն հարկեցան առնել պատերազմ ընդ Սպանիացիս, զոր և յաւարտ հանին մեծաւ արդիւնաւորութեամբ։ Հուսկ ապա Սպանիա ուժատեալ և զրկեալ 'ի գանձուց՝ պարտաւորեցաւ 'ի վեստփալեան խորհրդեան թողուլ զՆիդերլանդս ազատս և անկախս. յայսմ ժամանակէ սկզբնաւորեցաւ կարողութիւն և փառք հոլլանդեան հասարակապետութեան. ծովագնացութիւն նորա և վաճառականութիւն տարածեցաւ ընդ ամենայն մասունս աշխարհի. գաղթական ժողովուրդք նորա ծաւալեալ բազմացուցին զձեռակերտս և զգործարանս. ուսումնութիւն և հարստութիւն ծաւալեալ սփռեցան յայսոսիկ կող-

մանս, ուր յառաջն արմատացեալ էր տխուր ազգատութիւն։ Սակայն հասարակապետութի Հոլլանդիոյ առ այսպիսի արտաքին մեծափառութեամբ իւրով՝ տակաւին յուզիւր յազգիազգի յարուցմանց. իշխանութիւն կառավարչին (շտատգալտեր) էր 'ի կոպարի. սակայն բազմաց երևէր ծանրատար. սորին վասն և 'ի վերջոյ միանգամայն եղծեալ անհետացաւ այս արժանաւորութիւն շտատգալտերեանց։ 1653.

### 6. Զվիցարիա։

Հոգի նորակրօնութեան մո՛ւտ գործեաց և 'ի Զվիցարիա և յարոյց և յայսմ կողման ըզխռովութիւն և զանհանգստութիւն. քանզի՝ նահանգք Զվիցարիոյ սիրելով զհասարակաց բարօրութիւն, ձե՛գն թափեցին ոչ հայելով 'ի զանազանութի կրօնի, պահպանե՛լ որքան մարթ էր 'ի մէջ իւրեանց զխաղաղութիւն և զմիաբանութիւն։

### 7. Աւստրիա և Գերմանիա։

Հզօր զօրութիւն տանն աւստրիական հաստատեալն 'ի Կարոլոսէ հինգերորդէ և յերկրորդն Փերդինանդայ՝ տկարացաւ յոյժ. այնինչ Գաղղիա մասնակի՛ց եղև երեսնամեայ պատերազմին. և 'ի վերջոյ ընդ կոպար եմուտ վեստֆալեան խաղաղութեամբ. ըստ որոյ կայսրընտիրք (կուրֆէրստք) և միահամուռ իշխանք գերմանացիք սկսան խառնիլ 'ի գործս գերմանացի կայսերութեանն։ Աւստրիա փոխանակ այսր կորստեան,

հնազանդեցոյց ինքեան իբր զսեպհական ժառանգութի՛ զաշխարհսն բոյէմացւոց և Հունգարաց. յամենայն մասունս Գերմանիոյ ո՛չ այլ ինչ էր տեսանել, բայց եթէ զբազմաւէր ճշխամարտից պատճառեալս ՚ի նորաձևութենէ. որ և առաւել քան զամենայն թագաւորութիւնս՝ հարուածեալ տանջեցաւ յերեսնամեայ պատերազմաց։ Հուսկ ուրեմն խաղաղութիւնն Վեստփալեան անդորրացոյց որպէս զսա, նոյնպէս և զայլս. սորին վասն սկսան անդանօր ծաղկիլ արուեստք. ճարտարապետութիւնք և քաղաքական լուսաւորութիւնք։

8. Տաճկաստան։

Տաճիկք զայսու ժամանակաւ սկսան ահաբեկել զողջոյն Եւրոպիոյ վայրասուն քաջութեամբ իւրեանց և ատելութեամբ առ քրիստոնէիցս ազգ։

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԻԱ։

### Գլխաւորագոյն Անցք։

1. Վերականգնումն անկախութեան Սուեդիոյ ՚ի 1523 ամի։

Սուեդիա, Դանիմարգա և Նորվեգիա ՚ի 1397. ամէ հետէ միացեա՛լ էին կալմարեան դաշնադրութեամբ. ՚ի մտի ունելով Դանիմարգաց հաստատել զիշխանութիւն իւրեանց ՚ի վերայ Սուեդիոյ՝ յաճախ յարուցանէին զբազմադիմ

խռովութիւնս 'ի Սուրիացիս : Յայսու պատճառաւ այս Կալմարեան դաշնադրութիւնն առ սակաւ սակաւ քակտիլ սկսաւ և հուսկ 'ի թագաւորութեան արքային Դանիոյ Քրիստիանէի երկրորդի՝ կործանեցաւ . բռնաւորութի արքային մանաւանդ արիւնհեղութիւնն պատճառեալ 'ի սմանէ 'ի Ստոկհոլմ, բորբոքեցին ըզխռովութիւն ընդհանուր սուէդիացիս : Յայնմ ժամանակի հռչակաւորն Գուստավ–Վազ ծագեալ 'ի նախնի Սուէդիացի արքայից , մտադիր եղև պահանջել զվրէժ մահու ծնողի իւրոյ և զխումբն իւրոց հայրենակցաց մեռելոցն 'ի Ստոկհոլմ, որ հրամանի արքային Քրիստիանէի Բի . սա և յետ բազում վտանգաւորութեանց իւրաւանց՝ ճանապարհորդեաց ընդ ծովս Սուէդիոյ ընդ անտառս և ընդ անապատս . և եկաց 'ի Դալեկարիա . քաջարի բնակիչք այսր նահանգի վառեալք պերճախօսութեամբ և օրրով առ հայրենիս, վճռեցին ընկենուլ զանուր բռնաւորութեան արքային Դանիմարգաց՝ Քրիստիանէի Բի . բռնանդակ Սուէդիա վաղվաղակի որ նոցայն օրինակի առաջնորդութեք քաջի և հանճարեղին Գուստավ–Վազայ հարստահարեցին զԴանիմարգացիս և վերականգնեցին զազատութի իւրեանց և զանկախութի . մեծ իմն համարեցան յայնժամ Սուէդիացիք սահմանել յինքեանս զմիապետական կառավարութիւն . սակայն մեծագոյն ևս՝ նստուցանել յաթոռ սուէդական զԳուստավ–Վազ : 1524 .

## 2 . Պատերազմ յաղագս Լիֆլանտիոյ .

### 1553–1600 .

Ընդ կէս վեշտասաներորդ դարու Լիֆլան_

տիս նպաստակ յաղթութեան եղև Սուէտիոյ, Դանիմարգայ, Լեհաց և Ռուսաց․ ուստի ծագեցաւ յայսոսիկ թագաւորութիւնս մարտ սաստիկ․ որով ամայացաւ Լիֆլանտիա և ստուերանալ սկսաւ փառք ասպետացն Լիվոնացւոց։

### 3 · Մարտ ընդ մէջ Սուէտիոյ և Լեհաց ի ժառանգութիւն աթոռոյն Սուէտիոյ։

1600–1660։

Արքայ Պողոնիոյ Սիգիսմունդոս որդի Յովհաննու արքային Սուէտիացւոց յետ մահուան հօր իւրոյ եղև և արքայ Սուէտիացւոց, ջանադիր լեալ մուծանել անդր զհռովմէական դաւանութիւն․ ըստ այսմ հանգամանաց աթոռն Սուէտական զրկեցաւ յիւրոց արքունի կարգաց։ Սիգիսմունդոս և յաջորդեալքն նորին արքայք Պողոնիոյ ոչ միաբանեցան պահպանել զուղղութիւն յաթոռն Սուէտական․ յորմէ պատճառեցան մարտք սաստիկ ընդ մէջ Սուէտիոյ և Պողոնիոյ յարատևեալ մինչ ց60 ամ։ Յուսկ ապա թագաւորեաց ի նոսա խաղաղութիւն Օլիվեան․ որով Պողոնիա ձեռնթափ եղև ի ձգանց անտի իւրոց՝ ի վերայ Սուէտիոյ։

### Անցք այսր ժամանակի։

#### 1 · Սուէտիա։

1524–90 · Գուստաւ-Վազ եհան զՍուէտիա ի բարձ-

րագոյն աստիճան հարստութեան և փառաց. երկրագործութիւն, տուրևառութիւն և ընդհանուր ազգային խնամարկութիւն հասին 'ի բարգաւաճ վիճակ իմաստուն կառավարութե՟ արքայից այսորիկ: 'Ի սոյն իսկ ժամանակի ծագեցաւ յայսմիկ թագաւորութեան դաւանութիւն լուտերականաց:

'Ի ժառանգորդաց Գուստաւ-Վազայ ար- 1611–32.
ժանյիշատակքն են քաջարին Գուստաւ-Ադոլֆ, մեծանձն և առաքինին, վախճանեալ զարժանափառ կեանս իւր 'ի դաշտին Լիւկենայ պատերազմեալ առ ազատութիւն Գերմանիոյ և ը՟հանուր Եւրոպիոյ. ախոյեանն Կարոլոս Ժ, 1654–60.
Օգոստոս: Կարոլոս ԺԱ. և որդի նորա ժամա- 1660–97.
նակակից և ոսոխ Միապետին Ռուսաց Պետրո- 1697–708.
սի՝ Կարոլոս ԺԲ:

## 2. Դանիա կամ Դանիմարգա:

Յիշատակի արժանաւոր անցք դիպեալ 'ի 1661.
Դանիմարգա 'ի սոյն միջոցի են սահմանադրութիւն միապետական անպայման կառավարութե՟ յարատևեալ ցթագաւորութի՟ Փրիդերիկայ Է. յորմէ հետէ Դանիմարգա անդորրացեալ գըտանէ զիւրն բարօրութիւն:

## 3. Պոլոնիա:

'Ի 1572. ամի, յետ վերջանալոյ թագաւորեալ տանն Յագելլոնաց, հաստատեցաւ 'ի Պոլոնիա միապետական կառավարութիւն ընտիր և սահմանաւոր. և յայսմհետէ 'ի պատճառս այ-

սորին ոյս Ծ մինչև ցժամանակ անկման իւրոյ՝
հանապազ խռովիւր ՚ի ներքին յարուցմանց և
յանհաշտ պատերազմաց. արժանիքն միշտատկաց
ըստ գերապանծ քաջարութեան արքայք պողո-
նիացւոց յընթացս սոյն շրջանի՝ էին Ստեփան
բատորեն և Յովհաննէս սոբէացի. որոյ երևելի
1683. վաստակ էր ազատութիւն Վիեննայի ՚ի պա-
շարմանց Թուրքաց։

## 4. Պրուսիա։

1657. Պրուսիա ընդ իշխանութեամբ գոլով Լե-
հաց՝ արարաւ զայսու ժամանակաւ ը̅ Վելա-
ւեան դաշնադրութեանն՝ անկախ դքսութիւն
տանն Բրանդենբուրգայ։

## 5. Ռուսիա։

1505–34. Յովհաննու երրորդի Վասիլեան հիմնադրի
փառաց և մեծութեան Ռուսիոյ՝ յաջորդեաց
որդի նորա Վասիլ. առ Թագաւորութեամբ ո-
րոյ Պսկով ըստ օրինակի Նովգորոդայ հնազան-
դեցաւ իշխանին Մոսկովայ և յայնժամ առա-
ւելագոյն ևս եղև միապետական կառավարու-
1534–84. թիւն ՚ի ռուսաստան։ Յամբառնալոյ անտի Յով-
հաննու չորրորդի խիստ անուանելոյ յաթոռ
Ռուսաց, զհետ եկն նոր իմն հռչակաւոր դար փա-
ռաց. սոյն Թագաւոր խաղաղացուցեալ զհպար-
տութիւն խանից Թաթարաց, կատարելապէս ա-
զատեաց զՌուսիա յիշխանութենէ նոցին. Հը-
1553. նազանդ արար զԹագաւորութիւն Թաթարացն
Ղազանու. և Աստրախանու. յորում ժամանակի

Ռուսիա եմուտ ՚ի կապակցութիւն վաճառա-
կանութեան ընդ Անգղիոյ: ՚Ի վերջին աւուրս
թագաւորութեան Յովհաննու չորրորդի, չքե-
ղացաւ Ռուսիա այնու՝ զի բացաւ Սիբերիա
յԵրմաքայ և միացաւ սոյն ընդարձակատարած
երկիր ընդ իշխանութեանն միապետաց Ռու-
սաց: Ծանուցանեմք և ս զի ՚ի ժամանակաց անտի
Յովհաննու Դ͞ի. իշխանք ռուսաց՝ կոչեցան Ար-
քայք:

Յովհաննու Դ͞ի, յաջորդեաց որդի նորա Փէ- 1584—98.
ոդոր Իւանովիչ. թագաւոր թէ և թոյլ ՚ի գործ
ինքնակալ կառավարութեան, սակայն բարեհո-
գի և ամենայն քրիստոնէական առաքինութե͞
զարդարեալ. յետ մահուան սորա և յետ սպան-
ման եղբօր սորա Դմիտրի՝ ՚ի մերձաւոր արե-
նակցէն սորա Բորիսէ Փէոդորեան Գոդունո-
վեանց, կարճեալ թագաւորեալ տանն Ռիւրի-
կայ, նստաւ յաթոռ թագաւորութեան Ռու-
սաց Բորիս Փէոդորովիչ Գոդունով, որոյ ար- 1598—605.
ժանի եղեալ աթոռոյն այսու ուղղագործութե͞,
գուն գործեաց առնել զարժանաւոր այնմ զի-
նուորական օգնականութեամբ և հոգածութե͞
առ բարին թագաւորութեան:

Իսկ իբրև արքայն Գոդունով համարէր
զինքն հաստատեալ յաթոռ Ռուսաց, առա-
քեաց ա͞ծ վրէժխնդիր նմին յաղագս անպարտ
հեղման արեան Դմիտրի Ցարևիչայ, զոր տօնէ
եկեղեցի Ռուսաց ՚ի դասակարգս սրբոց. ա-
բեղայ ոմն Գրիգոր անուն որդի Մետրիփանոսի
զոհեաց զանձն առ մահուն Ցարևիչայ. Լեհք և
բազումք խաբեալ զքաղաքս Ռուսաց՝ ընկա-
լան զկողմն սուտանուանս այսորիկ. Գոդունով
՚ի հարուած խղճմտանաց տանջեալ՝ մեռանի: 1650.
Սուտանունն Դմիտր ամբարձաւ յաթոռ

Ռուսաց. սակայն վաղվաղակի յայտնի եղև ար-
տութիւնն. մեռանի և սա. յաթոռ Ռուսացվե-
րակոչի Վասիլ Իւանովիչ Շույսքի. դժբաղդ-
եղև թագաւորութիւն սորա 'ի պատճառս յառա-
1606—619. նելոյ յայնժամ ինքնակալաց բազմաց. յորոց յա-
րուցեալ ներքին պատերազմունք աւերեցին
զՌուսիա. յայս պատերազմ խառնեցան Լեհք
և Սուէտացիք: Մոսկով իշխանաւորի 'ի Լե-
հաց. հայրենիք Ռուսաց կործանէին. սակայն այսու-
ամենայնիւ տեսչութիւն փրկեաց զայն: Լուեալ
պաղատանաց Դիոնեսիոսի վանահօրն Տրոյցկէն
Սերգիեւոյ մենաստանին և փակակալի նորին
վանաց Աբրահամու պօլեցին, մեծահոգի բնա-
կիչն Նովգորոդայ Կոզմայ—Մինինչն (սուխօրու-
կի), հաւանեցոյց զիւր քաղաքացիս պատարա-
գել զինչս և զկեանս վասն հայրենեաց. ժողով
եղև զօրաց, որոց սպարապետութիւն յանձնե-
ղև անուանի իշխանին Դիմետրի անուանեալ
1613—45. Պօժարսկի. Լեհք հարուածեալք արտաքսեցան
'ի Ռուսիոյ. յաթոռ Ռուսաց միաշունչ ամ-
բարձաւ լուսաւորեալ տունն Րոմանեանց.
թագաւորաց Միքայէլ Ֆէոդորեան: և
յետ ամ պէտս կազդուրեալ խորհրդով առաքինի
և իմաստուն ծնողի իւրոյ պատրիարգին Ֆի-
լարետայ (1) խաղաղացոյց զՌուսաստան, նու-
աճեալ զմիջասահմանս թշնամիս. և անկեաց ըղ-
խաղաղութիւն ընդ Լեհս և ընդ Սուէտացիս:
1653—76. Որդի և ժառանգ նորա Աղէքսանդր Միքայե-
լեան մեծացոյց զիշխանութիւն իւր միաւորե-
լով ընդ Ռուսիոյ զայժմեան փոքր Ռուսաստան

1 Յանուն Միքայէլէ Ֆէոդորեան անուանին առաջինու-
թեամբ և ծառայելով հայրենեաց, Ֆէոդոր Նիկիտիչ ըստ
հրաման Բորիս Գոդունովայ լեալ վանական անուանեցաւ Ֆիլարետ:

և զլինել. 'ի վերայ այսր ամենայնի յիշատակն անմոռանալի է և սրբազան իմն 'ի մէջ Ռուսաց որպէս հանճարեղ Թագաւորի օրինատուի իմաստնոյ և ծնողի Պետրոսի առաջնոյ ։

## Ամփոփութիւն զայսմ շրջանէ ։

Յընթացս շրջանիս այսորիկ գրեթէ՛ ընդհանուր արևմտեան Եւրոպիա կատարածին վայրագնեցան զօրս ուրեք այլ 'ի նորանշանս: Հզօրագոյն յարուցմանց հանճարեղ ԺԸ դարու եւ տանդա, հաստատութիւն էառ՝ այնինչ անկաւ զօրութիւն Պրուսիոյ և Սպանիոյ. վերականգնեցաւ քաղաքական հաւասարակշռութիւն Եւրոպիոյ, և այնինչ հաստատեցան իշխանութիւնք հոլլանդացւոց և անգղիացւոց 'ի վերայ ծովուց Փեօտալեան կառավարութեան յարեւմտեան Եւրոպիա և մանաւանդ դրութիւնք 'ի Ռուսիա՝ բնաջինջ եղծան. և իշխանութիւն միապետական հաստատեալ ընդ ամ թագաւորաւ. ամ ուրեք վերանորոգեալ անդորրութիւն, շինարք և խաղաղութիւն: Ռուսաստանցիք մանաւանդ հոլլանդացիք և անգղիացիք ընդարձակեցին շինուածոց ծովագնացութիւն և զվաճառականութիւն ընդհանուր մասամբ աշխարհի. Գոյն զերաշում գաւառս որք անցեալ էին մինչ ցայն ժամանակ. հանեն զգաղթականս բերեալ 'ի Ամերիկա, յարեւմտեան և յարեւելեան Հնդիկս և յայլ գաւառս. ամ ուրեք հաստատեալ կարգծեալ օրինադրութիւն. յառաջացաւ լուսաւորութիւն և ընդհանուր ուսումն գիտութեանց առ հասարակ հանդերձանաց:

# ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ.

## ՚Ի Լուդովիկոսէ ԺԴ, ցյեղաշրջումն գաղղիական խռովութեանց ։

՚ի 1661 ամէ, ց1789 ամ տեառն ։

Գլխաւոր և սեպհական յատկութիւն այսր շրջանի՝ է համակամութիւն Եւրոպացւոց տարածել զվաճառականութիւն, շինել զգաղթականս և հաստատուցանել զնոսա. յայսմ ժամանակի՝ ըստ ամենայն տէրութեանս Եւրոպացւոց կորովամիտ զարգանայր խոհականութիւն մտաց մարդկան. և առ անբաղդութեան՝ չարագործութիւնք նոցա ։

## ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԻԱ.

Գլխաւորագոյն անցք ։

I. Թագաւորութի Լուդովիկեայ չորեքտասաներորդի ՚ի Գաղղիա ։

1651=1715 ։

Յօրէ նստելոյ Լուդովիկեայ չորեքտասաներորդի յաթոռ Գաղղիոյ՝ ծաղկեցաւ գերապանծ դար հարստութեան և փառաց նորա. երևելի հրամանատար արքայի Կոլբերտ եհան ըզմիապետութի Գաղղիոյ ՚ի բարգաւաճ վիճակ. կենդանացոյց զերկրագործութիւն և զվաճառականութի. կազմեաց զնաւատորմս, գործա

տունս և զարհեստակերտուածս. իսկ գիտութիւնք և արհեստք պաշտպանեալք ՚ի Լուդովիկեայ՝ ծաղկեցան ՚ի Գաղղիա։ Այս ամենայն ապագայք պայծառացեալք զօրական փառօք՝ հռչակեցին զանուն Լուդովիկեայ ԺԴ. ը̄ ամ̄ Եւրոպիա և յայլ մասունս աշխարհի։

Սակայն էանց փութանակի այս դար երջանկութեան և բարօրութեան Գաղղիոյ. քանզի Լուդովիկոս ԺԴ. իւրով չափազանց զեղխութեամբ և պատերազմասիրութբ̄ թուլացուցել եղծ զայն տէրութի̄. պատերազմն յարուցեալ ՚ի նմանէ ընդդէմ Հօլլանդիոյ և միաւորել զՍտրասբուրգ ը̄ Գաղղիոյ, զինեցին ընդդէմ Լուդովիկեայ գրեթէ զընդհանուր Եւրոպիա. յորոց պատճառեցան մեծամեծ դժբաղդութի̄ք Գաղղիոյ։ Արժանայիշատակքն միանգամայն և դժբաղդ յաղագս Գաղղիոյ՝ եղեն պատերազ- 1700.
մունք վասն ժառանգութեան գահին Սպանիացւոց։ Սորա մտադրեալ իշխել բոլոր Սպանիոյ, ջանայր կացուցանել յաթոռ նր̄՝ զթոռն իւր զՓիլիպպոս. ընդ որոյ ապա Հօլլանդացիք, Անգղիացիք, Աւստրիացիք և այլ բազում տէրութիւնք հակառակ կագէին նմա. որով բացամարտ ընդ ամենայն հարաւային Եւրոպիա. զօրագլուխ անգղիացւոց Մալբորուգ և աւստրիացւոց Պրինց-Եւգեն հարուածեալ ամենայն ուրեք զզօրս գաղղիացւոց, հասուցին ըզայն տէրութիւն ՚ի վիճակ թշուառ. հուսկ ուրեմն դաշն խաղաղութեան եդին յՈւտրեքտ 1713.
(՚ի Հօլլանդիա)։ Տունն Բուրբոնեանց ամբարձաւ յաթոռ սպանիացւոց։ Լուդովիկոս հարկի՛ թողուլ թշնամեաց իւրոց զերկիրս բազումս։ Անգղիացիք ստանան զվսեմ իշխանութիւն ՚ի հիւսիսային Ամերիկա։

1715. Վախճանի Լուդովիկոս յեօթանասուն և երեք ամի կենաց իւրոց թողեալ տէրութեան իւրում զբազում պարտս մեծագոյնս. ամենա_յն դժբաղդ կացութիւն Գաղղիոյ ի վախճանին ջնջէ 'ի ժողովրդենէ զառաջին վսեմական եր_ջանիկ աւուրս թագաւորութեան նորա: Նմա Գաղղիա բազմօք պարտաւորի դէտ միապետիս այսմիկ փառաւորութեամբ իւրով, որով 'ի բա_զում դէպս շահի տակաւին յԵւրոպիա:

2. Եօթնամեայ Պատերազմ. Եւ առ ժառան_գութիւն աւստրիական Աթոռոյ՝ մարտ:

1740—1763.

1740—80. Յետ մահուան կայսեր Կարոլոսի Զ.ի դուստր նորա Մարիա — Թերեզիա ըստ զօրութեան օ_րինադրութեան նորին, նստաւ յաթոռ կայսե_րութեան. յորոյ 'ի ժամանակի և յաթոռ Պրու_սաց նստաւ դքսաւոր Թշնամի կայսրուհւոյն Փրիդերիկոս Բ. (Մեծ) որոյ 'ի սկսանելն հարս_տահարել զԱւստրիա առ 'ի թողուլ Պրուսիոյ զՍիլեզիա, կայսրուհին Մարիա Թերեզիա ներ_
1740. հակեցաւ նմին. և այսու հանգամանօք յարեաց զմարտ պատերազմի ընդ մէջ Աւստրիոյ, Պրու_սիոյ և այլոց բազմազգի տէրութեանց: 'Ի վեր_ջոյ Աւստրիա ըստ դաշնադրութեան խաղաղու_թեանն արարելոյ 'ի Պրեսլավիա(1742) և 'ի Դր_եզդեն(1744), համաձայն եղև տալ Փրիդե_րիկոյ Բ.ի, զՍիլեզիա. բայց այսու ամենայնիւ արհաւիրք պատերազմին դեռ տևէր յաւստրի_ացիս և 'ի գաղղիացիս մինչ ցամ տեառն 1748. յայսմիկ բոլ ամի՝ կարճեցաւ Աքենեան խաղաղ.

ղութիւնն․ Իշխանութիւն Ֆրիդերիկոյ Բ․, 'ի վերայ Սեքզոնիոյ բոլորովիմբ հաստատեցաւ։

Նոյն անցք յանարդութիւն գրեցաւ Աւստրիոյ․ և ըստ այսմ մարթ էր նախագուշակել, թէ անդորրութիւնն Աւստրիա՝ եղիցի անկայուն․ այսպէս 'ի 1756․ ամի՝ բացաւ Աւստրիա մարտ կռուեցեալ եօթնամեան, որոյ առաջին ամբիւրք էին վէճք 'ի մէջ գաղղիացւոց և անգղիացւոց յաղագս գաղթականացն չուելոյ 'ի հիւսիսային Ամերիկա։ Գաղղիա հակառակ եկաց Պրուսիոյ որպէս նիզակակցի Անգղիոյ․ որում օրինակի արագ ընթացան այլ բազում ազգութիւնք․ ցանկալով Աւստրիոյ յետս դարձուցանել զիւրն կորուսեալ աշխարհ Սիլեզիա, յարոյց զդաշնակիցս իւր ընդդէմ Ֆրիդերիկոյ Բ․ զՌուսիա, գրեթէ զողջոյն գերմանիա, զՍուեդիա․ զԴանիմարգա․ զՍակսոնիա և զՊոլոնիա, և գրեթէ զընդհանուր Եւրոպիա։ Այլ Ֆրիդերիկոս Բ․ ախոյեան հանդիսացաւ իւրոց թշնամեաց և ստացաւ զանմահ փառս իւրով շքեղապանծ յաղթութեամբք 'ի Ռոսբախ(1757․) և 'ի Լէյտէն(1757․) հզօ՛ր իմն․ հարուածեալ նորա 'ի զօրաց ռուսաց 'ի Գրոսեգերնդորֆ(1757․) 'ի Կունեներսդորֆ(1757․) ոչ վհատեցաւ յոգին իւր, այլ հանդիսացաւ իւրով բաղդիւ․ քանզի՝ 'ի բարեբաղդութիւն իւր ամբարձաւ 'ի գահ Ռուսաց Պետրոս երրորդ Ֆեոդորովիչ բարեկամ նորա և մտերիմ, որով և վաղվաղակի եղեւ զինուորական ներգործութիւն 'ի մէջ երկուց տէրութեանցս այսոցիկ։ Իսկ այլ տէրութիւնք բռնադատեալք յայսպիսի անցից և խնդրեալք յանօգտաբեր մարտից՝ վերջուեցին նոյնպէս հաշտ ընդ Պրուսաց լինել․ հաշտութիւնն եղև 'ի Փարիզ յամի(1762․)և 'ի

Հուբերտոսբուրգ (1763.)։ Աւստրիա համաձայն եղև հաստատել զիշխանութիւն Պրուսիոյ 'ի վերայ Սիլեզիոյ։

## Պատերազմ Հիւսիսային Ամերիկացւոց։

1714—1783։

Ընդ մէջ ժԸ. դարու Անգղիա հասեալ 'ի
վերայ ծովային իշխանութեան, հարստահարէ'ւ
սկսաւ զվաճառականութիւն ընդհանուր եւ-
րոպէական տէրութեանց և հիւսիսային ամերի-
կացւոց գաղթականաց իւրոց. յայսպիսի հան-
գամանաց զարթեաւ 'ի գաղթականս ոգի ազա-
տութեան և անկախութեան, յորմէ ծագեցան
մարտք 'ի մէջ անգղիացւոց և իւրոց հիւսիսա-
յին գաղթականաց. կոչեցեալ յանուն հիւսի-
սային ամերիկացւոց։ Յաւուրս պատերազմին,
որ ճարակեցաւ ընդ ծով և ը̅ ցամաք` գաղ-
թականքն ցուցին զբազում փորձ հանճարոյ,
քաջարութեանց և սիրոյ առ հայրենիս։ Գաղղի-
ա, Սպանիա և Հոլլանդեան հասարակապետու-
թիւն ձանձրացեալք ընդ անպայման իշխանու̅թ
Անգղիոյ որ 'ի վերայ ծովու` կալան զերկիր նո-
ցա։ Անգղիա իւրով բոլոր զօրութեամբ ոչ կա-
րացաւ յաղթել թշնամեաց իւրոց և հարկի-
1783. հարկեցաւ խօսել զխաղաղութիւն ընդ նոսա 'ի
Վերսալի. եթող զազատութի և զանկախու-
թիւն իւրոց գաղթականաց հիւսիսային ամերի-
կացւոց, որ արդէն իսկ յայտնի' են անուամբ
Միացեալ Նահանգք հիւսիսային ամերիկաց-
ւոց։ Նա վերականգնումն և 'ի հաստատութի
ազատութեան և անկախութե̅ գաղթականաց

այսոցիկ՝ անխոնջ գործակցէին Վաշինգտօն այր վսեմական, հռչակաւոր քաջութեամբ և հանճարով. և Ֆրանգլին խոհեմ և առաքինի. բարեկամ ճշմարտութեան և մարդկութե̄ քննիչ բնութեան և կշռադատ քաղաքավարութեան. Սոկրատէս իւրում դարու։

## Ընդ այսր ժամանակի.

### 1. Գաղղիա։

Լուդովիկեայ ժդի. յաջորդեաց թոռն նր 1711—74.
Լուդովիկոս հնգետասաներորդ, որ տարապայման զեղխութեամբ իւրով և անկոպար ձեռնբացութե̄ մանաւանդ ապականութե̄ բարուց էած զԳաղղիա ՚ի խառնակութի̄ և յաւերումն 1774—93.
մինչև անկարանալ յուղղութիւն ածել զներքին պարագայս նորա բարեպաշտին Լուդովիկեայ ժզի. յոյժ ջանս իւր առ բարօրութիւն իւրոց հպատակաց։

### 2. Իտալիա.

՚Ի սմին ժամանակի Իտալիա ընդ մեծի մասին էր ընդ իշխանութեամբ այլազգի ինքնակալաց. բայց ՚ի վերայ այսր ամի իբրև ՚ի ծոց խաղաղութեան նորափթիթ ծաղկէին աստանօր գիտութիւնք, բիւրազգի արհեստք և վաճառականութիւնք։ Վենետիկ զգուշանալ զգուշացաւ անձին. գահն Հռովմայ զրկեցաւ ՚ի սմին ժամանակի յառաջին իւրոց ներգործութեանց ՚ի գործ Եւրոպիոյ.

### 3. Սպանիա։

Ըստ Աւտրեքտեան՝ խաղաղութեան դահակալեաց Սպանիոյ Փիլիպպոս 'Թոռն Լուդովիկեայ ԺԴ-ի, 'ի տանէ Բուրբոնեանց է. սակայն անզօրացեալ սոյն տէրութի, յայսմ ժամանակի վրդովէր յանընդհատ պատերազմաց։ Ամերիգացիք խցին 'ի նմա զճշմարիտ աղբիւր ազգային և արքունի հարստութեանց, զերկրագործութի, զարհեստակերտուածս և զվաճառականութի։

### 4. Փորթուգալիա։

Փորթուգալիա, որ էր նոյնպէս անկարգ և վայր 'ի վերոյ շփոթեալ, յաւուրս կառավարութեան Պոմբալեայ եմուտ 'ի կարգ բարեկարգ. սակայն պտուղ աշխատանաց հռչականուն առնըս չքանայ 'ի սպառ յետ իւրոյ մահուան։

### 5. Անգղիա։

1714–27. Յայսու ժամանակաւ յաթոռն անգղիացւոց
ամբարձաւ 'ի տանէ Գաննովերեան՝ Գէորգ
առաջին. յորոյ Թագաւորութեան Անգղիա 'ի
ժամանակս նախարարութեան Ուալպոլեայ էր 'ի
բարձր աստիճան հարստութեան և փառաց. սա-
կայն հարստութիւն և փառք տէրութեանս ա-
1727–40. ռաւել գերազանց գտաւ յաւուրս Գէորգայ
երկրորդի՝ կառավարութեամբ հռչակաւորն
1760–820. Պիտտայի։ 'Ի վերջոյ յաւուրս Գէորգայ եր-
րորդի՝ եղև հզօր Թագաւորութիւն յԵւրո-
պիա. իշխեաց գրեթէ ընդհանուր ծովու և հր-

նաւանդ արար ինքեան զընդարձակատարած գա-
ւառս՝ յարեւելեան Հնդս եւ յայլ ևս կողմանս
աշխարհի։

## 6. Դաշնակից Նիդերլանդք։

### Հոլլանդեան հասարակապետութիւն։

՚Ի ժամանակի ասպատակութե՛ զօրաց Լու-
դովիկեայ չորեքտասաներորդի ՚ի Հոլլանդիա
ընդ ամենայն գաւառս Նիդերլանդացւոց՝ էր
կառավարիչ (շտատհալտեր) Ուիլելմ Գ. յետ մա- 1672.
հուան որոյ՝ բարձաւ այս արժանաւորութիւն։
Իսկ ՚ի 1748. ամի վերականգնեցաւ կրկին. ընդ
որում ծագեցան հետզհետէ խռովութիւնք
եւ փոփոխութիւնք. այլ այսու ամենայնիւ
զայսու ժամանաւ էր նա ՚ի բարձրագոյն աստի-
ճան հարստութեան, եւ վաճառականութիւն
իւր սփռեալ ընդ ամենայն մասունս Եւր. որոյ
գաղթականք բղխեն նմա զյորդաբուղխ աղ-
բիւրս հարստութեանց։

## 7. Զվիցարիա։

՚Ի միջոցի ալեկոծութեան յուզելոյ ՚ի Նոր-
աղանդաւորաց ՚ի Զվիցարիա, հասարակապե-
տութի Ժենովայ հիմնաւորեալն ՚ի Կալվինոյ՝
զուարճանայր յանդորրութեան ՚ի փառս երկա-
սիրութեան, ՚ի կրթութիւն եւ ՚ի սրբութիւն
վարուց իւրոց բնակչաց։

## 8. Աւստրիա և Գերմանիա։

Ըստ Ուտրեքտեան դաշնադրութեանն 1713. Աւստրիա ստացաւ զնշանաւոր նահանգս 'ի Սպանիա, զթագաւորութի՛ Նէապօլիտանացւոց և դքսութիւն Մեդիօլանոյ. իսկ ըստ Բելգրա-դեան դաշնադրութեան 1738. հարկեցաւ տալ տաճկաց զմասն իւրոյ իշխանութեան յաջակող-մանն Խուռնայ գետոյ. և ըստ Պուբերտաբուր-գեան դաշնադրութեանն՝ եթող և Պրուսիոյ զՍիլեզիա։ Աւստրիա ոչ հայելով յայսոսիկ
1740—80. կորուստս, 'ի թագաւորութեան Մարիա Թե-րեզեայ էր հզօր և փառաւորագոյն. որոյ որդի
1780—90. և ժառանգ Յովսէփ երկրորդ, պատճառեաց զբազմադիմի փոփոխութիւնս ընդ ամ աւստրի-ական իշխանութիւ 'ի հոգևորական 'ի զինուո-րական և 'ի քաղաքական հանգամանս, որում ոչ միայն անօգուտ էին այսպիսի փոփոխմունք, այլև ջերաջերմ հակամիտութն թագաւորիս այ-սորիկ առ նախակրթութիւն ամենեցուն և դի-տաւորութի նորա կի՛ց առնել զԱւստրիա իւ-րում իշխանութե՝ եղեն 'ի վնասակարութիւն ինքեան իսկ Աւստրիոյ։ 'Ի Գերմանիա, որ եղ-եալ էր միշտ թատրոն պատերազմաց, 'ի սմին ժամանակի յետ վախճանի եօթնամեայ պատե-րազմին, ծագեցան պտուղք խաղաղութեան, լուսաւորութիւնք և ազգային տուրևառութի։

## 9. Տաճկաստան։

Յահեղ պատերազմաց՝ ընդ աւստրիացիս և ընդ Ռուսս՝ բեկաւ ույժ տէրութեան տաճկաց։ Պետրոս առաջին և մեծապանծ զօրագլուխ

Ռուսաց Սինոդք այնպէս հզօր էին, դադրեցին զկարողութիւն նոցա, մինչև յայնմհետէ տաճկային երաւանց կախիլ յարքունուստ Սանկտպետերբուրգոյ։

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ.

### Գլխաւորագոյն անցք։

### I. Պատերազմ (մեծ) Հիւսիսային։

### 1700—1721։

՚Ի սմին ժամանակի ծագեցան մեծամեծ փոփոխութիւնք ՚ի Հիւսիսային Եւրոպիա, որովք վճռեցան դատք տէրութեանց Հիւսիսային Եւրոպացւոց. մեծ միապետն Ռուսաց Պետրոս Ա. յարդարիչ իւրոյ տէրութեան, գոլով գործէր վերադարձուցանել Ռուսիոյ զվաղեմի ժառանգութիւն իւր՝ զերկիրն շուրջ զփունիկեան ծովու եղեալ յայսմ ժամանակի յիշխանութիւն Սուէդիոյ. հաստատել զիշխանութիւն իւր ՚ի վերայ Պալտիական ծովու և կապակցել զտէրութիւն իւր այլ բարեկիրթ ազգաց Եւրոպիոյ. որում հաւանեալ Պողոնիա և Դանիմարգա՝ բացին զպատերազմ ընդդէմ Սուէդիոյ. ոչ հայեցեալ մեծին Պետրոսի ՚ի հարուած զօրաց իւրոց ՚ի Նարվա, հանապազորդեաց զպա- 1700.
տերազմ իւր և յԻնգերմանլանդիա՝ որում յառաջագոյն տիրեալն էր. կառոյց զՍ. Պետր- 1703.
բուրգ. յաղթութիւնք միապետին ՚ի վերայ զօրագլխին Սուէդիացւոց Լիվենգայուպտայ և ՚ի վերայ արքայի նոցա Կարոլոսի ԺԲ, ՚ի Պոլտաւա, 1709.

Նախագուշակեցին զքաղաքական հակամիտութիւն Ռուսիոյ 'ի հիւսիս և միանգամայն զկարողութիւն՝ Եւրոպիա։

'Ի վերայ այսորիկ ամի՝ յարոյց Տաճկաստան զմարտ պատերազմի ընդդէմ Ռուսիոյ. առ որ թէև արքայն Սուէտիոյ կենդանացոյց զյոյս իւր, սակայն սատարել խաբեցաւ. քանզի՝ յայնմ իսկ ժամանակի՝ այն ինչ շրջապատեալ Պետրոս Ա. 'ի բազմութիւն զօրաց տաճկաց 'ի Պրուտ, Եկա-
1711. տարինէ Ա, փրկեաց զամուսին իւր զդիւցազն և զռուսաստան և հաւանեցոյց զտաճկաստան 'ի դաշնադրութիւն. ըստ որոյ և Պետրոս Ա. համաձայն եղև վերադարձուցանել զԱզով. զերծեալ որ 'ի պատերազմէն ընդ տաճկաց՝ սկիզբն արար պատերազմին 'ի հիւսիս։ Սուէտիա տեսեալ թէ չէ՛ր հնար հակառակել հզօր զօրութեան մի-
1721. ապետիս, զխաղաղութիւն խօսեցաւ ընդ նմա 'ի Նիշտադ ('ի Փինլանտիա), որովք ստացաւ Ռուսիա զԼիֆլանդիա, Եստլանդիա. Ինգերմանլանդիա. զմասն Ֆինլանդիոյ հանդերձ Վիբորգ քաղաքաւ և կղզիս Էզել, Դագ և զայլս։

## Ժամանակակից Աննայ ցԵկատարինէ Բ.

### 1. Սուէտիա.

Ըստ Նիշտադեան դաշնադրութեան Սուէտիա տորանկաւ 'ի բարձրագոյն առաջնի իւրոց կարողութեանց. և 'ի վերայ այսր ամի ըստ Ա-
1743. բովեան դաշնադրութե բռնազբօս՝ եթող Ռուսիոյ և զմասն ինչ Փինլանդիոյ մինչև ցգետն Կիւմէն։

## 2․ Դանիա։

Դանիա որ ընդ էր կառավարութեամբ բարեպաշտ միապետաց և այլոց կառավարչաց, զայսու ժամանակաւ եղև երջանկագոյն թագաւորութիւն։ ՚Ի կառավարչաց նորա յայսմ միջոցի արժանին յիշատակաց է կոմսն Բերնստորֆ կառավարիչ Դանիմարգայ յաւուրս Փրիդերիկայ Հինգերորդի (ընդ մէջ ութնևտասներորդ դարուն) մեծաւ փառօք և հանճարով։

## 3․ Պոլոնիա։

Յընթացս շրջանիս Պոլոնիա թէև դղրդէր ՚ի ներքին խռովութեանց, այլ անբաժան կայր ՚ի սահմանաւոր և յընտիր կառավարութեանց իւրոց․ բայց և այնպէս ապականութիւն բարուց և հալածումն վասն հաւատոյ ՚ի սպառ շփոթեց զայն տէրութիւն և գրաւեաց զզօրութիւն նորա․ ըստ որոյ և Պոլոնիա զրկեալ յառաջին իւրոյ քաղաքական գոյութեանց՝ անկաւ ՚ի ձեռս Ռուսիոյ, Աւստրիոյ և Պրուսիոյ․ 1772—93․]

## 4․ Պրուսիա։

՚Ի սկզբան ութնևտասներորդ դարու մեծդքսութիւն Պրուսիոյ՝ փոխեցաւ ՚ի թագաւորութիւն։ Հուսկ ապա ծաղկեցաւ արքայն Փրիդերիկոս երկրորդ (մեծ)․ որոյ հաստիչ լեալ մեծութեան, կարողութեան և փառաց իւրոյ տէրութեան, զինուորական քաջագործութեամբ իւրով հռչակեց զՊրուսիա ընդ ամենայն Եւրոպիա․ այլև կարգեաց 1701․

նմա զօրէնս և բարգաւաճեաց զերկրագործու-
թիւն անդանօր և զգիտութի, զազգազգ ար-
հեստս և զգործարանս արհեստակերտութեանց:

5. Ռուսիա:

1689—725. Ի տիրապետութենէ անտի Պետրոսի առաջ-
նոյ գահին ռուսաց՝ սկիզբն էառ դար բարոյա-
կանութեան և քաղաքական կրթութե և փա-
ռաց այսորիկ տէրութե. զի սա վարժեաց զտէ-
րութիւն իւր յամ դէպս. ծաղկեցոյց զնաւա-
խումբս և զօրականս ըստ օրինակի զօրաց օտա-
րազգեաց. կատարելագործեաց զօրինադրութիս
և զիրաւագիտութիւնս. իշխեաց Բալտիական
և Սեաւ ծովուցն ՚ի սփիւռ տարածեաց ըզ-
սահման և զվաճառականութի Ռուսիոյ: Սա և
ձեռնտուութբ իւրոց մտերմաց Լեֆորտայ,
Գորդոնայ, Մէնշիկովայ, Շերեմետովայ և այ-
լոց՝ եհան զհայրենիս իւր յաստիճան փառաց և
քաղաքական արժանաւորութե. ստացաւ զտիտ-
ղոս կայսերական ըստ ամ իրաւադատութեան
իւրով խոնարհութեամբ, քաջագործութբ զօ-
րաց և անպարտելի հոգողութբ առ բարին իւ-
րոյ տէրութեան.
1725—27. Պետրոսի առաջնոյ յաջորդէ ամուսին իւր
Եկատարինէ առաջին՝ դուստր Ալէքսիովնի. ո-
1727—30. րոյ թագաւորութիւն թէև տևեաց փոքր ժա-
մանակ, սակայն բարեկարգեցաւ նորանոր կանո-
նօք. Թագաւորութիւն Պետրոսի երկրորդի Ա-
լէքսևիչի թոռին Պետրոսի Ա. տևեաց նոյնպէս
սակաւ ժամանակս, յետ մահուան նորա՝ նստի
յաթոռ դուստր եղբօր Պետրոսի առաջնոյ՝ դքս-
ուհին Կուրլանդեայ՝ Աննա Իւանովնայ, յո-

րում ժամանակի զօրք Ռուսաց կառավարու_ 1730—40.
թեամբ Մինիքայ առնեն զմեծ յաղթութիւն
՚ի վերայ տաճկաց. յետ մահուան նորա անընդ_
միջապէս յաջորդէ զաթոռն դուստրն Պետրո_
սի Ա̄, Եղիսաբէթ. որոյ ՚ի թագաւորութեան 1740—62.
աշխարհանայր գիտութիւն և իմաստութիւն.
զայսու ժամանակաւ Ռուսիա եմուտ ՚ի քա_
ղաքական կապակցութիւն ընդ Աւստրիոյ և ը̄
այլ տէրութիւնս Եւրոպացւոց. ձեռնարկումն
Եղիսաբեթի Պետրոսեան ՚ի հաղորդակցութի̄
եօթնամեան պատերազմի՝ գերազանց արար ըզ_
փառս զինուն Ռուսաց. ժառանգ Եղիսաբեթի
քեռորդի իւր Պետրոս երրորդ Փէոդորովիչ
թագաւորէ ոչ երկար. զկնի որոյ մահուան՝ նստի
՚ի գահ Ռուսաց ամուսին նորա Եկատարինէ
երկրորդ Ալէքսիեւնայ.

## Թագաւորութիւն Եկատարինեայ Բ̄ի.

՚Ի բազմելոյ անտի յաթոռ Եկատարինեայ 1762—1796.
երկրորդի, բացաւ ընդարձակագոյն ասպարէզ
ներգործութեան զինուն Ռուսաց և արքունի
քաղաքականութե̄. յայսմ ժամանակէ զինուո_
րական փառք և քաղաքական զօրութի̄ Ռու_
սաց անշարժ կայացաւ: Տաճկաստան նախքան
զամենայն զփորձ էառ զօրութեան տէրութե̄ս. 1768.
հռչակաւոր զօրագլուխք Եկատարինեայ երկ_
րորդի՝ կոմն Արլով և կոմն Ռումեանցով
քաջաձեռն դղրդեցին զտաճկային կարողու_
թիւն. սակայն արհաւիրք խռովութեանց ՚ի
ներքուստ շնչեալ ՚ի Պոլոնիա սպառնացեալք
յայլազգի տէրութեանց ՚ի վտանգ՝ մեծ, շփոթու_

ցին զկայծ դիտաւորութեան կայսրուհւոյն 'ի
գործ այսր տէրութեան. յայնժամ բաժանե-
1771. ցաւ Պողոնիա: Ռուսիա առաւ զերկիրն, որ
է մէջ Դնեպրի և արևմտեան Դվինայի. յայս-
1774. պիսի հանգամանաց տաճիկք հնազանդեցան
կայսրուհւոյն Ռուսաց ըստ դաշնադրութեանն
'ի Կայնարճըք. թողին Ռուսիոյ զԿինբուրն,
զԱզով և զմասն Թերակղզւոյն Տաւրիկոյ և զա-
զատութիւն նաւագնացութեան Ռուսաց ընդ
ամենայն ծովս տաճկական:

Յաւուրս այսպիսի խաղաղութեան տէրու-
թեան իւրոյ, ձեռն էարկ Եկատարինէ 'ի կար-
գաւորութիւն ներքին հանգամանաց թագա-
ւորութեանն իմաստուն կարգադրութեամբ
դատաստանական իրողութեանց, և 'ի տարա-
ծումն լուսաւորութեան. ստացաւ զանուն մեծ
և եղև մայր հայրենեաց Ռուսաց:

Ազգի ազգի հանգամանք մանաւանդ տիրա-
պետութիւն Տաւրիկեան Թերակղզւոյն 'ի զօ-
րականացն Ռուսաց՝ գրգռեցին զտաճկաստան
1787. 'ի մարտ պատերազմի. յորում ժամանակի քաջ
զօրագլուխք ռուսաց կոմսն Պոտոմկին, Սու-
վորով և Ռումեանցով ածին ընդ ամենայն տէ-
րութիւնս տաճկաց զարհաւիր մեծ. անկան ընդ-
դէմ զինու Ռուսաց բերդք և քաղաքք տաճ-
կաց Օչաքով, Խոթին, Իսմայիլ և այլք: Սար-
սեալն տաճկաստան եղև դաշնադիր Ռուսաց
1792. յԻասսաք. ըստ որոյ և ետ նմա զերկիրս տարա-
ծեալս ընդ մէջ Դնեպր և Դնեստր գետոց:

Իշխանութիւն Եկատարինեայ երկրորդի մե-
1793. ծացաւ արդէն յերկրորդում բաժանման Պո-
ղոնիոյ՝ ընդ մէջ Ռուսիոյ և Պրուսաց: Հուսկ
ապա նորանոր խռովութիւնք անցեալք 'ի Պո-
ղոնիա և կոտորած զօրաց Ռուսաց անկարծե-

լի իմն եղանակաւ գրգռեցին զԵկատերինէ բը-
նաջինջ առնել զՊողոնիա 'ի սահմանաց եւրո-
պացի տէրութեանց. յետ առման Իբրայիլ 'ի զօ- 1794.
րավարէն ռուսաց Սուվորովէ, բաժանեցաւ Պօ-
ղոնիա երկրորդ անգամ 'ի մէջ Ռուսիոյ, Ա-
ւստրիոյ եւ Պրուսաց. որոյ պատճառաւ Կուր- 1795.
լանդիա միաւորեցաւ ընդ Ռուսիոյ։

Անօրինակ կայսրուհին Եկատերինէ մե-
ծացուցեալ զընդհանուր Ռուսաստան, վախ-
ճանեցաւ զկեանս իւր 'ի 6. Նոյեմբերի 1796. ամի։

## Յաջորդութիւն Պաւել Առաջինի։

Պաւել առաջին հալածօղն վասն հաւատոց եւ ընդհան-
րապէս փիլիսոփայից ատելութիւն ցուցանէր 'ի նորաձեւ-
ութեան՝ նուաճեցաւ գլխովին եւ ոչ ումեք եղեւ. ծառայե-
տական հաւատարմութեան հաւանեցաւ եւ բոլոր ծայրագոյն
իշխանութեանց ... 'ի ... եւ հաստա-
տութեան. յարձակումն եւրոպացւոց 'ի բազում երկիր եւ 'ի
ունութիւն կայսերականաց՝ ... ժամանակի. զինուո-
րական հնարութեան, զօրութեան եւ ոչ այլ գիտութեց
եւ գերապանծ արհեստից ամբարձման յառաջման կատարելա-
գործութեանց. բայց այսր յետին ... տա-
րաւ՝ արտաքոյ ... դար ...ական. բայց եւ
այնպէս ընդ այսպիսի ... 'ի
այն ժամանակի եւ մեծամեծ ...։

# ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ.

'Ի սկզբանէ գաղղիական խռովութեանց՝ ցմեր ժամանակս։

1789—1817.

## Ընդհանուր Տեսութիւն Անցից այսր ժամանակի։

Այս շրջան ողջոյն յանդիման կացուցանէ մեզ զմեծամեծ ներքին յարուցմունս հանդիպելոյ յարևմտեան Եւրոպիա. յորս սաստկագոյն՝ գաղղիացւոցն յարուցմունք։

Այսպիսի յարուցմունք լցեալ զԳաղղիա արեամբ և դղրդեալ զողջոյն Եւրոպիա, ապականեցին զկիրթ և մոլորեցին զմիտս մարդկութեան. հերքումն ածային և քաղաքական օրինաց պատճառեաց ընդ ամենայն Գաղղիա ըզ վատարանջութիւն, զապստամբութի և զարիւնհեղութիւն. յորոց յառաջացան մեծամեծ դժ-
1793. բաղդութիւնք. զի զարհուրելի իմն յիշատակէ պատմութիւնն զողբալի մահ արքային գաղղիացւոց Լուդովիկեայ վեշտասաներորդի՛ի գահաւանդակին և կործանումն միապետական կառավարութեան։ Գաղղիա փոխեցաւ 'ի հասարակապետութիւն. յորմէ ծագեցան աւուրք սպանութեանց և անասելի ոճրագործութեանց։

Ռոպեսպեր և չարակամ համախոհք նորա եղեն բռնաւորք ամենեցուն։ Գաղղիա ողջոյն ծածկեալ էր արեամբ և դիականմբք զոհից խռովութեանց. ցրուեցան քաղաքական կարգք և կանոնք. ամենայն ուրեք թագաւորէր աղմուկ և կուսակցականն անիշխանութի։ Աւստրիա, և Պր-

բուռխա ջանադիր էին կասեցուցանել զներգոր-ծութիւն խռովութեանցս, սակայն չկարացին յամենայն զօրութիւնս իւրեանց յառաջ վարել զջանադրութիւն:

Յընթացս այսպիսի խռովութեանց ծագե-ցաւ 'ի Գաղղիա Բոնափարտ այր վեհամանձն և քաջամիտ, որ ընկալեալ զիշխանապետութիւն գաղղիացի զօրուն, պանծացաւ բազում քա-ջագործ յաղթութեամբ 'ի վերայ Իտալիոյ. 1797.
զարհուրեալն Աւստրիա արար զխաղաղութիւն ընդ նմա 'ի Կամբո-Ֆորմ և եթող Գաղղիոյ զամենայն իշխանութիւն իւր յԻտալիա. յորոց և յայլոց տիրապետեալ նահանգաց հաստատեաց Բոնափարտ զհասարակապետութիւն Կիսալպի-նեան և Լիգուրեան:

'Ի ժամանակէ աստի Գաղղիա վտանգաւոր իմն թուէր ընդհանուր Եւրոպիոյ. ըստ որոյ և յայնմ ժամանակի այնինչ Բոնափարտ չու արար յԵգիպտոս 'ի յաղթութիւն կողմանցն այնոցիկ, Ռուսիա և Աւստրիա և այլ տէրութիւնք զի-նեցան հակառակ Գաղղիոյ. զօրագլուխն Ռուս-սաց անուանին Սուվորով դիմեաց յԻտալիա և յաղթեաց գաղղիացւոց 'ի Կասսան, 'ի Տրեբիա, և 'ի Նովի. յարձակեալ ընդ Ալպիական լե-րինս, ստացաւ զպաշտօն մեծագոյն զօրագլխա-պետութեան. սակայն յոյս Եւրոպիոյ որ կայա-նայրն դեռ 'ի մրցմունս դիւցազնէիս այսորիկ 'ի դերև ել. կայսրն Պօղոս առաջին, տեսեալ զթոյլ նիզակակցութիւն և զդանդաղկոտ ներ-գործութիւն իւրոց դաշնակցաց, արդարացի տրտնջանօք զնոցանէ յետս կոչեաց զզօրս իւր յԻտալիոյ. եկն 'ի Ս. Պետրբուրգ զօրագլուխն Սուվորով ստացեալ զտխուր կամքն Իտա-լիոյ, ուր և վախճանեցաւ զարժանափառ կեանս

իւր. վերադառնայ յեգիպտոսէ ժեներալ Բոնա-
1800. փարտն և կոչեցեալ առաջին բդեշխ հասարա-
կապետութեանն Գաղղիոյ՝ արար զյաղթու-
թիւն ՚ի վերայ զօրաց Աւստրիոյ այնքան մեծ,
մինչև զարհուրեալ արքունի տանն Վիեննայի
1801. փոյթ ընդ փոյթ կապեաց ընդ նմա զդաշն խաղա-
ղութեան ՚ի Լիւնեվիլ և հարկեցաւ թողուլ
Գաղղիոյ զամենայն իշխանութիւն ՚ի ձախակող-
ման Ռհենայ։ Անգղիա ըստ նմին օրինակի կա-
1802. լաւ զդաշն խաղաղութե ընդ Գաղղիոյ յԱմիէն
քաղաք։

Յետ այսորիկ գրեթէ եղիտ զեւր խաղա-
ղութիւն ողջոյն Եւրոպիա. սակայն փառասի-
րութիւն և անկանոն գնացք բդեշխին Բոնա-
1804. փարտի եւս և անուանել զինքն կայսր Գաղղիոյ
յաւուրս յայսոսիկ անուանեալ Նաբոլէոն,
դրդուեցին զՌուսիա, զԱւստրիա և զայլ տէ-
1805. րութիւնս բառնալ զզէն ընդդէմ Գաղղիոյ. ՚ի
վաղձան պատերազմին, որ Աւստերլիցի (՚ի Մորա-
վիա) Աւստրիա ՚ի հաշտութիւն խօսեցաւ ընդ
Նաբոլէոնի ՚ի Պրեսբուրգ, և ՚ի պատերազ-
մանց յօգուտ Գաղղիոյ և նիզակակցաց նորա՝
զբաղում իշխանութիւն իւր։

Ռուսիա հակառակ Գաղղիոյ դաշնակից ե-
ղև Պրուսաց. որով և կրկին բացաւ կռիւն և
յետ պատերազմին յԻէնէ և յԱուէրշտետ, ողջոյն
1806. Պրուսիա հնազանդեցաւ իշխանութեան Նաբո-
լէոնի:
1807. Ռուսք առաջին զերևելի յաղթութի ՚ի վը-
դաղղիացւոց առ Էյլաւեաւ (՚ի պրուսիա) իսկ
յետ պատերազմին ՚ի Փրիդլանդիա (՚ի պրուսիա)
Ռուսք և Պրուսիա արարին զխաղաղութիւն
՚ի Թիլզիտ։ Ռուսիա ստացաւ զնահանգս Բե-
լօստկեան. իսկ Պրուսք զրկեցան ՚ի բազում իշ-

խանութեանց իւրեանց. յորոց Նապոլէոն առար
դքսութիւն Պոլոնիոյ (Վարշաւայ) և զայլն
մասունս ը Հիմնաւորեալն Միջնէ Սա-
քսոնեան թագաւորութեան:
Ի սոյն անցիցս անցելոց՝ գրեթէ առ Հասարակ
Հարաւային Եւրոպիա եմուտ ընդ իշխանութբ
Նապոլէոնի. սպանիացիք դիմեցին պաշտպա- 1808.
նել ազատութեան իւրեանց և անկախութե.
պատերազմն բացաւ աՀեղ սաստկութբ ի մէջ 1809.
Սպանիոյ և Գաղղիոյ: Ռուսիա օգնեալ ի
Հանդամանացս, զէն եբարձ ընդդէմ նուաճե-
լոցն ի գաղղիացւոց: Այլ դուքսն Ալարոլըս
քաջագործ իւր յաղթութբ մարտեաւ ընդ գաղ-
ղիացիս. սակայն ի Հարուածոց անտի զօրացն
աւստրիացւոց ի Վագրամ, կայսրն Փրանց Բ.
երկուցեալ, ի Հաշտութի խոնեցաւ ը գաղղի-
ացիս ի Վիեննա. ըստ որոյ բաց յայլոց անձնե-
ցուն՝ Երէց դքսուհին Լուիզա տուաւ յամուս-
նութիւն Նապոլէոնի.
Յայսմ Հետէ Հրամանատար գաղղիացւոց ան-
յաղթ զինքն վարկուցեալ, սկսաւ անձնիշխան
խաղալ ընդ ամ Հարաւային Եւրոպիա. առ որ
մոյս բողոքեցուց ի մի միայն Ռուսիա մնայր ա-
պաստան. ը այսմ կարծիք Նապոլէոնի էր բե-
կանել զկարողութիւն միապետին Ռուսաց, և
իշխանանալ ի վերայ ընդՀանուր Եւրոպիոյ:
Յայս միտ Հաստատեալ և բազում դաշնակից տէ-
րութբ խուռն յարձակմամբ խաղաց ի Ռու-
սիա 580,000, զօրօք և անթիւ զինուորական 1812.
գործեօք: Գլխաւոր կառավարիչ զօրացն ռու-
սաց Բարկլայդետօլլի օգտաւորագոյն վարկա-
ւ մխել կասել ի ներքս երկրութե, ձգել ի նոյն
զգաղղիացիս վասն մօտալուտ կորստեան նոցա:
Նապոլէոն արագընթաց էանց ընդ ամ ընդար-

ձակութիւնս Ռուսիոյ 'ի Մնգրելեայ՝ մինչեւ ցԴնեպր գետ եւ հանդիպեալ զօրացն Ռուսաց 'ի Սմոլենսք, սկիզբն եղեւ անդանօր պատերազմին. այս քաղաք եղեւ հրձիգ եւ աւերակ. բանակըն ռուսաց մնաց անդէն 'ի Մոսկով. եւ յայսըմ միջոցի գլխաւորութի բանակին տուաւ 'ի կառավարութի մեծ իշխանի Գոլենիշչեվին Կուտուզովայ. որ եմուտ 'ի պատերազմ ընդ Նապոլէոնի. կռիւն տեւէր զօրն ողջոյն եւ վաղճան առնոյր այնու՝ զի Թշնամին ոչ ինչ լինէր շահել. Ի վերայ այսր ամի գլխաւոր հիւպատոսն օգուտ վարկաւ զմուտ Թշնամւոյն 'ի Մոսկով մայրաքաղաք ռուսաց Թագաւորաց. յորում նա եգիտ զիւր կորուստ. քանզի՝ հրձգութի Մոսկովայ բորբոքեաց զխռովութիւն 'ի բովանդակ Ռուսս, եւ ընդ ամ իշխանութիւն յարեաւ շփոթ եւ աղմուկ պատերազմին. Թիւ զօրացն Ռուսաց խիզախելոց 'ի մարտ եւ 'ի մահ վասն հայրենեաց՝ օրըստօրէ առաւելանայր եւ քաջաձեռն յաղթութիւն նոցա 'ի վերայ գաղղիացւոց հաւաստեաց Նապոլէոնի եւ գունդագունդ գաղղիացի զօրուն զաւաղելի կորուստ 'ի Ռուսիա:

Ի վերջոյ ամի Նապոլէոն գնայ 'ի Մոսկովայ այնու մտօք, զի յարձակեսցի 'ի հարաւային կողմանս Ռուսիոյ. սակայն կրէ զհզօր հարուած 'ի Մալո-եարոսլաւ. յորում ժամանակի զօրագլխապետն Ս Վիտգենշտէյն պաշտպանեալ Ս, Պետերբուրգոյ, ամ ուրեք հարուածէր զխումբս գաղղիացւոց. պատերազմն 'ի Կրասնոյ՝ էր նոր իմն հանդէս զինուն Ռուսաց. գաղղիացիք ահեղ վտանգաւ դարձեալ 'ի փախուստ՝ անցին ընդ գետն Բերեզին կրելով զանակնունելի կոտորածս. ճանապարհն 'ի Մոսկովայ մինչեւ 'ի Վիլնեայ լուանայր արեամբ Թշնամւոյն

և լեռնանայր բոլորովին սպանելովք վիրաւորելովք և դերկալմբք, նոյնպէս և թնդանօթովք, կարաւանօք և երիվարօք նոցա. 'ի 580,000 զօրաց Նապոլէոնի քանի մի հազարք հաշմանդամ կթուցեալք հազիւ մազապուրծ անկանին 'ի Նեմեն:

Ապա միապետն Ռուսաց դարձեալ զեղանակ բարեբաղդութե. ջնջեաց 'ի սպառ զօրս թշնամեաց 'ի տէրութենէ իւրմէ, 'ի մտի եդեալ ազատել և զայլ տէրութիւնս յիշխանութենէն Նապոլէոնի. կատարել զայս գործ՝ յանձն եդև Աղէքսանդրի առաջնոյ, որոյ իսկ հրամանաւ զօրք ռուսաց անցեալ ը Նեմեն՝ արագ կոխեցին զափունս գետոցն Օդերայ, և Էլպայի: Պրուսիա և Գերմանիա խրախուսեալք առ հասարակ առնաբար հաղորդել հաղորդեցին զզէնս իւրեանց 'ի զէն Ռուսաց. սոյն զհետ փութացաւ և Աւստրիա: Գերմանիա յայսմ հետէ լինէր թատրոն զօրաց. պատերազմունքն 'ի Դըրեզդէն, 'ի Կուլմայ, և 'ի Կացբադ չէին այնքան հզօրագոյն, որքան 'ի Լայպցիգ, ուրանօր պատերազմեցան զաւուրս երիս մինչ ցհինգ հարիւր հազար զօրք այլևայլ տէրութեանց. յորոց Նապոլէոն կրեալ զսաստիկ կոտորած 'ի զօրս՝ 'ի փախուստ եղև ապաստան: 1818.

Զօրք դաշնաւորեալ տէրութեանց շտապ տագնապաւ անցեալք ընդ Հռէյն՝ մտին 'ի Գաղղիա և պատերազմեալք մերձ 'ի Պրիեն, 'ի Լարոտէր, 'ի Լէօն, 'ի Փէրշամպէնուազ և հուսկ մերձ 'ի Փարէզ՝ առին զայն և արարին անդէն զխաղաղութիւն. և ըստ այսմ վերականգնեցին 'ի Գաղղիա գահ արքայական և բազմեցուցին 'ի նա զեղբայր ԺԶ, Լուդովիկեայ Լուդովիկոս ԺԸ: Նապոլէոն աքսորեցաւ 'ի կղ-

զին Լեհա. և յետ մահ՝ Պաւղոսի վերադարձոյց զամ երկիրս տիրապետեալս 'ի 1792. ամի:

1818. Ա. բարեպարգոյն վերանորոգութիւն կարգաց և անդորրութեան ընդհանուր Եւրոպիա, եւ ժողովթագաւորաց 'ի Վիեննա. սակայն 'ի ժամանակս միաբանութեանն Նապոլէոն փախուցեալ յԷլբա կղզւոյ՝ գնաց 'ի Գաղղիա. յայսպիսի հանգամանաց ողջոյն Եւրոպիա շարժեցաւ 'ի շարժումն մեծ և վառեցաւ 'ի նոր պատերազմ. 'ի սկզբան անդ մարտին, Նապոլէոն քաջագործեաց զինչ ինչ յաղթութիւնս. բայց հզօր իմն հարուածեալ 'ի զօրաց Անգղիացւոց և Պրուսաց կառավարութեամբ Վելլինգտոնայ և Բլիւխերայ 'ի Վատերլով, հարկաւ կալանաւորեցաւ և ըստ կամաց դաշնակից միապետաց՝ առաքեցաւ յաքսորս 'ի կղզի սրբոյն Հեղինեայ. հաստատեցաւ 'ի Փարէզ նորոգ դաշնադրութի. և առ հանդարտութիւն և անդորրութիւն բոլոր Եւրոպիոյ՝ առան յիշխանութենէն Գաղղիոյ բերդք ինչ և քաղաքք: Յուսկ ապա՝ ժողովն 'ի Վիեննա վերահաստատեաց զընդհանուր եւրոպէական տէրութիւնս և իշխանութիւնս ըստ այսմ հանգամանաց յառաջին սահման իւրեանց:

Վասն հաստատութեան և բարօրութեան իսկ բոլոր Եւրոպիոյ, երեքին դաշնակից միապետք՝ կայսրն ամենայն Ռուսաց, կայսրն Աւստրիոյ և արքայն Պրուսաց եդին 'ի մէջ և հաստատուն դաշն խաղաղութեան, ուրանօր ցուցին զհամաձայնութիւն մնալոյ 'ի սէր և 'ի միաբանութիւն, ցուցանել միմեանց բարեկամաբար զփոխադարձ օգնութիւն և աշխատիլ առ բարին իւրեանց հպատակաց:

Այսպիսի կարգադրութի արձանագրեալ 'ի դաշնադրութեան անդ, հաստատեցաւ և ևս 'ի

ժողովն Վիեննու, որում եղև անդորրութիւն և բարօրութիւն առ հասարակ եւրոպէական թագաւորութեանց։

Այսու օրինակաւ Եւրոպիա յետ երեսնամեայ պատերազմաց, արիւնահեղութեանց և տառապանութեանց յարուցելոց 'ի հասարակապետութէ գաղղիացւոց, անդորրացաւ 'ի յարկ խաղաղութեան։

Ա. Մ. Է. Ն.։

# ՑԱՆԿ

## ԳԼԽՈՑ Ի ՇԱՐԱԴՐԱՆՍ

## ՀՆԱԳՈՅՆ ԱԶԳԱՑ


Բաժանումն 1. Ազգ ասիացւոց և ափրիկեցւոց ժամանակաւ Կիւրոսի : 9.

Ա. Ազգ ասիացւոց : .

1. Ասորեստանեայք 10.
2. Բաբելոնեայք 11.
3. Հայք 12.
4. Մարք 14
5. Տէրութիւնք 'ի փոքր Ասիա
6. Փիւնիկեցիք 15.
7. Եբրայեցիք 16.
8. Թագաւորութիւն Հայոց 18.

Բ. Ազգ Ափրիկեցւոց

1. Եգիպտացիք 20.
2. Կարթագենեցիք 22.

Բաժանումն 2. Թագաւորութիւն Պարսից 23.
Թագաւորութիւն Հայոց 25.

Բաժանումն 3. Յունաստան 28.

Բաժանումն 4. Միապետութիւն Մակեդոնացւոց 32.
Միապետութիւն Հայոց 36.

Բաժանումն 5. Պատմութիւն Հռովմայեցւոց 38.

Շրջան 1. յ753—509. ն.ք. . .

Շրջան 2. 'ի 509—30. ն.ք. 40.

Շրջան 3. յ 30. ն.ք. ց476. ամ փրկչին 45.

Հայաստան 51.


## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒՑ

Շրջան 1. 'ի 476. մինչ ց771. փրկչին

1. Գաղղիա 54.
2. Իտալիա 55.
3. Սպանիա 56.
4. Գերմանիա 57.
5. Արեւ. Հռովմ. տէրութիւն Յունաց ։ ։
6 Թագաւորութիւն Արաբացւոց 58.
7. Թագաւորութիւն Հայոց 59.
8. Թամանակագրութիւն Ասիէ 60.
Շրջան 2. ց771. —1095. ամ թուական 62.
1. Գաղղիա . .
2. Իտալիա 63.
3. Սպանիա . .
4. Անգղիա 64.
5. Գերմանիա . .
6. Տէրութիւն արեւ. Հռովմայեցւոց 65.
7. Մոսկով . .
8. Հայաստան 66.
9. Հիւսիսային թագաւորութիւնք ։ 69.
14. Թագաւորութիւն Երուսաղեմայ 72.
Շրջան 3. Ի 1095. ամէ՝ ցամ թուական 1492. 45.
1. Գաղղիա 77.
2. Իտալիա 78.
3. Սպանիա 79.
4. Փորթուգալիա 80.
5. Անգղիա . .
6. Գերմանիա 81.
7. Արեւելեան տէրութիւն Հռովմայեցւոց 82.
8. Հայաստան 83.
9. Հիւսիսային թագաւորութիւնք 84.
Թագաւորութիւն Օսմանեանց 88.


## ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ


Շրջան 1. Ի 1492. ամէ թուական ց1661.
Հարաւային Ամերիկէ ։

Կառավարութեան անցք։
1. Պատերազմունք ներքինք։ 92.
2. Պատերազմունք ընդ Սպանիոյ և Գաղղիոյ։ 93.
3. Նաւարկութիւնք 94.
4. պատե. Սպանիոյ ընդ Նեդերլանդս։ 95.
5. Նորընծայեալ մարդ։ 96.
6. Ազգք այսր ժամանակի։ 99.
Հեռաւորային Եւրոպիա
Կառավարութեան անցք
1. Սերունդ ... Սպանիոյ 104
2. Պատերազմ ... 105
3. Սուրբ ընդ ... Սպանիոյ և Հեհաց 106.
4. Ազգք այսր ժամանակի
Շրջան 2. Ի 1661. ամ. ց1789. ամ տեւան
Հասարակային Եւրոպիա
Կառավարութեան Ազգք
1. Կառավարութիւն ... ժողովրդեան 112.
2. Նոյնպէս պատերազմ և առ ժառանգութիւն
Աւստրիական ... մարդ 114.
3. Հեռաւորային Ազգերկայութեան պատերազմ։ 116.
Ազգք այսր՝ ժամանակի 117.
Հեռաւորային Եւրոպիա 121.
Կառավարութեան Ազգք
1. Հեռաւորային (ԹԶ) պատերազմ
Ժամանակաչափից անցք
2. Կառավարութիւն Նախապատմեալ ԷԷ. 125.
Շրջան 3. Ի 1789. ամ. ց ամ տեւան 1818։ 128.
Ընդհանուր տեսութիւն Ազգաց այսր ժամանակի։

| Երեսք | Վրիպակք | Ուղղեալք ։ |
|---|---|---|
| 23. | հաւայէն | հարաւայէն. |
| 32. | Գուրանիէա | Գուրանիչէա. |
| 36. | յերուսաղէմ | յերուսաղէմ. |
| 31. | Լուպաքինոնք | Լուպաքինոնտ. |
| 34. | մամնաւուրթեան | մարմնաւորութեան. |
| | չաւապաշտէն | չապաշտէն. |
| 75. | քրիստոնէայք | քրիստոնէայք. |
| | երուսաստաղէմ | երուսաղէմ. |
| 84. | Տարոնոյ | Տարոնի. |
| 110. | Թագաւորայ | Թագաւորեայ. |
| 102. | 2660. | 1660. |
| 119. | փոփոխութիւենք | փոփոխութիւնք. |
| 123. | որ ընդ էր | որ էր ընդ. |

ՀԱՄՌ ԳԱ ԳՐԱԴ... ՀԻՄՆԱԴԱՐԱՆ

10р

30

10